

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**  
**YEREVAN STATE UNIVERSITY**

**«Կրթությունը 21-րդ դարում»**  
**գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես**

**Թիվ 1(11), 2024**  
**Երևան**

**«Образование в 21-ом веке»**  
**международный научно-методический рецензируемый журнал**

**Номер 1(11), 2024**  
**Ереван**

**«Education in the 21<sup>st</sup> Century»**  
**International Scientific-Methodical Peer-Reviewed Journal**

**No 1(11), 2024**  
**Yerevan**

**ԵՊՀ հրատ. • Издательство ЕГУ • YSU Press**

*«ԿԸԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ԸԴ ԴԱՐՈՒՄ» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդեսն ընդգրկված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:*

*Международный научно-методический рецензируемый журнал «ОБРАЗОВАНИЕ В 21-ОМ ВЕКЕ» включен в перечень периодических научных изданий, рекомендованных Комитетом высшего образования и науки Министерства образования, науки, культуры и спорта РА.*

*The international scientific-methodical peer-reviewed journal "EDUCATION IN THE 21ST CENTURY" is included in the list of scientific periodicals recommended by the Committee of Higher Education and Science of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia.*

---

*Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդեսը տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ:*

*Международный научно-методический рецензируемый журнал издается по рекомендации Ученого совета Ереванского государственного университета.*

*The international scientific-methodical peer-reviewed journal is published by the recommendation of Yerevan State University Scientific Council.*

---

**Հանդեսը տպագրվում է ամերիկահայ բարերարներ տեր և տիկին Արմեն և Սալբի Սոսիկյանների մեկենասությամբ:**

**Журнал издается при финансовой поддержке армянских благотворителей Армена и Салби Сосикян.**

**The review is published by the financial support of Armenian benefactors Mr. and Ms. Armen and Salbi Sosikyan.**

**ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ**

**Գլխավոր խմբագիր՝**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Կ.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,  
Երևանի պետական համալսարան,  
Հայաստանի Հանրապետություն

**Խմբագրական խորհրդի անդամներ՝**

**ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ. Վ.**

Երևանի պետական համալսարանի ռեկտոր,  
պատմ. գիտ. դոկտոր,  
Հայաստանի Հանրապետություն

**ԱՍՐԻՅԱՆ Է. Վ.**

Երևանի պետական համալսարանի պրոռեկ-  
տոր, հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ,  
Հայաստանի Հանրապետություն

**ՄԱՐԴՈՅԱՆ Ռ. Ա.**

գլխավոր խմբագրի տեղակալ, մանկ. գիտ. դոկ-  
տոր, պրոֆեսոր, Շիրակի պետական համալսա-  
րան, Հայաստանի Հանրապետություն

**ԱԶԱՐՅԱՆ Ռ. Ն.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Երևանի  
պետական համալսարան,  
Հայաստանի Հանրապետություն

**ԲԵՐՄՈՒՄ Ա. Գ.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Դոնի Ռոստովի  
Հարավային դաշնային համալսարան,  
Ռուսաստանի Դաշնություն

**ԲՈՅԼ Բ.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Ձևավորող  
գնահատման ուսումնասիրությունների  
կենտրոն, Մանչեստրի համալսարան,  
Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն

**ԲՈՒԴՆԻՎ Ե. Բ.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,  
Մերձկարպատյան ազգային համալսարան,  
Ուկրաինա

**ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Կ.**

ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ,  
Երևանի պետական համալսարան,  
Հայաստանի Հանրապետություն

**ԳԵՎՈՐԳՅԱՆ Պ. Հ.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ.,  
Վանաձորի պետական համալսարան,  
Հայաստանի Հանրապետություն

**ԺՈՒՎ Ա. Ի.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Բելառուսի  
Մ. Տանկի անվ. պետական մանկ. համալսարա-  
նի ռեկտոր, Բելառուսի Հանրապետություն

**ԼՈՂԱՏՎՈ Ե. Ա.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., Չերկասի  
Բ. Խմելնիցկու անվ. ազգային համալսարան,  
Ուկրաինա

**ԽԱՉՍՏՏՐՅԱՆ Ռ. Խ.**

բան. գիտ. թեկնածու, դոցենտ, Աբու Դաբիի կրթության և գիտության նախարարություն, Որակի ապահովման և վերահսկողության վարչություն, ԱՄԷ

**ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ի. Կ.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Բրյուսովի անվ. պետական համալսարան, Հայաստանի Հանրապետություն

**ՀՈՊՖՆԵՐ Ի.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Գրացի համալսարան, Ավստրիայի Հանրապետություն

**ՄՄԴԱԼԻՆՄԿԱ-ՄԻՉԱԼԱԿ Ի.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Վարշավայի համալսարան, Լեհաստանի Հանրապետություն

**ՄԵՀՐԱՆԵԱՆ Ե.**

մանկ. գիտ. դոկտոր, Ջորջիա քոլեջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

**ՆՈՎՈՏԻ Պ.**

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, Մասարիկի համալսարան, Չեխիայի Հանրապետություն

**ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ. Հ.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Հայաստանի Հանրապետություն

**ՊԼԱՉԻՆԴԱ Տ. Ս.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Յուրի Կոնդրատյուկի անվան Պոլտավայի պոլիտեխնիկական ազգային համալսարան, Ուկրաինա

**ՊՈՂԻՍՈՎԱ Ա. Ս.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն

**ՎՈՒԲԵԼՍ Թ. Հ.**

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Ուտրեխտի համալսարան, Նիդեռլանդներ

## РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ НАУЧНОГО ЖУРНАЛА

**Главный редактор:**

**АРУТЮНЯН Н. К.**

Доктор пед. наук, профессор,  
Ереванский государственный университет,  
Республика Армения

**Члены редакционного совета:**

**ОГАННИСЯН О. В.**

Ректор Ереванского государственного  
университета, доктор ист. наук, Республика  
Армения

**АСРИАН Э. В.**

Проректор Ереванского государственного  
университета, кандидат психол. наук, доцент,  
Республика Армения

**МАРДОЯН Р. А.**

Заместитель главного редактора, доктор пед.  
наук, профессор,  
Ширакский государственный университет,  
Республика Армения

**АЗАРЯН Р.Н.**

Доктор пед. наук, профессор,  
Ереванский государственный университет,  
Республика Армения

**БЕРМУС А. Г.**

Доктор пед. наук, профессор,  
Южный федеральный университет, Ростов-на-  
Дону, Российская Федерация

**БОЙЛ Б.**

Доктор пед. наук, профессор, Центр  
исследований формирующего оценивания,  
Манчестерский университет, Великобритания

**БУДНИК Е. Б.**

Доктор пед. наук, профессор,  
Прикарпатский национальный университет,  
Украина

**ВУББЕЛЬС Т. Х.**

Доктор пед. наук, профессор,  
Утрехтский университет, Нидерланды

**ГЕВОРГЯН П. Г.**

Доктор пед. наук, профессор,  
Ванадзорский государственный университет,  
Республика Армения

**ГРИГОРЯН А. К.**

Кандидат физ.-мат. наук, доцент,  
Ереванский государственный университет,  
Республика Армения

**ЖУК А. И.**

Доктор пед. наук, профессор, ректор  
Белорусского государственного  
педагогического университета, Республика  
Беларусь

**КАРАПЕТЯН И. К.**

Доктор пед. наук, профессор, Государственный  
университет им. В. Брюсова, Республика  
Армения

**ЛОДАТКО Е. А.**

Доктор пед. наук, профессор,  
Черкасский национальный университет имени  
Богдана Хмельницкого, Украина

**МАДАЛИНСКА-МИЧАЛАК И.**

Доктор пед. наук, профессор,  
Варшавский государственный университет,

**МЕЙРАНЯН Е.**

Республика Польша  
Доктор пед. наук,  
Колледж Джорджия,  
Соединенные Штаты Америки

**НОВОТНЫ П.**

Кандидат пед. наук, доцент,  
Масариков университет, Чешская Республика

**ПЕТРОСЯН Г. А.**

Доктор пед. наук, профессор,  
Государственный университет  
им. В. Брюсова, Республика Армения

**ПЛАЧИНДА Т. С.**

Доктор пед. наук, профессор,  
Национальный университет «Полтавская  
политехника имени Юрия Кондратюка»,  
Украина

**ПОДЫМОВА Л. С.**

Доктор пед. наук, профессор,  
Московский педагогический государственный  
университет, Российская Федерация

**ХАЧАТРЯН Р. Х.**

Кандидат филолог. наук, доцент, Министерство  
Науки и Образования Абу-Даби,  
Департамент контроля качества, ОАЭ

**ХОПФНЕР И.**

Доктор пед. наук, профессор,  
Грацский университет,  
Австрийская Республика

## EDITORIAL BOARD

### Editor-in-chief:

**HARUTYUNYAN N.K.** Doctor of Pedagogical Sciences, Professor,  
Yerevan State University, RA

### Members of Editorial Board:

**HOVHANNISYAN H. V.** Rector of Yerevan State University,  
Doctor of Historical Sciences, RA

**ASRIYAN E. V.** Vice-rector of Yerevan State University,  
PhD in Psychological Sciences,  
Associate Professor, RA

**MARDOYAN R. A.** Deputy editor-in-chief, Doctor of Pedagogical  
Sciences, Professor, Shirak State University, RA

**AZARYAN R. N.** Doctor of Pedagogical Sciences, Professor,  
Yerevan State University, RA

**BERMUS A. G.** Doctor of Pedagogical Sciences,  
Professor, Rostov-on-Don  
Southern Federal University, RF

**BOYLE B.** Doctor of Pedagogical Sciences, Professor,  
Center for Formative Assessment Studies,  
University of Manchester, UK

**BUDNIK O. B.** Doctor of Pedagogical Sciences, Professor,  
Precarpathian National University, Ukraine

**GRIGORYAN A. K.** PhD in Physical and Mathematical Sciences,  
Associate Professor, Yerevan State University, RA

**GEVORGYAN P. H.** Doctor of Pedagogical Sciences, Professor,  
Vanadzor State University, RA

**ZHUK A. I.** Doctor of Pedagogical Sciences, Professor,  
Rector of Belarus State Pedagogical University,  
Republic of Belarus

**LODAKTO E. A.** Doctor of Pedagogical Sciences, Professor, Bohdan  
Khmelnysky National University of Cherkasy,  
Ukraine

**KHACHATRYAN R. KH.** PhD in Philological Sciences, Associate Professor,  
Ministry of Education and Science, Abu Dhabi,  
Department of Quality Control, UAE

**KARAPETYAN I. K.** Doctor of Pedagogical Sciences, Professor,  
Brusov State University, RA

**HOPFNER J.** Doctor of Pedagogical Sciences, Professor,  
University of Graz, Republic of Austria

**MADALINSKA-MICHALAK J.** Doctor of Pedagogical Sciences, Professor,  
University of Warsaw, Republic of Poland

**MEHRANIAN Y.** Doctor of Sciences, Georgia College, USA

**NOVOTNÝ P.**

PhD in Pedagogical Sciences, Associate Professor,  
Masaryk University, Czech Republic

**PETROSYAN H. H.**

Doctor of Pedagogical Sciences, Professor,  
Brusov State University, RA

**PLACHYNDA T. S.**

Doctor of Pedagogical Sciences, Professor,  
National University «Yuri Kondratyuk Poltava  
Polytechnic», Ukraine

**PODYMOVA L. S.**

Doctor of Pedagogical Sciences, Professor,  
Moscow Pedagogical State University, RF

**WUBBELS T. H.**

Doctor of Pedagogical Sciences, Professor,  
Utrecht University, Netherlands



Խմբագրության հասցեն՝  
ՀՀ, 0025, Երևան, ԵՊՀ,  
փ. Աբովյան 52ա:

Адрес редакции:  
Республика Армения, 0025,  
Ереван, ЕГУ  
ул. Абовяна 52а,

Editorial address: Armenia,  
0025, Yerevan, YSU,  
Abovyan str., 52a.

Հեռ.՝ (060) 71-06-16

Тел.: (060) 71-06-16

Tel: (060) 71-06-16

Էլ. կայք՝ [publications.y-su.am](http://publications.y-su.am)  
[publishing.y-su.am](http://publishing.y-su.am)

Эл.адрес:  
[publications.y-su.am](http://publications.y-su.am)  
[publishing.y-su.am](http://publishing.y-su.am)

Webpage:  
[publications.y-su.am](http://publications.y-su.am),  
[publishing.y-su.am](http://publishing.y-su.am)

Էլ. փոստ՝  
[education21@ysu.am](mailto:education21@ysu.am)

Эл.почта:  
[education21@ysu.am](mailto:education21@ysu.am)

E-mail:  
[education21@ysu.am](mailto:education21@ysu.am)

Տպաքանակը՝ 100  
Հանձնված է տպագրու-  
թյան՝ 06.06.2024

Число печати: 100  
Сдано в печать:  
06.06.2024

Printout: 100  
Submitted to the printing:  
06.06.2024

Խմբագրությունը կարող է  
հրապարակել նյութեր՝ հա-  
մաձայն չլինելով հեղինակ-  
ների տեսակետներին:

Редакция может  
публиковать материалы,  
не соглашаясь с мнением  
авторов.

Authors' ideas may not  
necessarily coincide with  
those of the editorial office.

## Հանդեսի պատասխանատու քարտուղար՝

Լուսինե Հայրապետյան  
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ,  
Երևանի պետական համալսարան, Հայաստան

## Մույն համարի գրախոսները՝

Աթայան Ա.	Ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Ալեքսանյան Ա.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, Գրացի համալսարան, Ավստրիա
Աշիկյան Ա.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Ավետիսյան Մ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Բաղդասարյան Վ.	դասախոս, ԵՊՀ, ՄԿՁԿ, ՀՀ
Գյուլբուդաղյան Վ.	բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Խաչատրյան Ռ.	բան. գիտ. թեկնածու, դոցենտ, Աբու Դաբիի կրթության և գիտության նախարարություն, Որակի վերահսկողության բաժին, ԱՄԷ
Կարապետյան Ի.	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԲՊՀ, ՀՀ
Հայրապետյան Լ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Հովհաննիսյան Մ.	բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Ղազարյան Ա.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ
Ղուկասյան Լ.	մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՇՊՀ, ՀՀ
Մխիթարյան Ջ.	դասախոս, ԵՊՀ, ՀՀ
Պլաչինդա Տ.	մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Յուրի Կոնդրատյուկի անվան Պոլտավայի պոլիտեխնիկա- կան ազգային համալսարան, Ուկրաինա,
Սարգսյան Լ.	դասախոս, ԵՊՀ, ՀՀ

Ամսագրում ներառված հոդվածներում արտահայտված մտքերի ու գաղափարների  
հեղինակային իրավունքը պատկանում է հոդվածի հեղինակ(ներ)ին. նա է (նրանք են)  
պատասխանատու հոդվածում առկա մտքերի ձևակերպման, ինչպես նաև  
բովանդակության համար:

**Ответственный секретарь журнала:**

Лусине Айрапетян  
Канд. пед. наук, доцент,  
Ереванский государственный университет, РА

**Рецензенты данного номера:**

Аветисян М.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Айрапетян Л.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Алексян А.	канд. пед. наук, доцент, Университет Граца, Австрия
Атаян А.	канд. физ.мат. наук, доцент, ЕГУ, РА
Ашикян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Багдасарян В.	преподаватель, ЕГУ, РА
Гукасян Л.	канд. пед. наук, доцент, ШГУ, РА
Гюльбудагян В.	канд. филол. наук, доцент, ЕГУ, РА
Казарян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Карапетян И.	доктор пед. наук, проф., ГУ им В. Брюсова, РА
Мхитарян З.	преподаватель, ЕГУ, РА
Оганнисян М.	канд. филол. наук, доцент, ЕГУ, РА
Плачинда Т.	доктор пед. наук, профессор, Национальный университет «Полтавская политехника имени Юрия Кондратюка», Украина
Саргсян Л.	преподаватель, ЕГУ, РА
Хачатрян Р.	кандидат филол. наук, доцент, Министерство образования и науки Абу-Даби (ADEK), Отдел контроля качества образования, ОАЭ

Авторские права на идеи и мысли, выраженные в статьях журнала, принадлежат автору/авторам статьи, которые несут ответственность за формулировку и содержание статьи.

**Executive secretary of the Journal:**

Lusine Hayrapetyan,  
Ph.D., Associate Prof,  
Yerevan State University, RA

**The Reviewers of this volume:**

Aleksanyan A.	Ph.D., Associate Prof, University of Graz, Austria
Ashikyan A.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Atayan A.	Ph.D., Associate Prof., YSU, RA
Avetisyan M.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Baghdasaryan V.	Lecturer, YSU, RA
Ghazaryan A.	Ph.D., Associate Prof., YSU, RA
Ghukasyan L.	Ph.D., Associate Prof., SHSU, RA
Gyulbudaghyan V.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Hayrapetyan L.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Hovhannisyan M.	Ph.D., Associate Prof, YSU, RA
Khachatryan R.	PhD in Philological Sciences, Associate Professor, Ministry of Education and Science, Abu Dhabi (ADEK), Head of Quality Control Department, UAE
Karapetyan I.	Doctor of Sciences, Prof., Brusov SU, RA
Mkhitaryan Z.	Lecturer, YSU, RA
Plachynda T.	Doctor of Pedagogical Sciences, Professor, National University «Yuri Kondratyuk Poltava Polytechnic», Ukraine
Sargsyan L.	Lecturer, YSU, RA

The copyright to the ideas and thoughts expressed in the articles contained in the journal belong to the author(s) of the article, and he/she (they) is (are) responsible for the formulation and content of the article.

<b>ԲԱԺԻՆ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>15</b>
<b>РАЗДЕЛ 1: ТЕОРИЯ ПЕДАГОГИКИ .....</b>	<b>15</b>
<b>SECTION 1: THEORY OF PEDAGOGY .....</b>	<b>15</b>
<b>Աշիկյան Արմենուհի</b>	
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ .....	15
<b>Պողոսյան Նաիրա</b>	
ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ՄԻԶԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՅԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ.....	24
<b>Акопян Тигрануи</b>	
ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ МЕТОДА СРАВНИТЕЛЬНОГО АНАЛИЗА В ПЕДАГОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЯХ .....	35
<b>Четырбок Наталья</b>	
МОДЕЛИ ПРОФЕССИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ ПРЕПОДАВАТЕЛЕЙ КАК ДЕТЕРМИНИРУЮЩИЙ ФАКТОР КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ СТРАНЫ.....	45
<b>ԲԱԺԻՆ 2. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>56</b>
<b>РАЗДЕЛ 2: ОБУЧЕНИЕ И ВОСПИТАНИЕ .....</b>	<b>56</b>
<b>SECTION 2: TEACHING AND UPBRINGING .....</b>	<b>56</b>
<b>Ալեքսանյան Միքայել</b>	
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԱՆՈԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԳԱԶԱՅԻՆ ՄԵՆՍՈՐՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ .....	56
<b>Խաչատրյան Նոննա, Կարապետյան Սվետլանա</b>	
ԿԱՆԱԶ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....	67
<b>Միրզոյան Էլինա</b>	
«ՊՈԼՍԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	75
<b>Babayan Amalia</b>	
EXPLORING THE DYNAMICS OF ESP LEARNING AMONG INTERNATIONAL RELATIONS STUDENTS.....	85
<b>Mayilyan Artur</b>	
INTEGRATING GENERATIVE AI IN STEM EDUCATION: A PATHWAY TO INCLUSIVE AND ENHANCED LEARNING .....	93
<b>Slyusarenko Nina, Soter Mariya</b>	
FOREIGN LANGUAGE TRAINING OF MASTER'S DEGREE STUDENTS OF TECHNICAL SPECIALTIES .....	102

<b>ԲԱԺԻՆ 3. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ</b> .....	<b>110</b>
<b>РАЗДЕЛ 3: МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ</b> .....	<b>110</b>
<b>SECTION 3: TEACHING METHODOICS</b> .....	<b>110</b>
<b>Արզումանյան Արմենուհի</b>	
«ԲԱԶՄԱՆԻՍ» (ՊՐԻԶՄԱ ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	110
<b>Зурабян Анаит</b>	
ПРИМЕНЕНИЕ НАГЛЯДНОГО МЕТОДА НА УРОКАХ РУССКОГО ЯЗЫКА И ЛИТЕРАТУРЫ В ВУЗАХ (НА ПРИМЕРЕ РОМАНА Г. ЯХИНОЙ «ЗУЛЕЙХА ОТКРЫВАЕТ ГЛАЗА») .....	118
<b>ԲԱԺԻՆ 4. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՃՅՈՒՂԵՐ</b> .....	<b>126</b>
<b>РАЗДЕЛ 4: НАУЧНЫЕ ОТРАСЛИ ПЕДАГОГИКИ</b> .....	<b>126</b>
<b>SECTION 4: SCIENTIFIC BRANCHES OF PEDAGOGY</b> .....	<b>126</b>
<b>Ղազարյան Արևիկ</b>	
ՆԵՅՐՈԼԵԶՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԲԱԶՄՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՍՈՂԵԼՈՒՄ.....	126
<b>Մելքոնյան Շողիկ</b>	
ԵՐԵՒԱՅԻ ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ .....	134
<b>Азарян Роберт, Яйлоян Анна</b>	
К ПРОБЛЕМЕ РАЗВИТИЯ СОЦИАЛЬНОЙ АДАПТАЦИИ У ДЕТЕЙ, ИМЕЮЩИХ НАРУШЕНИЯ ЗРЕНИЯ .....	143
<b>ԲԱԺԻՆ 5. ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ</b> .....	<b>150</b>
<b>РАЗДЕЛ 5: ОБРАЗОВАНИЕ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ</b> .....	<b>150</b>
<b>SECTION 5: EDUCATION IN FOREIGN COUNTRIES</b> .....	<b>150</b>
<b>Արություն Назик, Саргсян Лилит</b>	
ПРОБЛЕМА ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ В ВЫСШИХ ШКОЛАХ ФИНЛЯНДИИ .....	150
<b>ԲԱԺԻՆ 6. ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՍՏՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>160</b>
<b>РАЗДЕЛ 6: ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ШКОЛЫ И ПЕДАГОГИЧЕСКОЙ МЫСЛИ</b> .....	<b>160</b>
<b>SECTION 6: HISTORY OF ARMENIAN SCHOOL AND PEDAGOGICAL THOUGHT</b> .....	<b>160</b>
<b>Բերմեզյան Աստղիկ</b>	
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՍՏ ԽԱԶՍՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՊԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ ԿԱՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՆԵՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ՎԵՊԻ.....	160
<b>Ղևոնդյան Մանե</b>	
ԿՐՈՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵԻՈՐԳ Դ-Ի ՕՐՈՔ.....	170

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ  
ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Աշիկյան Արմենուհի

*մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ*

*Երևանի պետական համալսարան, Հայաստան  
armine\_ashikian@yahoo.com*

Ամփոփում

Հայաստանի Հանրապետությունում երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության իրականացումը վերջին տասնամյակում զգալի բարելավումներ է ապրել, սակայն դրանք դեռևս թերի են և պահանջում են ճկուն լուծումներ ու կարգավորում: Երեխայի սոցիալական ու իրավական պաշտպանության ոլորտում կատարվել են կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ, որոնք հանգեցրել են նոր սուբյեկտների ի հայտ գալուն, նրանց գործառույթների վերանայմանը, համագործակցության անհրաժեշտությանն ու այլ հարցերի: Ստեղծվել են սոցիալական միասնական ծառայություն ու դրա տարածքային կենտրոններ, որոնք կիրականացնեն ընտանիքի սոցիալական գնահատում, ինչը հաշվի կառնվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքն ու կրթությունը կազմակերպելիս: Երեխայի սոցիալական պաշտպանության ու հիմնարար իրավունքների իրականացումը պետք է լինի պետության առաջնահերթություններից մեկը: Հետևաբար երկրում խաղաղության առաջնահերթության ու երեխայի կյանքի անվտանգության, սոցիալական բարեկեցության և երեխայի լավագույն շահերի ապահովումը պահանջում են կառավարության հստակ քաղաքականություն և սոցիալական ու իրավական նորմեր:

**Բանալի բառեր՝** *երեխաների սոցիալական պաշտպանություն, օրենսդրական դաշտ, երեխաների խնամքն ու պաշտպանության կենտրոններ, արտակարգ իրավիճակում հայտնված երեխա, զանգվածային տեղահանում, պարտադրված արտագաղթ, սոցիալական բարեկեցություն, կյանքի դժվարին իրավիճակ:*

*Յուրաքանչյուր հասարակություն պետք է երեխաների համար ցանկանա այն, ինչ լավագույն և ամենախելամիտ ծնողն է ցանկանում իր երեխայի համար:  
Ջ. Դյուի*

**Համառոտ ներածական:** Հայաստանի Հանրապետությունում երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության իրացումն էական բարելավումներ է գրանցել վերջին տասնամյակում, սակայն դրանք դեռևս ոչ ամբողջական են և պահանջում են ճկուն լուծումներ ու կարգավորումներ: Կառուցվածքային ու բովանդակային փոփոխություններ են իրականացվել երեխայի սոցիալական և իրավական պաշտպանության ոլորտում, ինչը հանգեցրել է նոր դերակատարների առաջացման, նրանց գործառույթների վերանայման, համագործակցության անհրաժեշտության և այլ հարցերի: Ստեղծվել են սոցիալական միասնական ծառայությունը և դրա տարածքային կենտրոնները, որոնք իրականացնելու են ընտանիքի սոցիալական գնահատումը, ինչը հաշվի է

առնվելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելիս: Երեխայի սոցիալական պաշտպանության և հիմնարար իրավունքների իրացումը պետք է հանդիսանա պետության առաջնահերթ խնդիրներից մեկը: Ուստի երկրի խաղաղության և երեխայի կյանքի անվտանգության գերակայության, սոցիալական բարեկեցության, երեխայի լավագույն շահի առաջնահերթության ապահովումը պահանջում է պետական հստակ քաղաքականություն և սոցիալական ու իրավական կարգավորումներ:

**Հիմնախնդիրը** Հայաստանի Հանրապետությունում հետպատերազմյան շրջանում երեխաների սոցիալական և իրավական պաշտպանության հիմնախնդրի վերհանումն ու ուսումնասիրումն է:

**Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն:** Հիմնախնդրի ուսումնասիրման ու վերլուծության համար հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը, միջազգային իրավական ակտերն ու նորմատիվ իրավական այլ փաստաթղթեր, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի «Փաստահավաք աշխատանքներ» զեկույցը (2023 թ. սեպտեմբեր):

**Նախնական շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը:** Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծության ենթարկել ՀՀ հետպատերազմյան շրջանում երեխաների սոցիալական և իրավական պաշտպանության հիմնախնդիրը՝ հիմք ընդունելով միջազգային ակտերն ու ՀՀ նորմատիվ իրավական փաստաթղթերը:

**Նորույթը:** Հիմնախնդրով պայմանավորված՝ նորովի է դիտարկվել և մեկնաբանվել երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում հետպատերազմյան շրջանում՝ ներկայացնելով առկա խոչընդոտներն ու ռիսկերը, ինչպես նաև կարգավորման ուղիներն ու ձևերը:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Պետությունն առաջնորդվում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, իրավունքների պաշտպանության, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, հայրենասիրության, անձի ձևավորման ու դաստիարակման առաջնահերթության սկզբունքներ՝ ապահովելով երեխայի լավագույն շահը:

Երեխան գտնվում է հասարակության և պետության հոգածության ու պաշտպանության ներքո: Երեխայի իրավունքների պաշտպանության առաջնային պատասխանատուները նրա ծնողներն են, որոնք ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ երեխայի պաշտպանության հարցերում (ՀՀ Սահմանադրություն, 1995 թ. հուլիսի 5) [1, հ.32] Սակայն առանց պետության հովանավորության ընտանիքն ի գործ չէ լիարժեք ապահովել երեխայի սոցիալական ու իրավական պաշտպանությունը: Ներկայումս բոլոր երկրներում այս հարցը արդիական է, և բոլորը ձգտում են ուժեղացնել երեխաների սոցիալական պաշտպանության ազգային համակարգերը, հատկապես երեխային ընտանիքից բաժանումը կանխելու, արդարադատության հասանելիությունն ապահովելու և բռնությունից, չարաշահումից ու շահագործումից պաշտպանելու ոլորտներում: Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքներն ու սոցիալական պաշտպանությունը սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, նորմատիվ իրավական ակտերով:



Պետությունը կազմակերպում է երեխայի իրավունքների իրացման երաշխավորումն ու պաշտպանությունը՝ համագործակցելով երեխայի իրավունքների պաշտպանությանը նպաստող անձանց, իրավաբանական անձանց, հասարակական կազմակերպությունների հետ:

Այսօր սոցիալական պաշտպանության կարիք ունեցող երեխաների թվին են դասվում՝

- ✓ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները,
- ✓ սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքների երեխաները,
- ✓ խնամատար ընտանիքների երեխաները,
- ✓ սահմանափակ կարողություններով երեխաները,
- ✓ զինված հակամարտությունների, բնապահպանական և տեխնածին աղետների ենթարկված երեխաները,
- ✓ փախստականների ու միգրանտների ընտանիքների երեխաները,
- ✓ վարքային շեղում ունեցող և մարզինալ խմբում հայտնված երեխաները, որոնք ունեն ընտանիքի, դպրոցի, սոցիալական աշխատանքի հատուկ ծառայությունների (ստացիոնար հաստատություններ, Երեխաների աջակցության և խնամքի կենտրոններ, մանկատներ, գիշերօթիկ հաստատություններ), մանկավարժական աջակցության, խորհրդատվական և վերականգնողական ծառայությունների մասնագիտացված կենտրոնների աջակցության կարիք:

Երեխաների սոցիալական պաշտպանության և սոցիալական գիտակցության վրա ազդող գործոնների շրջանակն ընդգրկուն է և բազմաշերտ՝ ներառելով ինչպես երկրի սոցիալ-տնտեսական պայմանները, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված իրավիճակները, այնպես էլ երեխաների սոցիալական տարբեր կարգավիճակները, ֆիզիկական ու մտավոր անհավասար հնարավորությունները, օտարածին մշակութային բարքերը, ժամանակակից հասարակության պատրաստվածության աստիճանը, գիտելիքների մակարդակը, կարծրատիպային մոտեցումները և այլն:

Երեխաների սոցիալական պաշտպանության և արդարության հիմնախնդիրը արդիական է բոլոր ժամանակներում: Մինչդեռ արդի ժամանակաշրջանում ողջ աշխարհում, ի մասնավորի մեր երկրում, ականատես ենք լինում երեխայի սոցիալական ու իրավական պաշտպանության խաթարման բազում դեպքերի և իրադարձությունների, որոնք ուղղակիորեն ազդում են երեխայի անձի ձևավորման, զարգացման ու սոցիալականացման գործընթացի վրա:

Հայաստանի Հանրապետությունը Խորհրդային Միությունից ժառանգեց երեխաների խնամքի և պաշտպանության համակարգ, որով երեխաները ստանում էին անվճար կրթություն, պոլիկլինիկական, ստացիոնար և առողջարանային բուժում, նպաստ, կրթաբոջակ և այլն: Անկախացումից հետո համակարգը, օբյեկտիվ պատճառներով պայմանավորված, կրեց որոշակի փոփոխություններ: Նկատի ունենալով այդ փոփոխությունների ծավալները, բնույթն ու ուղղվածությունը՝ ՀՀ-ում երեխաների սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի: Ընդ որում՝ երեխայի սոցիալական ու իրավական պաշտպանության փուլային համակարգի նման կարգավորման համար հիմք են ծառայում միջազգային փորձի այնպիսի օրինակներ, ինչպիսիք են Շվեդիայի [9] և Չեխիայի [10] փորձը, ինչպես նաև հետխորհրդային մի շարք երկրների,

այդ թվում՝ Էստոնիայի [11], Լիտվայի [12] փորձը, որոնք ունեն չչ-ի հետ պատմական նույն ակունքները:

Վերոնշյալ երկրների փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ երեխաների պաշտպանությունն իրականացվում է հիմնականում նույն տրամաբանությամբ, և համակարգն ընդգրկում է հետևյալ մարմինները.

- կառավարությունը, որի խնդիրն է մշակել երեխաների պաշտպանության օրենսդրական նախագծեր ու ազգային ռազմավարություններ:
- սոցիալական հարցերի (կամ՝ զբաղվածության/սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարությունը,
- արդարադատության նախարարությունը,
- կրթության և գիտության նախարարությունը,
- առողջապահության նախարարությունը,
- երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող հատուկ խորհուրդը կամ հանձնաժողովը, որի գործունեության հիմնական նպատակներն են իշխանության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց համագործակցության ապահովումն ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, երեխայի պաշտպանության համակարգի կազմակերպումն ու համակարգումը, երեխաների սոցիալական և իրավական պաշտպանության բնագավառում օրենսդրության կենսագործումը:

1. Առաջին փուլ (1991-1995 թթ.)՝ երկրաշարժի հետևանքներ, տնտեսության շեշտակի անկում, Արցախյան պատերազմ, երբ դեռ վաղ է խոսել երեխայի սոցիալական և իրավական պաշտպանության ամբողջական համակարգի կամ միասնական պետական քաղաքականության մասին: Այս փուլում կատարվում էին առաջին քայլերը միջազգային փաստաթղթերի վավերացման [7], երեխաների հիմնահարցերով զբաղվող կառույցի ստեղծման [8] ուղղությամբ և այլն:

2. Երկրորդ փուլ (1996-2003 թթ.)՝ նորաստեղծ, նորանկախ պետության աստիճանական կայունացում, ենթաօրենսդրական դաշտից դեպի օրենսդրական դաշտի անցում, երբ երեխաների խնամքի ու պաշտպանության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունն ուղղվեց այս բնագավառի օրենսդրական կարգավորմանն ու օրենքով սահմանված իրավունքների արդյունավետ իրացումը երաշխավորող մեխանիզմների ու ինստիտուցիոնալ ենթահամակարգերի ստեղծմանը [6]: ՄԱԿ-ի հռչակագրով ամրագրված է, որ երեխայի սոցիալական պաշտպանության խնդիրը առաջնային է և ունի ռազմավարական նշանակություն: Իսկ «Երեխաների իրավունքների մասին» ՉՉ օրենքում նշվում է՝

- ✓ ռազմական գործողությունների, այլ ընդհարումների, տարերային կամ տեխնաժին աղետների կամ արտակարգ այլ իրավիճակների հետևանքով բնակելի տարածությունից և անձնական գույքից զրկված փախստական, տեղահանված կամ ապաստան հայցող երեխան ունի պաշտպանության իրավունք (հոդված 34),
- ✓ պետությունն ու նրա մարմիններն ու կազմակերպություններն ապահովում են արտակարգ իրավիճակներում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանվածությունը՝ հոգավով նրա առաջնահերթ կարիքները (հոդված 34),
- ✓ երեխայի անհրաժեշտ նվազագույն կենսապայմանների ապահովումն ենթադրում է սննդի, խմելու ջրի, էկոլոգիապես մաքուր կենսամիջավայրի, կացարա-

նի, հագուստի, կոշիկի տրամադրում ու առաջնային բժշկական օգնության հասանելիություն՝ երեխայի հատուկ կարիքների հաշվառմամբ (հոդված 10)[2]:

3. Երրորդ փուլը (2004-2013 թթ.) սկզբնավորվեց անկախացումից հետո առաջին՝ երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ռազմավարական ծրագրի ընդունմամբ, ինչով էլ նախանշվեցին ՀՀ-ում երեխաների նկատմամբ պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, պետական կառավարման համակարգում ներդրվեց երեխայի իրավունքների և սոցիալական պաշտպանության եռաստիճան համակարգը, կատարվեցին երեխաների սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային իրավունքների երաշխավորմանն ուղղված օրենսդրական կարևոր բարեփոխումներ, իրականացվեցին երեխաների սոցիալական պաշտպանության և իրավունքներին առնչվող տարբեր հիմնախնդիրներին վերաբերող մի շարք կարևոր ծրագրեր [5]: Այս փուլում նախանշված ուղղություններով աշխատանքները շարունակվում են մինչ օրս:

4. Եվ, վերջապես, չորրորդ փուլը (2014-2023 թթ.) լի է ինչպես հիմնախնդրի վերաբերյալ ձեռքբերումներով, այնպես էլ բազում խնդիրներով և երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանությանը վերաբերող ակնառու բացթողումներով ու խաթարումներով: Վերջիններս պայմանավորված են ինչպես երկրի սոցիալ-տնտեսական պայմաններով, այնպես էլ վերջին տարիներին մեր երկրում պատերազմական շարունակական իրադրություններով ու գործողություններով, որոնք ուղղակիորեն առնչվել են երեխաների սոցիալական պաշտպանության խնդրի խախտման դեպքերին:

Ճակատագրի բերումով 21-րդ դարը հայ ազգի համար նշանավորվեց ոչ միայն որպես նորանկախ պետության ձևավորման, այլև շարունակական պատերազմների բովով անցած ժամանակաշրջան: Հայաստանի նորագույն պատմության ընթացքում պատերազմների հետևանքով եղել են հայրենադարձության տարերային ալիքներ և՛ առաջին փուլում՝ պայմանավորված 1988-1991 թթ. զանգվածային ներհուսքով, և՛ երկրորդ փուլում՝ պայմանավորված 2003 թ. սիրիահայության, իրաքահայության մեծածավալ ներհուսքով: Սակայն ամենազանգվածայինն ու աննախադեպը 2020-2023 թթ. արցախահայության պարտադրված արտագաղթն էր, որի ժամանակ զանգվածային ներգաղթի պայմաններում ամենախոցելի խավը կանայք ու երեխաներն էին: Խաթարվել էին հազարավոր երեխաների սոցիալական պաշտպանության՝ կյանքի, կրթության, առողջության, բնակության վայրի, ազատ տեղաշարժման իրավունքները: Դա է փաստում նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի «Փաստահավաք աշխատանքներ» զեկույցը (2023 թ. սեպտեմբեր), որում առավել հանգամանորեն ներկայացվում են պատերազմի և հետպատերազմյան շրջանում երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության ոտնահարման փաստերը, նրանց նկատմամբ թշնամու կողմից իրականացված բռնությունների, ռճրագործությունների դեպքերը [3] (ըստ նշված զեկույցի տվյալների՝ ոտնահարվել է 30.000 հայ երեխայի իրավունք, որոնք բռնի տեղահանվել են, մնացել են անօթևան, առանց սննդի և կենսական պայմանների: Առևանգվել են մինչև 14 տարեկան տղա երեխաներ, կան մահացության դեպքեր՝ 5 երեխա):

Թեպետ թե՛ տեղի հայությունը և թե՛ ներգաղթյալները միևնույն՝ հայկական քաղաքակրթության կրողներն էին, ունեին հային բնորոշ միևնույն հոգեկերտվածքն ու արժեհամակարգը [4,11], այնուհանդերձ կային սոցիալ-տնտեսական, ֆինանսական, կենցաղային խնդիրներ, որոնք անհրաժեշտ էր հաղթահարել գործնական քայլերի իրականացման արդյունքում: Նման պայմաններում երեխաների մոտ կարող են փոխվել աշ-

խարհընկալումը, շրջապատի նկատմամբ հուսալիությունն ու հավատը: Նմանատիպ գագառումները կարող են հանգեցնել՝

- ❖ վարքային կտրուկ փոփոխությունների,
- ❖ ապագայի նկատմամբ ընկալման կորստի,
- ❖ չարդարացված ռիսկի դիմելուն,
- ❖ վատ հիշողություններից չկտրվելուն,
- ❖ ուսման նկատմամբ անտարբերության,
- ❖ առողջական խնդիրների առկայության և այլն:

Թեպետ անժխտելի է թե՛ պետության, և թե՛ հասարակության կողմից բարեգործական ծրագրերի, աջակցության տարբեր ձևերի ու ուղիների կազմակերպումը, սակայն խնդիրն առկա է, անելիքները՝ շատ: Այսօր զինված հակամարտություններից տուժած մեր երեխաների պաշտպանության հարցը լուրջ մտահոգությունների տեղիք է տվել: Որչափ էլ պետությունը իրավաբանորեն փորձում է խնդիրը կարգավորել, որպեսզի նվազագույնի հասցվեն այն ռիսկերը, որոնք առկա են երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության գործում, այնուհանդերձ դժվարություններն ու բացթողումները շատ են, իսկ լուծման ուղիները՝ դժոխս անորոշ:

Թվում է, թե բոլոր կարևոր հարցերն արտացոլված են իրավական փաստաթղթերում, սակայն զինված հակամարտության ժամանակ մեր երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանության խախտումների մեծ մասը կարող էր կանխվել կամ մեղմվել, եթե առկա կանոնակարգերը իրականում բոլոր իրավիճակներում հարգվեին ու կիրառվեին: Սակայն, ինչպես ցույց տվեցին վերջին տարիների դեպքերը, մեր երկրի կողմից ձեռնարկված գործնական միջոցառումներն այդքան էլ արդյունավետ չեին, իսկ երեխայի սոցիալական պաշտպանությանն առնչվող ու միջազգային նորմերում ամրագրված շատ դրույթներ այդպես էլ մնացին թղթի վրա:

Մինչդեռ միջազգային մարդասիրական իրավունքը երեխաներին ապահովում է համապարփակ պաշտպանություն: Զինված կոնֆլիկտի դեպքում, լինի դա միջազգային, թե ազգային, երեխաներն օգտվում են ռազմական գործողություններին չմասնակցող քաղաքացիական անձանց ընդհանուր պաշտպանությունից: «Պետությունն ու նրա մարմիններն ու կազմակերպությունները... ցուցաբերում են նյութական, բժշկական, հոգեբանական և այլ օգնություն, անհրաժեշտության դեպքում նրան տեղավորում են բուժական հաստատություններում կամ կազմակերպում երեխայի այլընտրանքային խնամքը և ինտեգրումը հասարակությունում» (հոդված 36): Երեխաների նկատմամբ երաշխավորվում է մարդասիրական վերաբերմունք, և ենթարկվում են ռազմական գործողությունների իրականացմանն առնչվող իրավական կանոններին: Դա են վկայում 1949 թ. Ժնևի երրորդ ու չորրորդ կոնվենցիաները, 1977 թ. նրանց լրացուցիչ արձանագրությունները, «Երեխայի իրավունքների մասին» 1989 թ. կոնվենցիան և այդ կոնվենցիայի 2000 թ. կամընտիր արձանագրությունը, որոնք սահմանում են հստակ կանոններ՝ հատուկ պաշտպանությամբ: Անկախ երկրում տիրող ոչ բարենպաստ պայմաններից՝ պետությունն ու բարեգործական հասարակական կազմակերպությունները հնարավորինս պետք է փորձեն աջակցել ու կարգավորել հասարակության ամենախոցելի շերտի՝ երեխաների, կեցության, կրթության, առողջության, սոցիալական և իրավական պաշտպանության հարցերը: Ավելին՝ «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ում ամրագրված է, որ «արտակարգ իրավիճակներում հայտնված երեխային պետությունը տրամադրում է անհապաղ և անվճար օգնություն, միջոցներ է ձեռնարկում վտանգավոր գոտուց նրան տեղափոխելու..., ինչպես նաև բժշկական անհրաժեշտ

օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար» [2]: Բնականաբար, առաջանում են հետևյալ հարցերը.

- ինչպե՞ս պաշտպանել երեխաներին այնպիսի իրավիճակներում, որոնցում մենք չափահասներս, դժվարությամբ ենք մեզ կառավարում,
- ինչպե՞ս օգնել երեխային հաղթահարել հետպատերազմյան հոգետրավմայի հետևանքները:

1. Առաջին հերթին երեխայի համար կարևոր է անվտանգ ու ապահով միջավայրի առկայությունը, ուր երեխան իրեն կզգա հնարավորիս պաշտպանված: Վերջինս նախևառաջ ենթադրում է երկրում խաղաղության ապահովում՝ որպես երեխայի սոցիալական ու իրավական ապահովության երաշխիք:

2. Անհրաժեշտ է շահագրգիռ մարմինների՝ խնդրին ընդառաջ գնալու ու նախաձեռնողականություն դրսևորելու պատրաստակամություն: Ըստ վիճակագրական տվյալների («Հայացք» վերլուծական կենտրոն)՝ մեր երկիրը հնարավորության սահմաններում փորձում է ապահովել բոլոր երեխաների սոցիալական ու իրավական պաշտպանությունը՝ կարգավորելով նրանց անվտանգության, կեցության, կրթության, առողջության պահպանման խնդիրները:

3. Կարևոր է նաև սոցիալական տարբեր ինստիտուտների առողջ համագործակցությունը խնդրի կարգավորման գործում՝ սկսած «ընտանիք», «դպրոց» սոցիալական ինստիտուտներից, ներառյալ Երեխայի խնամքի և աջակցության կենտրոններ, խնամակալության ինստիտուտներ, դատական մարմիններ և այլն: Վստահության ձեռքբերման արդյունքում են հնարավոր մասնագետների (սոցիալական մանկավարժ, հոգեբան, բժիշկ, վերապատրաստված ուսուցիչ), ըստ երեխաների կարիքների իրականացվող հոգեվերականգնողական աշխատանքները, սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը, ինչպես նաև երեխայի անձնական ու հուզական հասունությանն ուղղված անհատական և խմբային տարաբնույթ աշխատանքները: Նրանց խնդիրն է օգնել, աջակցել երեխաներին կյանքի այս դժվարին փուլում, հավատ ներշնչել սեփական ուժերի, դրական տրամադրվածություն ապագայի նկատմամբ: Միայն այսպես է հնարավոր պաշտպանել երեխային կյանքի դժվարին իրավիճակներում, հաղթահարել խնդիրները, որոնք խանգարում են նրա զարգացմանը, լիարժեք սոցիալականացմանը, սոցիալական բարեկեցությանը: Նմանատիպ միջոցառումների համալիրը կարող է նպաստել երեխայի դրական վերաբերմունքի, հարմարման հմտությունների ձևավորմանը, երեխայի՝ նոր միջավայրում ինտեգրմանը:

**Եզրակացություն:** Հայ ազգն իր գոյության ակունքներից ի վեր միշտ ունեցել է պետականություն, իսկ դրա բացակայության պարագայում երբեք բաց չի թողել պատմական հնարավորությունը՝ կրկին ձեռք բերելու համար, անգամ, եթե դա զուգորդվել է թանկ կորուստներով: Երեխան հայի համար միշտ եղել է բարձրագույն արժեք, որի պաշտպանության, առողջության, անվտանգության ապահովման խնդիրը եղել է գերակա բոլոր ժամանակների ընթացքում: Ուստի երեխայասեր, պետականաշեն, ստեղծարար, հումանիստական հատկանիշները հայ ազգին որակող բազմաթիվ որակներից են, ու մենք միշտ եղել ենք, կանք, կմնանք որպես սեփական ճակատագիրը ինքնակամ տնօրինելու կամք ունեցող ազգ:

# THE PROBLEM OF SOCIAL PROTECTION OF CHILDREN IN THE POST-WAR PERIOD

**Ashikyan Armenuhi**

*Candidate of Pedagogical Sciences, Associate Professor,  
Yerevan State University, Armenia  
armine\_ashikian@yahoo.com*

## Summary

The implementation of social and legal protection of children in the Republic of Armenia has undergone significant improvements over the past decade, but they are still incomplete and require flexible solutions and regulation. Structural and substantive changes were made to the social and legal protection of the child, which led to the emergence of new entities, a revision of their functions, the need for cooperation and other issues. A unified social service and its territorial centers have been created, which will carry out a social assessment of the family, which will be taken into account when organizing the care and upbringing of a child in a difficult life situation. The implementation of social protection and fundamental rights of the child should be one of the priorities of the State. Consequently, ensuring the priority of peace in the country and the safety of the child's life, social well-being, and the best interests of the child requires a clear State policy and social and legal norms.

**Keywords:** *social protection of children, legislative framework, child care and protection centers, a child in an emergency situation, mass displacement, forced emigration, social security, difficult life situation.*

## ПРОБЛЕМА СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ ДЕТЕЙ В ПОСЛЕВОЕННЫЙ ПЕРИОД

**Ашикян Арменуи**

*Кандидат педагогических наук, доцент,  
Ереванский государственный университет, Армения  
armine\_ashikian@yahoo.com*

## Аннотация

Реализация социальной и правовой защиты детей в Республике Армения за последнее десятилетие претерпела значительные улучшения, но она все еще неполная и требует гибких решений и регулирования. За этот период были внесены структурные и содержательные изменения в программу социальной и правовой защиты ребенка, что привело к появлению новых субъектов, пересмотру их функций, необходимости сотрудничества и решению других вопросов. Создана единая социальная служба и ее территориальные центры, которые будут осуществлять социальную оценку семьи, что будет учитываться при организации ухода и воспитания ребенка, оказавшегося в трудной жизненной ситуации. Реализация социальной защиты и основных прав ребенка должна быть одной из приоритетных задач государства. Следовательно, обеспечение приоритета мира в стране и безопасности жизни ребенка, социального благополучия, интересов ребенка требует четкой государственной политики и социальных и правовых норм.

**Ключевые слова:** *социальная защита детей, законодательная база, центры по уходу и защите детей, ребенок, оказавшийся в чрезвычайной ситуации, массовое перемещение, вынужденная эмиграция, социальное обеспечение, трудная жизненная ситуация.*

## Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 1995 թ., հուլիսի 5, հոդված 32:
2. «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենք, 1996 թ., հոդված 34:
3. THE HUMAN RIGHTS DEFEDER OF THE REPUBLIC OF ARMENIA, PRELIMINARY AD HOC REPORT ON RESULTS OF FACT-FINDING MISSIONS, CONDUCTED FROM SET. 24 to SEP.30, 2023.
4. Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Պատերազմի բացասական հետևանքները և դրանց չեզոքացման միջոցառումների բովանդակությունը// «Գիտական Արցախ», 2021, հ. 4, էջ 11:
5. 2005 թ. ընդունվեցին երեխաների իրավունքներին սերտորեն առնչվող «Սոցիալական աջակցության մասին», «Պետական նպաստների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքները, վավերացվեցին «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և ման-

կական պոռնոգրաֆիայի մասին» և զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող» կամընտիր արձանագրությունները, ինչպես նաև «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիան, 2006 թ. ՀՀ-ն վավերացրեց «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիան՝ կից հայտարարություններով, ինչպես նաև «Օնոդական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին» կոնվենցիան, հաստատեց «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թթ. ռազմավարությունը», 2009 թ. ՀՀ Կառավարությունը հավանության է արժանացրել ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը, 2012 թ. հաստատել է «ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագիրը» և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը:

6. 1996 թ. ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին» և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքները, 1998 թ.՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, 2002 թ.՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 2003 թ.՝ ՀՀ քրեական օրենսգիրքը

7. 1992 թ. ՀՀ-ը միացավ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային:

8. 1993 թ. ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կենտրոնական աշխատակազմում ստեղծվեց ընտանիքի խնդիրներով զբաղվող բաժին:

9. Շվեդիայի կառավարության կայք, <https://www.government.se/articles/2018/04/questions-and-answers-about-incorporating-un-convention-on-the-rights-of-the-child-into-swedish-law/>:

10. Չեխիայի աշխատանքի և սոցիալական գործերի նախարարության կայք, <https://www.mpsv.cz/web/en/system-of-social-and-legal-protection-of-children-in-the-czech-republic>:

11. Էստոնիայի սոցիալական ապահովության խորհուրդ, <https://www.sotsiaalkindlustusamet.ee/en/family-and-child-protection/child-protection#Child%20Protection%20Department>:

12. Լիտվայի երեխայի իրավունքների պաշտպանության և որդեգրման ծառայություն՝ <https://vaikoteises.lt/protection-of-children/the-lithuanian-child-rights-protection-system-/>:

*Получено: 15.04.2024*

*Received: 15.04.2014*

*Рассмотрено: 26.04.2024*

*Reviewed: 26.04.2024*

*Принято: 29.04.2024*

*Accepted: 29.04.2024*

Journal "Education in the 21st Century", Voll-11/1/, 2024



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ՄԻԶԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՅԻ  
ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ**

**Պողոսյան Նաիրա**

*մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ*

*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Հայաստան*

*nairapoghosyan@yahoo.com*

**Ամփոփում**

Ժամանակակից գլոբալացող աշխարհի սոցիալ-մշակութային մարտահրավերներին ընդառաջ բազմալեզվությունն ու դրա ազդեցությունը մարդու մտածողության ու խոսքի ձևավորման և զարգացման վրա աննախադեպ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների անխուսափելի ներգրավվածությունն այդ գործընթացում հանգեցնում է խիստ հակասական արդյունքների: Վերոնշյալ հարցի ուսումնասիրությունը բազմամակարդակ, միջմասնագիտական հետազոտությունների առարկա է և անհերքելի արդիականություն է ձեռք բերել վերջին տասնամյակների ընթացքում: Այսպես, մինչդեռ լեզվակրթության քաղաքականության տեսանկյունից հարցն իրավացիորեն շարունակաբար դիտարկվել է դրական լույսի ներքո՝ կարևորելով ժամանակակից աշխարհում մարդու կողմից մի քանի լեզուների տիրապետման խնդիրը, դրա առավելություններն ու դրական կողմերը, սպա՝ հոգելեզվաբանության տեսանկյունից մի քանի լեզվի համաժամանակյա կամ տարաժամանակյա առկայությունը երեխայի կյանքում, հատկապես վաղ մանկության շրջանում, կարող է պատճառ հանդիսանալ խոսքի զարգացման լուրջ դժվարությունների: Նյարդալեզվաբանության տեսանկյունից բազմալեզու միջավայրը բացառիկ դրական ազդեցություն կարող է ունենալ երեխայի զարգացող ուղեղում նյարդային բջիջների միջև շարունակաբար ձևավորվող կապերի, միկրոկապերի, ինչպես նաև դրանց բազմազանության վրա: Իսկ մարդու կողմից առհասարակ կյանքի ընթացքում նոր լեզուներ սովորելը կարող է կանխել բազմաթիվ հիվանդություններ, ինչպիսիք են Ալցհայմերը, Պարկինսոնը, տարիքային թուլամտությունը և այլն [9]: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ անձի բազմալեզվությունն ինքնին ուշագրավ է հետազոտողների լայն շրջանակի համար, քանի որ այն կարող է մարդու կյանքում ունենալ ճակատագրական դեր ու նշանակություն՝ պայմանավորված այն հանգամանքով, թե երբ (ո՞ր տարիքում ու որքա՞ն ժամանակամիջոցում) և ինչպես (ի՞նչ պայմաններում) է ձևավորվել այն: Սույն հոդվածում մեր նպատակն է հստակեցնել «անձի բազմալեզվություն» հասկացության բովանդակությունը, ներկայացնել մտածողության և խոսքի օնտոգենեզը, այն է՝ զարգացման փուլերը մարդու կյանքում՝ սկսած նրա ծնունդից, ինչպես նաև ուսումնասիրել և դուրս բերել այն դրական ու բացասական ազդեցությունները, որոնք կարող է ունենալ բազմալեզվությունը երեխայի մտածողության ու խոսքի զարգացման վրա: Ուսումնասիրության առանցքում հատկապես կդիտարկվեն գրոյից վեց տարեկան երեխաները, քանի որ հիմնական խնդիրները, որոնց հանգեցնում է բազմալեզվությունը, հանդիպում են առավելապես այս տարիքի երեխաների շրջանում:

***Բանալի բառեր՝** երկլեզվություն/երկլեզվակիրություն, անձի բազմալեզվություն, խոսքային մտածողություն, խոսքի զարգացում, տեղեկատվական տեխնոլոգիաներ:*

**Հիմնախնդիրը:** Սույն հոդվածն առնչվում է երեխայի խոսքի և մտածողության վրա բազմալեզու միջավայրի ազդեցությանը, ինչպես դրական, այնպես էլ բացասական տեսանկյունից: Քննության են առնվում համաժամանակյա և տարաժամանակյա, ինչպես նաև բնական և արհեստական բազմալեզվության պայմաններում մեծացող երեխայի խոսքի ու մտածողության ձևավորման առանձնահատկություններն ու խնդիրները:



**Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների հակիրճ վերլուծություն:** Հետազոտության ընթացքում քննության են առնվել լեզվակրթական (LFLZ), լեզվաբանական (Пашук С., Յեյտլին Ս.) և հոգելեզվաբանական (Թովմասյան Հ, Field J., Залевская А.) հետազոտություններ, որոնք առնչվում են երեխայի խոսքի ու մտածողության զարգացման օնտոգենեզին (Թովմասյան Հ.), ինչպես նաև երեխայի խոսքի ու մտածողության ձևավորման և զարգացման առանձնահատկություններին (Зимняя А., Յեյտլին Ս., Bialystok E.):

**Հետազոտության նպատակը:** Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել և պարզել երկլեզու ու բազմալեզու միջավայրի դրական և բացասական ազդեցությունը երեխայի խոսքի և մտածողության զարգացման վրա դեռևս նախախոսքային ու լեզվաճանաչողական փուլերում:

**Հետազոտության նորույթը:** Առաջին անգամ ճշգրտվել և հիմնավորվել է երեխայի խոսքի և մտածողության զարգացման վրա բազմալեզու միջավայրի դրական ու բացասական ազդեցությունը, արվել են առաջարկություններ դեռևս նախախոսքային ու լեզվաճանաչողական փուլերում երեխայի խոսքի ու մտածողության ձևավորման և զարգացման գործընթացն առավել արդյունավետ և անվնաս կազմակերպելու համար:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Սույն հետազոտությամբ համադրվել և հակադրվել են անձի բազմալեզվության շուրջ միջմասնագիտական (լեզվական, լեզվաբանական, հոգեբանական, հոգելեզվանական, նյարդահոգելեզվաբանական) հարակից ոլորտների մոտեցումները, ինչպես նաև բազմալեզու միջավայրի դրական և բացասական ազդեցությունը երեխայի խոսքի ու մտածողության ձևավորման և զարգացման վրա՝ այդ գործընթացն առավել ներդաշնակ և արդյունավետ կազմակերպելու հանգամանքները ճշգրտելու համար:

Սույն հետազոտությամբ մեր խնդիրն է ուսումնասիրել և պարզել երկլեզու և բազմալեզու միջավայրի ազդեցությունը երեխայի խոսքի ու մտածողության զարգացման վրա դեռևս նախախոսքային և լեզվաճանաչողական փուլերում և ներկայացնել այն բոլոր դրական ու բացասական հետևանքները, որոնք կարող են խթանել կամ խաթարել երեխայի խոսքի և մտածողության բնականոն ձևավորումն ու զարգացումը վաղ մանկական տարիքում: Այդ իսկ պատճառով մեր կողմից անհրաժեշտ է համարվել հստակեցնել «անձի բազմալեզվություն» հասկացության բովանդակությունը, ներկայացնել մտածողության և խոսքի օնտոգենեզը, այն է՝ զարգացման փուլերը մարդու կյանքում՝ սկսած նրա ծնունդից, ինչպես նաև ուսումնասիրել և դուրս բերել այն դրական ու բացասական ազդեցությունները, որոնք կարող է ունենալ բազմալեզվությունը երեխայի մտածողության և խոսքի զարգացման վրա վաղ մանկական տարիքում:

Հանրալեզվաբանության տեսանկյունից լեզուն սոցիոմշակութային երևույթ է, ինչը ենթադրում է համապատասխան գիտելիքների և կարողությունների ձևավորում լեզվակիր ժողովրդի սոցիալ-մշակութային տարրերի շուրջ, մասնավորապես՝ քաղաքավարության կանոններ, տարբեր սերունդների, սեռերի, սոցիալական խավերի ու հասարակական խմբերի միջև հարաբերությունների ընդունված նորմեր, ինչն անմիջականորեն դրական առումով ազդում է տարբեր մշակույթների ներկայացուցիչների հաղորդակցության վրա, ընդ որում՝ մասնակիցները կարող են նույնիսկ չգիտակցել այդ ազդեցությունը [2, էջ 30]:

Տարիքային ֆիզիոլոգիայի տեսանկյունից երեխայի կյանքում օտար լեզուների ներմուծումը վաղ տարիքում առավել նպաստավոր է լեզվախոսքային պոտենցիալ կարողությունների, մասնավորապես իմիտացիայի և ընդօրինակման կարողությունների

ակտիվության տեսանկյունից, որոնք վեց տարեկանից սկսում են աստիճանաբար նահանջել [9]:

Մասնագիտացված լոգոպեդները հետևում են այն կարծիքին, որ երկրորդ լեզուն վաղ մանկական տարիքում կարող է խոչընդոտել խոսքային մտածողության զարգացման գործընթացը՝ նպաստելով խոսքային խնդիրների ձևավորմանը: Սակայն կա նաև հակառակ տեսակետը, համաձայն որի՝ երեխայի երկլեզու դաստիարակությունը դիտվում է որպես դրական զարգացում, որը նպաստում է ոչ միայն բանավոր խոսքի, այլ նաև երեխայի մտավոր, սոցիալ-ճանաչողական համալիր կարողությունների զարգացմանը:

**Գործնական նշանակությունը:** Հիմնախնդրի վերլուծությունն ու առաջարկությունները կարող են հետաքրքրել «Սենսորիկա», «Նանոտեխնոլոգիաներ», «Նյութագիտություն, «Կիսահաղորդիչների ֆիզիկա» և հարակից այլ դասընթացներ դասավանդող երիտասարդ մասնագետներին՝ առարկայական նյութերն ուսանողին առավել արդյունավետ ու հետաքրքիր ներկայացնելու համար:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Ինչպես գիտենք, ներկայումս ծավալների և զարգացման աննախադեպ աճ է դիտվում համաշխարհային արդյունաբերության ու բարձր տեխնոլոգիաների գրեթե բոլոր ուղղություններում, ինչը հրամայական է դարձել այստեղ կիրառվող սարքավորումների պարամետրերի լավարկման համար: Այս և հարակից ոլորտներում անհրաժեշտություն է լինում ճշգրիտ կառավարելու տարբեր պրոցեսներ, վերահսկելու ամենատարբեր տեսակի գազերի արտահոսքերը և մշտադիտարկելու շրջակա օդի որակը: Այս նպատակով օգտագործվող հիմնական սարքավորումները սենսորներն են, որոնց կառուցվածքի, աշխատանքի սկզբունքի և պատրաստման առանձնահատկությունների մասին գիտելիքների ճիշտ փոխանցումը ուսանողին կարևորագույն խնդիր է: Նանուկառուցվածքային գազային սենսորներին վերաբերող դասընթացները՝ հազեցած ժամանակակից գննական և գործնական մեթոդներով, կնպաստի ապագայում ավելի բարձր մակարդակի այնպիսի մասնագետների պատրաստմանը, որոնք հաջողությամբ կձառայեն ոլորտի զարգացմանը [11, 13]:

Գիտատեխնոլոգիական ոլորտին վերաբերող առարկաների դասավանդումը բուհերում ներկայումս կատարվում են ոչ համակարգված, և ուսուցման որակը հիմնականում պայմանավորված է դասավանդողի անհատական մոտեցումներով ու հմտու-

թյուններով: Խնդիրն այն, որ այս ոլորտում գիտելիքի փոխանցումը պետք է իրականացվի խիստ պլանավորված՝ հազեցած խոսքային, տեսական, գննական ու գործնական մեթոդների կիրառման բարձր հմտություններով: Ոլորտին առնչվող, դասավանդվող առարկաները ուսանողի կողմից լավ ըմբռնելու և պատկերացում կազմելու համար հիմնականում պահանջվում են ոչ միայն տեսական գիտելիքներ, այլ նաև պրակտիկ, խիստ կիրառական պարապմունքներ: Մյուս կողմից, ՀՀ-ում գործող ոչ բոլոր բուհերում են առկա տեխնոլոգիական և չափիչ համապատասխան սարքավորումներ, ինչի պատճառով ուսանողին փոխանցված տեսական գիտելիքներն այնքան էլ ամբողջական չեն լինում: Արտասահմանյան առաջատար բուհերի բարձր կուրսերում սովորող ուսանողները սենսորիկայի ոլորտի դասընթացների պրակտիկ մասը սովորաբար անցկացնում են հարակից ոլորտներում արտադրություն իրականացնող ընկերություններում, որտեղ ուսանողը ոչ միայն պասիվ դիտում, այլ նաև մասնակցում է սենսորների արտադրման պրոցեսին [14]: Այս առումով ՀՀ բուհերում նանոկառուցվածքային սենսորների նախագծմանն ու պատրաստմանը նվիրված տեսական դասընթացները պետք է ներկայացվեն առավել քան մանրակրկիտ, մատչելի և ժամանակակից մեթոդներով հազեցած (սահիկների ներկայացում, տեսահոլովակների դիտում և այլն):

Գազային սենսորիկային նվիրված դասընթացները կարելի է բաժանել չորս հիմնական ենթաբաժինների [1]

1. **Գազային սենսորների տեսակներ և կառուցվածք,**
2. **Գազային սենսորների աշխատունակության պարամետրեր,**
3. **Գազային սենսորների զգայունության մեխանիզմներ,**
4. **Գազային սենսորների պարամետրերի չափման մեթոդներ:**

Ներկայացված ենթաբաժինների նյութերը դյուրին յուրացնելու համար անհրաժեշտ է, որ ուսանողը տիրապետի ժամանակակից կիսահաղորդչային ֆիզիկայի և կիսահաղորդչային նանոտեխնոլոգիաների առանձնահատկություններին: Ցանկալի են նաև բազային գիտելիքներ ինտեգրալ սխեմաների նախագծման և արտադրման, ինչպես նաև ինժեներական գիտելիքներ էլեկտրական սխեմաների նախագծման ու տպասալերի պատրաստման ոլորտներում [12]:

**Գազային սենսորների տեսակները և կառուցվածքը** նկարագրելիս կարևորագույն խնդիր է նախևառաջ ուսանողին առավել հանգամանալից ներկայացնել համապատասխան շուկայում առկա գազագազայուն համակարգերի տեսակները, դրանց կառուցվածքը, այստեղ օգտագործվող հիմնական նանոկառուցվածքային նյութերը, ինչպես նաև դրանց առավելություններն ու թերությունները: Հարկ է նշել, որ ներկայումս աշխարհի տարբեր երկրերում (Չինաստան, Ճապոնիա, Գերմանիա և այլն) առկա են նանոկառուցվածքային գազային սենսորներ արտադրող ընկերություններ: Մրանք հիմնականում շահույթ հետապնդող ընկերություններ են, որոնք առավելապես գիտական պրոցեսներից հեռու են և իրագործում են լաբորատորիաներում մշակված և վերջնական փուլին հասցված (նախատիպի մակարդակի) համակարգերի մասսայական արտադրություն: Քանի որ այսպիսի սենսորներ աշխարհում արդեն իսկ տևական ժամանակ արտադրվում են, ապա ուսուցման պրոցեսում տվյալ դասընթացի կարևորությունն ու արդիականությունը փաստելուց զատ՝ առավել կարևոր է ուսանողությանը ներկայացնել նաև առկա խնդիրները: Խնդիրն այն է, որ շուկայում առկա սենսորներն այնքան էլ չեն բավարարում ներկայացվող պահանջները, և մեծ ջանքեր են ուղղվում՝ նոր տեսակի նյութերի, նանոկառուցվածքների ու նորարարական մոտեցումների միջոցով լավարկելու այդ պարամետրերը: Այդ իսկ պատճառով դեռևս չեն դադարել այս

ոլորտում գիտատեխնոլոգիական փնտրտուքները, և այստեղ կատարվող հետազոտական աշխատանքներն ինքնանպատակ չեն [7]: Դասընթացի տեսական ու խոսքային մատուցման մեջ առավել կարևոր է մատնանշել առկա գազային սենսորների տեսակները, ինչպիսիք են կիսահաղորդչային ռեզիստիվ, դաշտային տրանզիստորների հիման վրա պատրաստված, պիեզոէլեկտրական, օպտիկական, կատալիզային, էլեկտրաքիմիական, ունակային և այլն [4]:

Մովորաբար ուսանողի համար դասընթացն առավել հետաքրքիր է անցնում, երբ տվյալ սարքավորման տեսական բնութագրումից զատ՝ կիրառվում են նաև գննական մեթոդներ (իրական պատկերներ, տեսահոլովակներ, տեսասահիկներ և այլն): Դասընթացն էլ ավելի արդյունավետ է ընթանում, երբ ուսանողին հասանելի է դառնում իրական սարքավորումը: Մենսորների դեպքում սա առավել իրատեսական է, քանզի սրանք չափսերով բավական փոքր են, դյուրակիր և օժտված են տարբեր համակարգերի հետ համակցման մեծ հնարավորությամբ: Այս ամենից զատ՝ այսպիսի սենսորների գինը բավական ցածր է (մի քանի տասնյակ ԱՄՆ դոլար), և դրանց ձեռքբերումը այնքան էլ դժվար չէ: Իրական հետազոտվող առարկայի՝ սենսորի առկայությունն ուսուցման պրոցեսում անհամեմատ մեծացնում է ուսանողի հետաքրքրությունը՝ դասընթացը դարձնելով պրակտիկ գիտելիքի ձեռքբերման լավագույն միջոց: Դասընթացի այս ենթաբաժնում խիստ կարևոր է ուսանողին պարբերաբար ներկայացնել հետազոտվող (մատուցվող) առարկայի՝ կիսահաղորդչային սենսորների առավելությունները, որը դասընթացի նկատմամբ ուսանողի հետաքրքրությունը մեծացնելու լավագույն մեթոդներից է: Ներկայացված տարատեսակ սենսորների շարքում կիսահաղորդչային ռեզիստիվ սենսորներն աչքի են ընկնում մի շարք առավելություններով, ինչպիսիք են բարձր զգայունությունը, արագագործությունը, փոքր չափսերը, քիմիական ու մեխանիկական կայունությունը և այլն: Ռեզիստիվ սենսորների թվարկված առավելությունները բավական խոստումնալից են իրական միջավայրերում կիրառման և երկարատև օգտագործման առումով, սակայն ուսուցման տեսանկյունից առավել նպաստավոր է սրանց չափազանց պարզ կառուցվածքը: Տեխնոլոգիական առարկաների ուսուցման մեթոդաբանության մեջ առավել կարևոր են ներկայացված էլեկտրոնային համակարգի, առանձին սարքավորման կամ որևէ միկրոէլեկտրոնային տարրի կառուցվածքի ամբողջական նկարագրումն ու դրանց առանձին բաղադրիչների մեկառմեկ մեկնաբանումը: Դասընթացի դասավանդման տեսական մեթոդների շրջանակում պետք է մատնանշել, որ ռեզիստիվ գազային սենսորները բաղկացած են դիէլեկտրական որևէ տակդիրից (հիմնականում պատրաստվում է այրումինաօքսիդային նյութից), որի վրա նախապես պատրաստվում են ազնիվ մետաղներից (ոսկի, արծաթ և այլն) սանրաձև հպակներ: Տակդիրի հակառակ կողմում կամ զգայուն թաղանթի շուրջը պատրաստվում է նաև տաքացուցիչ՝ սենսորի աշխատանքային ջերմաստիճանը ապահովելու համար: Հպակների ակտիվ տեղամասում նստեցվում է գազազգայուն թաղանթ, և չափվում են օդում ու գազի առկայությամբ թաղանթի դիմադրությունները: Եթե կա դիմադրությունների տարբերություն, նշանակում է, որ սենսորն ունի զգայունություն տվյալ գազի նկատմամբ [2]: Այս ամենը լավագույնս կյուրացվի ուսանողի կողմից, երբ դասընթացի ներկայացման գործնական մեթոդների շրջանակում նրանց ցուցադրվեն սենսորների վերը ներկայացված բաղադրիչների իրական նախատիպերը: Համեմատած ժամանակակից միկրոէլեկտրոնային ու նանոէլեկտրոնային բարդագույն համակարգերի հետ, սրանք անհամեմատ պարզ են, իսկ ուսուցման և ուսանողի կողմից ընկալման տեսանկյունից՝ բավական դյուրին: Օրինակ, եթե սենսորների կառուցվածքը համեմատենք ժամանակակից ինտեգրալ միկրոս-

խեմաների հետ, որոնցում փոքրիկ կիսահաղորդչային բյուրեղում (մի քանի սմ<sup>2</sup> մակերեսով) տեղակայվում են միլիարդավոր կիսահաղորդչային տարրեր՝ իրենց միջմիացումներով, ապա ակնհայտ է, որ ռեզիստիվ սենսորն անհամեմատ պարզ կառուցվածք ունեցող համակարգ է: Չնայած այս ամենին՝ սրանց կառուցվածքային բնութագրերը յուրացնելիս ուսանողին անհրաժեշտ են հարակից այլ գիտելիքներ՝ հատկապես բարակ թաղանթների նստեցման մեթոդների վերաբերյալ: Չիմանալով բարակ մետաղական հպակների և նանոչափային թաղանթների նստեցման (սինթեզման) առանձնահատկությունները՝ ուսանողի համար բավական դժվար կլինի յուրացնել սենսորի պատրաստման տեխնոլոգիան: Հաշվի առնելով, որ նստեցման այս մեթոդները բավական շատ են և բաժանվում են երկու մեծ խմբերի (ֆիզիկական և քիմիական նստեցման եղանակներ), ուսուցման պրոցեսում տվյալ դասընթացից գատ (գուգահեռ կամ նախապես), պետք է ուսուցանել բարակ թաղանթների նստեցման մեթոդները: Հարկ է նշել, որ այս թեման՝ որպես հիմնարար գիտելիք, պահանջվում է ոչ միայն գազային սենսորների բնութագրերի ուսուցման համար, այլ նաև այն հիմքն է բոլոր տեսակի նանոկառուցվածքային համակարգերի ստացման:

Գազային սենսորների պատրաստման համար կարևորագույն խնդիր է գազազգայուն նյութի ճիշտ ընտրությունը, ինչը կհանգեցնի ոչ միայն սենսորի զգայունության, այլ նաև կայունության բարելավման: Գազազգայուն նյութերի տեսակների և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացների յուրացումն ուսանողի համար այնքան էլ դյուրին չէ, քանզի պահանջվում են բավական խորքային գիտելիքներ նյութագիտության ոլորտից: Ժամանակակից նանոտեխնոլոգիաներում, մասնավորապես սենսորիկայի ոլորտում ինտենսիվ որոնումներ են կատարվում լավարկված պարամետրերով նոր տեսակի նյութերի և միացությունների հայտնաբերման համար: Առկա և զարգացվող գրեթե բոլոր նանոէլեկտրոնային սարքավորումներում ավանդաբար օգտագործվող նյութերն արդեն իրենց սպառել են, և պահանջարկ կա սինթեզելու նոր տեսակի միաչափ և երկչափ նանոկառուցվածքների հիման վրա ստացված կոմպոզիտային նյութեր [3]: Սա նշանակում է, որ նյութագիտության կուրսերի մատուցումն ուսանողին արդեն կարելի է դասել բազային գիտելիքներ փոխանցող առարկաների շարքին, որի յուրացումից հետո միայն հնարավոր կլինի ուսանողին ներկայացնել ժամանակակից սենսորային կառուցվածքներում օգտագործվող նյութերի առանձնահատկությունները: Նյութերի բնութագրերի ուսուցումն առավել դյուրին կյուրացվի ուսանողի կողմից, եթե դրանք ներկայացվեն դասակարգված՝ առանձին խմբերի տեսքով, ինչպիսիք են կիսահաղորդիչները, մետաղօքսիդները և պոլիմերները: Սյստեղ առավելապես պետք է ուշադրություն դարձնել նյութերի այնպիսի պարամետրերին, ինչպիսիք են դրանց էլեկտրական հաղորդականությունը, լիցքակիրների շարժունակությունը, քիմիական և մեխանիկական կայունությունը, կատալիզային ակտիվությունը, բյուրեղական կառուցվածքը, հաղորդականության տեսակը և այլն: Որպես գազազգայուն նյութեր հիմնականում օգտագործվում են նանոկառուցվածքային մետաղօքսիդները, որոնք էժան են, ունեն բարձր զգայունություն և՛ վերականգնող, և՛ օքսիդացնող զազերի նկատմամբ, ինչպես նաև սրանց պարամետրերը գրեթե չեն փոփոխվում ժամանակի ընթացքում: Ներկայումս կան նյութագիտությանը վերաբերող դասընթացների դասավանդման խիստ ժամանակակից և հետաքրքիր զննական մեթոդներ, որոնց միջոցով կարելի է տեսնել նյութերի բյուրեղական կառուցվածքը, դրանց սինթեզման պրոցեսը և այլն: ՀՀ բուհերում առկա են նաև նյութերի պարամետրերի բնութագրման բազմատեսակ կա-

յանքներ (սպեկտրամետրեր, մանրադիտակներ և այլն), ուստի ցանկալի է գործնական դասընթացներ իրականացնել նաև այսպիսի չափիչ սարքավորումների վրա:

**Գազային սենսորների աշխատունակության պարամետրերն** այն կարևորագույն ցուցիչներն են, որոնցով բնութագրվում է տվյալ սարքավորման պիտանելիությունն՝ իրական միջավայրերում կիրառման դեպքում: Այս տեսանկյունից սրանց ընդգրկուն ներկայացումը ուսանողին առավել կարևորվում է, հատկապես եթե հնարավորություն կա դասընթացի գործնական (լաբորատոր) պարամետրների ընթացքում կատարելու պարամետրերի իրական չափումներ: Չարգացած երկրերում նմանատիպ դասընթացները կատարվում են հիմնականում գիտական լաբորատորիաներում, որտեղ առկա են ամենատարբեր չափիչ համակարգեր (հոսանքաչափեր, գեներատորներ, օսցիլոսկոպներ և այլն): ՀՀ բուհերում, հատկապես տեխնոլոգիական և ինժեներական ուղղվածություն ունեցող ստորաբաժանումներում, ևս կարելի է գտնել համապատասխան չափիչ տեխնիկա, որոնցով ներկայումս էլ իրականացվում են նմանատիպ դասընթացներ: Ժամանակակից աշխարհում օգտագործվում են նաև բազմաֆունկցիոնալ լաբորատոր կայանքներ (օրինակ՝ Keithley 4200A-SCS), որտեղ միննույն համակարգում առկա են տարբեր պարամետրերի չափման հնարավորություններ (վոլտամպերային, վոլտունակային, ունակահաճախային և այլ բնութագրեր): Այս դեպքում տեսական գիտելիքների փոխանցումը հիմնավորվում է փորձնական չափումներով և դրանց գրաֆիկական ներկայացմամբ: Որպես գազային սենսորների կարևորագույն պարամետրեր անհրաժեշտ է անդրադառնալ, զգայունությանը, ընտրողունակությանը, արագագործությանը, կայունությանը, վերարտադրելիությանը և սենսորի ինքնարժեքին [9]: Նանկառուցվածքային ռեզիստիվ սենսորի զգայունությունն օդում ու թիրախային գազի առկայությամբ սենսորի դիմադրությունների հարաբերություն է, որը կախված է բազմաբնույթ գործոններից, ինչպիսիք են գազազգայուն նյութի տեսակը, դրա կազմաբանությունը, սենսորի երկրաչափական ձևը և այլն: Մա փաստում է այն, որ գազազգայուն նյութերի վերաբերյալ հիմնային գիտելիքների փոխանցումը ուսանողին դասընթացի ներկայացման սկզբնական փուլում արդարացված է: Այստեղ ուսանողի համար առավել կարևոր է նաև հասկանալի ներկայացնել սենսորի զգայունության առկայության կարևորությունը՝ սարքավորման նախագծման առաջին փուլից սկսած: Բանն այն է, որ սենսորի զգայունության բացակայության կամ դրա շատ փոքր լինելու դեպքում մնացած բոլոր պարամետրերի դիտարկումը և դրանց բարելավմանը միտված քայլերը զուր են: Մա նշանակում է, որ ռեզիստիվ սենսորների գազազգայունությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է տվյալ սարքավորումը իրական միջավայրերում կիրառման համար: Դասընթացի շրջանակում սենսորի զգայունության չափման ցուցադրական և իրական մեթոդների կիրառումը խիստ կարևոր է: Մյուս կարևորագույն պարամետրը ընտրողունակությունն է, որի առկայության դեպքում սենսորը, բացի թիրախային գազից, շրջապատող մյուս գազերի նկատմամբ չպետք է զգայունություն ցուցաբերի, կամ այն պետք է լինի անհամեմատ փոքր, քան թիրախային գազինը: Այս պարամետրի ճշգրիտ ներկայացումն ուսանողին առավել պահանջում է նրանց կողմից հիմնային գիտելիքներ՝ տարբեր գազերի և նյութերի գոլորշիների հատկությունների վերաբերյալ: Այստեղ անհրաժեշտ է ուսանողին ներկայացնել տվյալ գազի կիրառության ոլորտները, պայթուցանավտանգության աստիճանը և օգտագործման անվտանգության կանոնները: Ինչ վերաբերում է տարբեր քիմիական նյութերին, որոնց գոլորշիները նույնպես հնարավոր է հայտնաբերել կիսահաղորդչային նանոկառուցվածքային սենսորներով, ապա այստեղ

ևս ուսանողին որոշակի գիտելիքներ են անհրաժեշտ տվյալ նյութերի կապի էներգիայի, խտության, մածուծիկության և ֆիզիկական այլ պարամետրերի վերաբերյալ:

Ներկայումս բավական հեռանկարային ուղղություն է մարդու արտաշնչած օդի բաղադրության վերլուծությունը գազային սենսորների միջոցով: Հայտնի է, որ արտաշնչած օդում տվյալ գազի կոնցենտրացիայի ավել կամ պակաս լինելը փաստում է մարդու օրգանիզմում որոշակի հիվանդությունների առկայության մասին: Այս ուղղությամբ բավական մեծ հետազոտություններ են կատարվում, ուստի ժամանակակից ուսանողների համար բավական հետաքրքիր կլինի ներկայացնել սենսորների նմանատիպ՝ այլընտրանքային կիրառությունները [2, 3]: Այստեղ անհրաժեշտ է ուսանողին մատուցել որոշակի գիտելիքներ մարդու օրգանիզմում տեղի ունեցող կենսաբանական պրոցեսների և դրանց հետևանքների մասին: Օրինակ՝ դասընթացի շրջանակում ժամանակակից անիմացիոն մեթոդներով կարելի է ցույց տալ, որ օրգանիզմում թոքային հիվանդությունների առկայության դեպքում թոքերը սկսում են արտադրել ջրածնի պերօքսիդի ավել կոնցենտրացիաներ, որոնք կանխարգելում են թոքերի ախտահարման պրոցեսը: Այս պատճառով արտաշնչած օդում ավելանում է ջրածնի պերօքսիդի կոնցենտրացիան, որը հիմք կարող է հանդիսանալ թոքային հիվանդությունների ոչ ինվազիվ եղանակով հայտնաբերման համար: Այստեղ պետք է մատնանշել սենսորի բարձր ընտրողունակության կարևորությունը, քանզի արտաշնչած օդում գոյություն ունեն բազմաթիվ նյութեր: Նանկատուցվածքային գազային սենսորներին վերաբերող դասընթացների ուսուցման պրոցեսում խիստ կիրառական և հեռանկարային այսիսի ուղղությունների պարբերաբար ներկայացումը դասընթացը դարձնում է ավելի հետաքրքիր ու գրավիչ: Այս ամենից գատ՝ ուսանողին պետք է ներկայացնել ժամանակակից սարքավորումների համար խիստ անհրաժեշտ պարամետրի՝ արագագործության կարևորությունը: Սենսորների դեպքում բարձր արագագործությունը խիստ պահանջված է, քանզի պայթյունավտանգ գազերի հայտնաբերման հապաղումը կարող է հանգեցնել լուրջ աղետների: Այստեղ նաև պետք է մատնանշվեն սենսորի ժամանակային կայունությանն առնչվող հարցերը: Վաճառքի ենթակա սենսորը պետք է տևական ժամանակ (ամենաքիչը 2 տարի) անխափան աշխատի՝ առանց աշխատունակության պարամետրերի էական շեղումների: Համապատասխան լաբորատոր կայանքների առկայության դեպքում առարկայի շրջանակում կարելի է պարբերաբար (շաբաթը մեկ անգամ) տվյալ սենսորի վրա կատարել չափումներ և ուսանողին ներկայացնել տվյալ պարամետրի փոփոխման դինամիկան ամիսների ընթացքում: Ուսուցման այս մեթոդը կստիպի շարժել ուսանողի հետաքրքրությունը և հերթական չափման ու արդյունքի գրանցման ակնկալիքով ապահովել ուսանողների մասնակցության բարձր մակարդակ:

Սենսորների լայնամասշտաբ արտադրության ժամանակ կարևոր է պատրաստել միևնույն պարամետրերով բազմաթիվ սենսորներ՝ ապահովելով բարձր վերարտադրելիություն: Ցածր վերարտադրելիությունը կարող է հանդիսանալ լուրջ խնդիր, երբ տվյալ ընկերությունը ցանկանում է մեծ շահույթ հետապնդել [7]: Դասընթացի շրջանակում առաջարկվում է ուսանողին ներկայացնել աղյուսակներ, որոնցում տեղ կգտնեն տարբեր ընկերությունների սենսորների արտադրման ծավալները, դրանց վերարտադրելիության մակարդակը, տեխնիկական բնութագրերն ու գները: Նշված տեղեկությունները բավականին հասանելի են համացանցում, և դրանց թարմացման համար անհրաժեշտ է պարբերաբար կատարել որոշակի ուսումնասիրություններ: Այստեղ ուսանողին պետք է ներկայացնել նաև ժամանակակից էլեկտրոնային սարքավորումների գնագոյացման առանձնահատկություններ, քանզի նմանատիպ կառուցվածքների գինը արդեն

իսկ դարձել է առաջնային պարամետր: Սովորաբար նանոկառուցվածքային գազային սենսորների գինը ձևավորվում է այստեղ օգտագործվող նյութերի և պատրաստման ծառայությունների համար անհրաժեշտ գումարներով, որը կարելի է բավականին ճկուն կառավարել: Դասընթացի տեսական պարապմունքների շրջանակում առաջարկվում է կիրառել գնագոյացման հաշվարկման բանաձևեր և տեսականորեն գնահատել տվյալ պարամետրերով սենսորի ինքնարժեքը:

**Գազային սենսորների զգայունության մեխանիզմները** ներառում են հնարավոր բոլոր ֆիզիկաքիմիական պրոցեսները, որոնց արդյունքում դիտվում է սենսորի դիմադրության փոփոխություն, այսինքն՝ զգայունություն: Այս առումով տվյալ ենթաբաժնի ներկայացումը ուսանողին պետք է ներառի ոչ միայն գիտելիքներ կիսահաղորդիչների, այլ նաև բարակ թաղանթների ֆիզիկայի և քիմիայի ոլորտներից: Անհրաժեշտ է նախապես ուսանողին տեսականորեն ներկայացնել գազային փուլում գտնվող նյութերի ադսորբցիոն ու դեսորբցիոն հատկությունները և պինդմարմնային նյութի մակերևույթին դրանց կլանման հնարավորությունները: Գազային մոլեկուլները կիսահաղորդչային նանոկառուցվածքի մակերևույթին սկզբում ադսորբվում են, այնուհետև, կախված ջերմաստիճանից, ֆիզորբվում կամ քիմսորբվում: Գազային սենսորների դեպքում կարևոր է քիմսորբցիոն պրոցեսի գրանցումը, ինչի արդյունքում թիրախային գազի ու զգայուն նյութի միջև տեղի է ունենում էլեկտրոնների փոխանակում: Դասընթացի տվյալ ենթաբաժնի գործնական պարապմունքները կարելի է անցկացնել լաբորատորիաներում, որտեղ առկա են գազային քրոմատոգրաֆներ, սպեկտրասկոպիկ անալիզ իրականացնող սարքավորումներ և մանրադիտակներ [10]: Սրանք թույլ կտան ուսանողին անմիջապես հետևել գազ/կիսահաղորդիչ փոխազդեցությանը և տեսնել այստեղ տեղի ունեցող կինետիկական երևույթները: Այսօր առկա են նաև գազ/կիսահաղորդիչ փոխազդեցությունները ներկայացնող անիմացիոն տեսահոլովակներ, որոնցում լավագույնս մեկնաբանվում է վերը թվարկած կինետիկական երևույթների էությունը: Հարկ է նշել, որ գազային սենսորների հատկություններն ուսումնասիրող գիտական ուղղություններում բավական սաղմնային վիճակում են գտնվում տեսական մեկնաբանությունները, քանզի դրանք կախված են բազմաթիվ գործոններից: Այս առումով դասընթացում անհրաժեշտ է ներառել գազազգայունության մեխանիզմները նկարագրող տեսական բնույթի գիտելիքներ և խնդիրների լուծում: Ներկայումս առկա են մոդելավորման տարբեր եղանակներ, որոնցով մեծ հաջողությամբ կարելի է մոդելավորել տվյալ գազային սենսորը և դրա վրա կատարել փորձարկումներ: Մոդելավորման այս մեթոդները բավական ընդունված են ժամանակակից բուհերում դասավանդվող նմանատիպ կուրսերում, որոնք իրականացվում են անվճար՝ համացանցում հասանելի ծրագրային միջոցներով: Ավելի բարդ համակարգերի մոդելավորման համար անհրաժեշտ է գնել ծրագրերից օգտվելու ժամանակավոր հասանելիություն:

**Գազային սենսորների պարամետրերի չափման մեթոդները** բազմազան են, և օգտագործվող սարքավորումները բավական թանկ են և երբեմն ոչ հասանելի ուսումնական հաստատությունների համար: Սրանք ներառում են գազազգայունությունը չափող հատուկ համակարգեր, տարատեսակ չափիչ կայանքներ (հոսանքաչափեր, գեներատորներ և այլն), սենսորի զգայուն թաղանթի բաղադրությունը որոշող կայանքներ, տարատեսակ մանրադիտակներ (օպտիկական, ատոմաուժային, տեսաձրող էլեկտրոնային և այլն), սպեկտրասկոպներ և այլն: Գազազգայունությունը չափող հատուկ համակարգեր կարելի է պատրաստել լաբորատորիայում և՛ ուսումնական, և՛ գիտական նպատակներով: Մա բավական հեշտ իրագործվող համակարգ է, սակայն ուսումնական

գործընթացներում կիրառման համար պետք է այն նախագծել՝ անվտանգության կանոնները առավելագույնս հաշվի առնելով [5]: Այս համակարգի նախագծումը կարելի է նաև ներառել դասընթացի գործնական մեթոդներում, ինչը թույլ կտա ուսանողին ձևավորել առավել խորքային գիտելիքների ինժեներական ուղղությամբ: Չափման համակարգը հիմնականում բաղկացած է չափիչ խցիկից, որտեղ տեղակայվում է հետազոտվող սենսորը: Չափման խցիկին միացվում են թիրախային գազի բալոնը և սենսորի գազազգայունության պարամետրերը գրանցող բաղադրիչների հաղորդալարերը, որոնք ինֆորմացիան փոխանցում են համակարգչին: Ուսանողին անհրաժեշտ է հնարավորինս մատչելի լեզվով ներկայացնել չափման համակարգի աշխատանքի սկզբունքը և այստեղ կիրառվող մեթոդները: Չափման պրոցեսին ուսանողի ներգրավվածությունը լուծում է մի քանի կարևորագույն խնդիրներ: Առաջին հերթին ուսանողն անմիջապես մասնակցում է փորձարարական աշխատանքներին, կարողանում է գրանցել որևէ ֆիզիկական պարամետր և տեսնել դրա փոփոխությունը ժամանակի ընթացքում: Մա միանշանակ բարելավում է ուսանողի փորձարարական հմտությունները և սարքավորումների հետ աշխատելու կարողությունները: Մյուս կողմից՝ տվյալ ֆիզիկական պրոցեսի դիտումը իրական փորձարկումներում ուսանողների համար կլինի բավական տպավորիչ, իսկ գիտելիքի փոխանցումը՝ չափազանց արդյունավետ: Փորձարարական այս գործընթացներին ուսանողության ներգրավվածությունը զարգացնում է նաև նրանց լաբորատորիայում աշխատելու մշակույթը՝ ծանոթացնելով այստեղ գործող կանոններին: Չափման մյուս կայանքների ուսումնասիրումը և դրանց հիման վրա փորձարկումները նախընտրելի են ոչ միայն սենսորների գազազգայուն կառուցվածքների ուսումնասիրման, այլ նաև ավելի լայն տիրույթի՝ նյութագիտության ոլորտում կատարվող աշխատանքների համար: Հարկ է նշել, որ այստեղ առկա որոշ գերթանկարժեք սարքավորումների հետ աշխատելը բավական դժվար է (մասնավորապես՝ ատոմաուժային ու էլեկտրոնային տեսաձրող մանրադիտակների հետ), որն հիմնականում իրականացնում են ոլորտի նեղ մասնագետները: Այս պատճառով ուսանողին սովորաբար չի վստահվում այսպիսի փորձարկումներ, ուստի դրանք արվում են նախապես, այնուհետև՝ ցուցադրվում դասընթացի շրջանակում:

**Եզրակացություն:** Այսպիսով՝ նանոկառուցվածքային գազային սենսորների առանձնահատկությունների ուսուցումը բուհերում պետք է իրականացվի նորագույն գննական ու գործնական մեթոդներով՝ ներառելով և՛ տեսական, և՛ փորձարարական գիտելիքներ: Տվյալ դասընթացներին վերաբերող գրեթե բոլոր ենթաբաժինների ուսուցումը անհրաժեշտ է իրականացնել փորձարարական աշխատանքների կիրառմամբ և ժամանակակից չափիչ ու տեխնոլոգիական սարքավորումների միջոցով: Նշված առարկայի լավ յուրացման ու գիտելիքի դյուրին փոխանցման համար անհրաժեշտ են նախնական գիտելիքներ կիսահաղորդիչների ֆիզիկայի, նյութագիտության, բարակ թանթանների ստացման, քիմիայի և հարակից այլ ոլորտներից:



# FEATURES OF TEACHING THE CHARACTERISTICS OF THE MODERN NANOSTRUCTURED GAS SENSORS IN UNIVERSITIES

**Aleksanyan Mikayel**

*Doctor of Science (Engineering), Associate Professor  
Yerevan State University, Armenia  
maleksanyan@ysu.am*

## Summary

The article is devoted to the peculiarities of the teaching nanostructured gas sensors in universities and the problems existing here. The professional literature on this topic was studied, the necessity of using gas sensors in various systems was presented, and the need for courses on gas sensors in the modern universities was justified. The main subsections of the course, the most important provisions included in them, and their teaching methods are presented. Teaching a course on nanostructured gas sensors in universities requires the use of modern methods, including both the experimental and the theoretical knowledge. It is necessary to teach the subject using experimental works with modern measuring and technological equipment. For the good assimilation and the easy knowledge transfer of courses on the nanostructured gas sensors, students need prior knowledge of semiconductor physics, materials science, chemistry, and other related fields.

**Keywords:** *nanostructured gas sensors, high-tech teaching, teaching characteristics in universities, obtaining experimental knowledge, students.*

## ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ КУРСА О ХАРАКТЕРИСТИКАХ СОВРЕМЕННЫХ НАНОСТРУКТУРНЫХ ГАЗОВЫХ СЕНСОРОВ В ВУЗАХ

**Александр Микаел**

*Доктор технических наук, доцент  
Ереванский государственный университет, Армения  
maleksanyan@ysu.am*

## Аннотация

Статья посвящена изучению особенностей преподавания курса о характеристиках наноструктурных газовых сенсоров в вузах и существующим в этой области проблемам. Исследована специальная литература по данной теме. Представлена и обоснована необходимость применения сенсоров в различных системах и преподавания курса по газовым сенсорам в современных вузах. Представлены основные разделы курса, включенные в них важнейшие положения, а также методика их преподавания. Преподавание курса по наноструктурным газовым сенсорам в вузах требует применения современных методов, включая и экспериментальные, и теоретические знания. Преподавание предмета должно сопровождаться экспериментальными работами на основе современного измерительного и технологического оборудования. Для передачи знаний в наиболее доступной форме и для лучшего усвоения курса по наноструктурным газовым сенсорам студентам необходимо приобрести предварительные знания в области физики полупроводников, материаловедения, химии и других смежных областях.

**Ключевые слова:** *наноструктурные газовые сенсоры, преподавание высоких технологий, особенности преподавания в вузах, получение экспериментальных знаний, студенты.*

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ալեքսանյան Մ., Կիսահաղորդչային գազային սենսորների առանձնահատկությունները (ուսումնասիրողական ձեռնարկ), ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 52 էջ (2020):
2. Aleksanyan M. et al., Room Temperature Detection of Hydrogen Peroxide Vapor by Fe<sub>2</sub>O<sub>3</sub>:ZnO Nanograins, *Nanomaterials*, Vol. 13, 2022, p.120.
3. Aleksanyan M. et al., Detection of hydrogen peroxide vapor using flexible gas sensor based on SnO<sub>2</sub> nanoparticles decorated with multi-walled carbon nanotubes. *Advances in Natural Sciences: Nanoscience and Nanotechnology*, Vol. 14, 2023, p. 025001.
4. Capone S. et al., Solid state gas sensors: state of the art and future activities, *Journal of Optoelectronics and Advanced Materials*, Vol. 5, 2003, pp. 1335-1348.
5. Fusnik L. et al., A Review of Gas Measurement Set-Ups, *Sensors*, Vol. 22, 2022, p. 2557.
6. Gupta A. and Verma G., *Book of Nanostructured Gas Sensors (Fundamentals, Devices, and Applications)*, New York, Jenny Stanford Publishing, 2023, 184 pp.
7. Korotchenkov G., Metal oxides for solid-state gas sensors: What determines our choice?, *Materials Science and Engineering: B*, Vol. 139, 2007, pp. 1-23.

8. Krishna K. et al., Nanostructured metal oxide semiconductor-based gas sensors: A comprehensive review, *Sensors and Actuators A: Physical*, Vol. 341, 2022, p. 113578.
9. Leask R. et al., The impact of practical experience on theoretical knowledge at different cognitive levels, *J S Afr Vet Assoc.*, Vol. 91, 2020, p. 2042.
10. Sparkman D. et al., *Gas Chromatography and Mass Spectrometry: A Practical Guide*, Academic Press, Elsevier Inc., (978-0-12-373628-4), 2011, pp. 589-611.
11. Wetchakun K. et al., Semiconducting metal oxides as sensors for environmentally hazardous gases, *Sensors and Actuators B: Chemical*, Vol. 160, 2011, pp. 580-591.
12. Wilson R. et al., Innovative Teaching of IC Design and Manufacture Using the Superchip Platform, *IEEE Transactions on Education IEEE*, Vol. 53, 2010, pp. 297-305.
13. Yun J. et al., A review of nanostructure-based gas sensors in a power consumption perspective, *Sensors and Actuators B: Chemical*, Vol. 372, p. 132612.
14. Zhong Y. et al., Intelligent Manufacturing in the Context of Industry 4.0: A Review, *Engineering*, Vol. 3, 2017, pp. 616-630

*Получено: 30.03.2024*

*Рассмотрено: 08.04.2024*

*Принято: 06.05.2024*

*Received: 30.03.2024*

*Reviewed: 08.04.2024*

*Accepted: 06.05.2024*

Journal "Education in the 21st Century", Vol1-11/1/, 2024



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

## ԿԱՆԱՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

**Խաչատրյան Նոննա**  
*տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ*  
*Երևանի պետական համալսարան, Հայաստան*  
*nonnakhachatryan@ysu.am*  
**Կարապետյան Սվետլանա**  
*տնտ. գիտ. թեկնածու*  
*Հյուսիսային համալսարան, Հայաստան*  
*sveta.karapetyan@yahoo.com*

### Ամփոփում

Կանաչ կրթության պահանջարկը կտրուկ մեծանում է մոլորակի բնակչության աճին գու-  
զընթաց: Մարդիկ իրենց արտադրական և կենցաղային գործունեությամբ հսկայական վնաս են  
պատճառում երկիր մոլորակին: Հետամուտ լինելով մասնավոր շահերի՝ մարդիկ հիմնականում  
ուշադրություն չեն դարձնում շրջակա միջավայրի վրա իրենց գործունեության բացասական  
հետևանքներին, որն ի վերջո ձևավորում է բնապահպանական և սոցիալական ռիսկեր, խաթա-  
րում է տնտեսության կայուն զարգացումը: Այս առումով կարևորվում է կանաչ կրթության այն-  
պիսի մեթոդաբանության մշակումը, որը թիրախավորվում է անձերի ուսումնառությանը ողջ  
կյանքի ընթացքում [9, 75]: Մակայն մյուս կողմից, տեսամեթոդական առումով դեռևս չկա միաս-  
նական մոտեցում կանաչ կրթության կազմակերպման շուրջ [7, 89-90], չնայած որ նախադրու-  
ցական կրթօջախներից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ անձերին ծանո-  
թացնում են շրջակա միջավայրի պահպանման վարքագծային նորմերին, մեկնաբանում կայուն  
զարգացման սկզբունքները: Դրան գուգահեռ ձևավորվում է շրջակա միջավայրի նկատմամբ բա-  
րյացակամ վերաբերմունքի գիտակցում նաև ոչ ֆորմալ, և անգամ ինֆորմալ կրթության պարա-  
գայում: Հետևաբար ներկայումս հիմնախնդիր է առաջանում կանաչ կրթությունը կազմակերպե-  
լու այնպես, որ այն շարունակաբար ուղեկցի մարդուն իր ողջ կյանքի ընթացքում և ճկուն  
տրանսֆորմացիոն հիմքեր ունենա տարիքային տարբեր խմբերի շրջանում:

**Բանալի բառեր՝** *կանաչ կրթություն, կայուն զարգացում, կանաչ վարքագիծ, շրջակա միջա-  
վայրի պաշտպանություն, էկոբարյացակամություն, ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն:*

**Հիմնախնդրի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը:** Կանաչ  
կրթությունը կազմակերպվում է տարիքային տարբեր խմբերում՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և  
ինֆորմալ կրթաձևերի շրջանակում: Այս առումով, կարևորվում են կանաչ կրթության  
համապարփակ մեթոդաբանության ձևավորման հիմնախնդիրների վերհանումն ու  
դրանց լուծման հնարավորությունների վերլուծությունը, ինչն էլ հանդիսացել է տվյալ  
հետազոտության նպատակը:

**Գիտական նորությունը:** Նորովի ներկայացվել են կանաչ ուսումնառության մեթոդա-  
բանության ձևավորման առանցքային ուղղությունները հարատև կրթության ընթաց-  
քում, որով գնահատվում են կանաչ կրթության վերջնարդյունքները շրջակա միջավայ-  
րի պաշտպանությանը նպաստող անձի վարքագծային դրսևորումների տեսանկյունից:

**Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների ու հրատարակություն-  
ների վերլուծություն:** Կանաչ կրթության կազմակերպման մեթոդաբանական հիմ-

նախնդիրներին են անդրադարձել մի շարք հետազոտողներ (Ադել Ֆ., Արբիդանե Ի., Բրովնինգ Մ., Ճուդուրյան Ա, Մարտիրոսյան Ն, Չակոբբորթի Ա., Քեյզիս Մ. և ուրիշներ): Սակայն հեղինակները կանաչ կրթության կազմակերպման մեթոդաբանական վերլուծություններին հիմնականում ցուցաբերել են ոլորտային մոտեցում՝ համալիր փոխառնչություններ չսահմանելով տարբեր կրթաձևերի շրջանակում: Հողվածում փորձ է արվել կանաչ կրթության կազմակերպման մեթոդաբանությունը ներկայացնելու առավել ընդգրկուն տեսանկյունից՝ վերլուծելով կանաչ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթաձևերի շաղկապման հնարավորությունները, շեշտադրումներ կատարելով նաև կանաչ դաստիարակության գիտակցման, կանաչ վարքագծային նորմերի իրագործման և անհատի կանաչ ստեղծարարության ունակությունների ձևավորման վրա:


**Հետազոտության տեսական նշանակությունը:** Կանաչ կրթության բաղադրիչները որոշակի առումով միշտ էլ ընդգրկված են եղել կրթական տարբեր ծրագրերում: Սակայն տեսականորեն խնդիր չի դրվել ներդաշնակեցնելու և համակարգելու այդ ծրագրերը անձի էկոբարյացակամության գիտակցման տեսանկյունից: Հետազոտության տեսական նշանակությունը կանաչ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթաձևերի մեթոդաբանական համակցման նպատակադրումն է:

**Հետազոտության գործնական նշանակությունը:** Կանաչ կրթության համապարփակ մեթոդաբանության շրջանակի մշակումն ու ներդրումը կօժանդակեն շրջակա միջավայրի էկոբարյացակամության ձևավորմանը և կանաչ վարքագծային նորմերի արդյունավետ կիրառմանը ազգաբնակչության շրջանում:

**Հիմնական նյութի շարադրանքը:** «Կանաչ վարքագիծ» ցուցաբերող մարդիկ համապատասխան կրթության շնորհիվ են մտահոգություն դրսևորում կայուն զարգացման խնդիրների շուրջ և հոգատարություն ցուցաբերում շրջակա միջավայրի նկատմամբ: Ընդ որում, «Կանաչ դաստիարակությունը» մարդիկ ստանում են ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանապարհով: Եթե ուսումնական կրթական հաստատություններում կազմակերպվող ֆորմալ կրթությունը հետամուտ է լինում «կանաչ աշխատատեղերի» ստեղծմանը (էկո աուդիտորներ, բնապահպաններ, էկո խորհրդատուներ և այլն)՝ շրջանավարտին կրթական ծրագրի ավարտին տրամադրելով բնապահպանական ոլորտին առնչվող վերջնարդյունքներ, ապա ոչ ֆորմալ կրթությամբ անձերը, ստանալով հավաստագրեր, բարելավում են իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները շրջակա միջավայրի պահպանության ոլորտում [1, 54-56]:

Ֆորմալ «կանաչ կրթությունը» մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակ կամ ամբողջություն է ապահովում, ինչն իրականացնում է համապատասխան ուսումնական հաստատությունը, հանգեցնում տվյալ մակարդակի բնապահպանության մասնագետների որակավորման աստիճանի շնորհմանն ու դիպլոմավորմանը: Ոչ ֆորմալ «կանաչ» ուսուցումը կրթության լրացուցիչ ուսուցման ծրագրի կամ ծրագրերի ամբողջություն է ենթադրում, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասություն ունեցող կազմակերպության ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման: Ինչ վերաբերում է ինֆորմալ «կանաչ» կրթությանը, ապա այն անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և տարբեր այլ գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ է ձևավորում, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամա-

նակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Կանաչ կրթության դասակարգման մոտեցումները<sup>1</sup>

Ֆորմալ «կանաչ կրթության» ինստիտուտն ապահովում է հասարակության սոցիալական կայունությունն ու ինտեգրումը՝ կատարելով հետևյալ գործառույթները.

- բնապահպանական մշակույթի փոխանցում և տարածում հասարակության մեջ, քանզի կրթության միջոցով է, որ կայուն զարգացման գիտելիքները, «կանաչ ձեռնարկատիրության» նվաճումները, բարոյական չափանիշները, ի թիվս այլոց, փոխանցվում են սերնդեսերունդ,
- երիտասարդ սերունդների շրջանում հասարակության մեջ գերիշխող վերաբերմունքի, «կանաչ զարգացման» արժեքային կողմնորոշումների ու իդեալների ձևավորում,
- գիտական հետազոտությունների և բնապահպանական բացահայտումների գործընթացում իրականացվող սոցիալական ու մշակութային փոփոխություններ (ֆորմալ կրթության ժամանակակից հաստատությունները և առաջին հերթին համալսարանները գիտելիքի բոլոր ճյուղերի հիմնական կամ գիտական կարևորագույն կենտրոններից մեկն են):

Որպես կրթության յուրահատուկ ձև՝ ոչ ֆորմալ կրթությունը թույլ է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին ձեռք բերել և զարգացնել շարունակ փոփոխվող միջավայրի պահանջներին համապատասխան գիտելիքներ, կարողություններ և հմտություններ [3, 69-71]:

Ոչ ֆորմալ ուսումնառության օրինակներ են.

- կազմակերպություններում աշխատողների համար իրականացվող վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացները,

<sup>1</sup> Կազմել են հեղինակները:

- մասնագիտական և ոչ մասնագիտական ուսուցման դասընթացները, որոնք իրականացվում են ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպություններում, այդ թվում՝ պետական ուսումնական հաստատություններում,
- տարբեր միջազգային կազմակերպությունների ու ծրագրերի կողմից իրականացվող թիրախային դասընթացները,
- տարաբնույթ նախապատրաստական դասընթացները, այդ թվում՝ մասնավոր կրկնուսույցների գործունեությունը:

Այս կրթությանը մեծ ուշադրություն սկսեցին դարձնել այն ժամանակ, երբ ֆորմալ կրթությունն այլևս չէր կարող մասնակիորեն ապահովել այն, ինչ երիտասարդներին անհրաժեշտ էր անձնական և մասնագիտական զարգացման համար: Փաստացի, ոչ ֆորմալ կրթական համակարգը ձևավորվեց ի պատասխան այն մարտահրավերների, որոնք նոր դարաշրջանը ներկայացրեց ֆորմալ կրթական համակարգին: Ոչ ֆորմալ կրթական համակարգը ձևավորվեց որպես ուսումնառության բացերը լրացնող և «կանաչ» մտածելակերպով քաղաքացի ձևավորող համակարգ, որը չէր հավակնում և չի էլ կարող հավակնել փոխարինելու ֆորմալ կրթական համակարգի կողմից տրվող մասնագիտական կրթությանը [2, 429]:

Ֆորմալ կրթության հիմնական հատկանիշների համակարգված վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակիցները, այնուհանդերձ, առաջնորդվում են դեպի ոչ ֆորմալ ծրագրեր, քանի որ այս պարագայում առաջարկվում է որոշակի փորձ, որը նպատակադրվում է ձեռք բերել շրջանավարտների կողմից:

Ավելին, ոչ ֆորմալ կրթությունը վերաբերում է երիտասարդների անհատական և սոցիալական կրթության պլանավորված, կառուցվածքային ծրագրերին և գործընթացներին, որոնք նախատեսված են մի շարք կարողությունների և հմտությունների կատարելագործման համար՝ ֆորմալ կրթական ծրագրից դուրս: Ուստի ոչ ֆորմալ կրթությունը կարող ենք դիտարկել որպես կանաչ կրթության յուրահատուկ ձև, որը հնարավորություն է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին ձեռք բերելու, ինչպես նաև զարգացնելու հարավորտիս պահանջներին համապատասխան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ:

Ոչ ֆորմալ կրթությունը ներառում է դասընթացներ, վերապատրաստումներ, կարճաժամկետ ծրագրեր, որոնք առաջարկվում են կրթության ցանկացած փուլում կամ աշխատանքային գործունեության ընթացքում: Հիմնականում ոչ ֆորմալ կանաչ կրթությունն ապահովում է ավելի ճկուն ուսուցման ծրագրեր, որոնք բավարարում են սովորողների կարիքները, ավելի մատչելի են ժամանակի և ուսուցման վայրի առումով:

Որպես կրթության յուրահատուկ ձև՝ ոչ ֆորմալ կրթությունը թույլ է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին ձեռք բերել և անընդհատ զարգացնել շարունակաբար փոփոխվող շրջակա միջավայրի պաշտպանության պահանջներին համապատասխան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ: Նոր գիտելիքներ ստանալու գործընթացը հաճախ տեղի է ունենում ֆորմալ կրթական տարածքից դուրս՝ ոչ ֆորմալ պայմաններում, որտեղ կան հատուկ սահմանված նպատակներ, գործիքակազմ, մեթոդներ, որոնք օգնում են առավել արդյունավետ և հետաքրքիր դարձնել կրթվելու գործընթացը:

«Կանաչ դաստիարակության» գործընթացը ոչ պակաս արդյունավետություն է ցուցաբերում ինֆորմալ կրթության համատեքստում, երբ անձը ամենօրյա գործունեության ընթացքում տեղեկատվություն է ստանում բնապահպանական ոլորտում իր վարքագծային դրսևորումների վերաբերյալ: Կենսափորձով ձեռք բերված կրթությունը (ինֆոր-

մալ կրթությունը) բնական կրթական գործընթաց է, որից անձը ողջ կյանքի ընթացքում առօրյա շփումների միջոցով ձեռք է բերում բազմաբնույթ արժեքներ, գիտելիքներ, ունակություններ ու հմտություններ և [5, 158]: Այս գործընթացի տարրեր կարող են դիտվել, օրինակ, ընտանիքի անդամների, ընկերների, միջավայրի հետ հաղորդակցությունը, զանգվածային լրատվության միջոցները, գրականությունը, համացանցը և տեղեկատվական այլ աղբյուրներ: Հետևաբար կանաչ կրթությունը, որը կյանքում, բայց հաճախ ինքնաբերաբար, առանց ուսումնառության կանոնակարգված մեթոդաբանության, պետք է վերագրվի ինֆորմալ կրթությանը:

Ինֆորմալ կանաչ կրթությունն ընդգրկում է ուսուցման լայն շրջանակ, որին բոլոր մարդիկ մասնակցում են իրենց կյանքում ամեն օր: Այն կարող է լինել ցանկացած տեսակի տեղեկատվություն, որը սովորողը ստացել է հեռուստատեսությունից, ռադիոյից, համացանցից, ընկերների և/կամ ընտանիքի հետ զրույցներից:


Բնականաբար, որքան բարձր լինի ինֆորմալ կանաչ կրթական գործունեության մեջ ներգրավված համակարգվածության ու կազմակերպվածության աստիճանը, այնքան այն ավելի մոտ կլինի ոչ ֆորմալ կրթությանը: Առկա է նաև գործնական հնարավորություն՝ ինֆորմալից ֆորմալին կամ ոչ ֆորմալին անցնելու համար: Այսպես, բնության թանգարան այցելությունը կարող է լինել ինֆորմալ կրթության օրինակ, եթե բխում է ուսումնառուի անձնական և ինքնաբուխ որոշումից, քանի որ դա ուղղակիորեն կախված չէ նրա կրթական գործունեության հետ: Այնուամենայնիվ, եթե նման այցը սահմանված շրջակա միջավայրի ուսումնական ծրագրի մաս է կազմում և սովորողներից պահանջում է գրավոր հաշվետվություն, որտեղ պետք է լինի նաև ուսուցչի գնահատականը, դա կլինի գործունեություն, որը կապված է կամ ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթության հետ: Մակայն մեծ մասամբ ուսումնառության այս ձևը չի համապատասխանում կրթության կազմակերպված և համակարգված տեսակետին: Հասկանալի է, որ ինֆորմալ կրթության մեջ պարտադիր չէ ներառել նպատակներ և դրանցից բխող խնդիրներ: Ինֆորմալ կրթությունը չունի այն կառուցվածքն ու մակարդակները, որոնք ունեն ֆորմալ դպրոցները: Դա ավելի բնական է և ինքնաբուխ, այսինքն՝ «կանաչ տեղեկատվությունը», որը ձևավորվում է կրթության այս ձևի միջոցով, գալիս է նաև սեփական փորձից սովորելով:

Կանաչ ինֆորմալ կրթությունը չունի նաև ուղեցույցներ, ուսումնական ծրագրեր կամ չափորոշիչներ: Քանի որ չկան ուսումնական ծրագրեր կամ ստանդարտացված թեստեր, դժվար է քանակապես չափելի դարձնել կամ ստուգել, թե որքան լավ է սովորողը հասկանում կամ յուրացնում «կանաչ տեղեկատվությունը»: Եթե ինֆորմալ կրթության համար չկան հատուկ սահմանված նպատակներ ու խնդիրներ, ապա դա չի նշանակում, որ այս կրթությունը լիովին անօգուտ է և չի կարող կիրառություն ունենալ «կանաչ դաստիարակության» ոլորտում [7, 102]:

Հետևաբար «կանաչ կրթությունը» բազմաշերտ և բազմաուղորտ է, որի իրականացումը տեղի է ունենում անձի ողջ կյանքի ընթացքում և կարևոր դերակատարում է ստանձնում «կանաչ վարքագծային» արտահայտման գործիքակազմում: Այս առումով կանաչ կրթության մեթոդաբանությունը ձևավորվում է հիմնականում երեք ուղղությամբ (տե՛ս գծապատկեր 2):

Առաջին ուղղությունը անձին ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում, և կանաչ ուսումնառությունը թերևս սկսվում է նախադպրոցական տարիքից: Կանաչ կրթության մեթոդաբանության երկրորդ ուղղությունը առավել արդյունավետ է գործում, երբ անձը էկոդաստիարակչական հասունություն է ապրում, գիտակցորեն է մոտենում և հետևո-

ղական լինում շրջակա միջավայրի պահպանման վարքագծային նորմերին: Երրորդ ուղղությունը կանաչ կրթության ծառայությունների մատուցման մեթոդաբանության առավել բարձր նշաձողերին է հետամուտ լինում՝ նպատակ ունենալով անձի մոտ ձևավորելու ստեղծարար վարքագիծ շրջակա միջավայրի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի իրախուսման համար: Այսպես, եթե դպրոցի աշակերտին ուսուցանվում են շրջակա միջավայրի պահպանման կարևորությունը և դրան նպաստող անձի վարքագծային նորմերը, ապա համալսարանական միջավայրում կրթական ծառայություններ մատուցելիս փորձ է արվում ուսումնառուի մոտ ձևավորելու ստեղծարար մտածելակերպ իր մասնագիտության շրջանակում կանաչ գործելաճճի կարողությունների ու հմտությունների զարգացման նկատառումներով [6, 174-175]:



*Գծապատկեր 2. Կանաչ ուսումնառության մեթոդաբանության ձևավորման առանցքային ուղղությունները անձի հարաստ կրթության ընթացքում<sup>1</sup>*

Հատկանշական է նաև ընդգծել, որ կանաչ կրթության վերջնարդյունքների կիրառելիությունը հանրային գնահատմանն է արժանանում, որը հետադարձ կապով արտացոլվում է բոլոր մակարդակներում իրականացվող ուսումնառության մեթոդաբանական շրջանակի վրա: Այսպես, եթե խոշոր կազմակերպության գրասենյակային տարածքներում ընդմիջման ժամերին լուսավորությունը չի թուլացվում, տպիչներով անխնա օգտագործվում է թուղթը, աշխատակիցները, շարունակաբար սուրճ խմելով, թղթյա բաժակները որպես վերամշակվող թափոն չեն տեսակավորում աղբամաններում, յուրաքանչյուրը աշխատանքի է ժամանում սեփական մեքենայով՝ բաց թողնելով հանրային տրանսպորտից օգտվելու հնարավորությունը, ապա կազմակերպության ղեկավարության համար այս ամենն ահագանգ պետք է հանդիսանա մտահոգիչ ուղերձ՝ ներկայացնելու կրթություն իրականացնող համապատասխան կառույցներին՝ վերանայելու ուսումնական ծրագրերը և առավել հստակ թիրախավորելու անձերի կանաչ գործելաճճի վարքագծային ունակությունները:

<sup>1</sup> Կազմել են հեղինակները:



**Եզրակացություն:** Կանաչ կրթության կազմակերպման մեթոդաբանության ձևավորումը ուսումնառության համալիր մոտեցում է պահանջում ինչպես բովանդակային, այնպես էլ ժամանակային առումով, քանի որ ուսումնառության այս ձևը անձին ուղեկցում է իր ողջ կյանքի ընթացքում և ձևափոխությունների տարբեր փուլեր է անցնում: Ուստի կարծում ենք, որ կանաչ կրթության մեթոդաբանական ուղղությունները, լինելով բազմաշերտ, չպետք է մնան ստատիկ վիճակում, այլ պետք է շարունակաբար զարգանան և շարժվեն միմյանց հետ այնպես, որ անձի շուրջ իր ողջ կյանքի ընթացքում ձևավորվի կանաչ գործելաձին նպաստող կրթական միջավայր ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուղիներով:

## METHODOLOGICAL ISSUES OF ORGANIZING GREEN EDUCATION

**Khachatryan Nonna**

*PhD, Associate Professor, Yerevan State University, Armenia  
nonnakhachatryan@ysu.am*

**Karapetyan Svetlana**

*PhD, Northern University, Armenia  
sveta.karapetyan@yahoo.com*

### Summary

The demand for green education is increasing dramatically as the planet's population grows. Humans cause enormous damage to the planet earth with their actions and domestic activities. Pursuing private interests, individuals generally do not pay attention to the negative consequences of their activities on the environment, which ultimately creates environmental and social risks, disrupts the sustainable development of the economy. In this regard, the development of a green education methodology that targets the lifelong learning of individuals is highlighted. Therefore, the present problem is the effective organization of green education in such a way that it continuously accompanies the individual throughout his life and has flexible transformational basis among different age groups. In the article, recommendations are made in terms of improving the methodological directions of green education in such a way that an educational environment conducive to green practices is formed around the individual throughout his life in formal, non-formal and informal ways.

**Keywords:** *green education, sustainable development, green behavior, environmental protection, eco-friendly, formal, non-formal and informal education.*

## МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ «ЗЕЛЕНОГО» ОБРАЗОВАНИЯ

**Хачатрян Нонна**

*Кандидат экономических наук, доцент  
Ереванский государственный университет, Армения  
nonnakhachatryan@ysu.am*

**Карапетян Светлана**

*Кандидат педагогических наук,  
Северный университет, Армения  
sveta.karapetyan@yahoo.com*

### Аннотация

Спрос на «зеленое» образование резко возрастает по мере роста населения планеты. Человечество наносит колоссальный ущерб планете Земля своей производственной и бытовой деятельностью. Преследуя частные интересы, индивиды, как правило, не обращают внимания на негативные последствия своей деятельности для окружающей среды, что в конечном итоге создает экологические и социальные риски, нарушает устойчивое развитие экономики. В связи с этим особое внимание уделяется разработке методологии зеленого образования, нацеленной на обучение личности на протяжении всей жизни. Актуальной проблемой является эффективная организация «зеленого» образования таким образом, чтобы оно постоянно сопровождало личность на протяжении всей его жизни и имело гибкие трансформационные основы среди разных возрастных групп. В статье даются рекомендации по совершенствованию методических направлений зеленого образования таким образом, чтобы на протяжении всей его жизни индивида формальным, неформальным и информальным способами формировалась образовательная среда.

**Ключевые слова:** зеленое образование, устойчивое развитие, зеленое поведение, защита окружающей среды, экодружелюбие, формальное, неформальное и информальное образование.

### Օգտագործված գրականության ցանկ

1. **Abdel Fattah, Hoda** (2015). How to make School attractive to the child. Fourth and second international scientific conference. Faculty of Education Port Said University entitled Towards a child-friendly school between April 18-19.
2. **Browning, M. and Rigolon, A.** (2019). School Green Space and Its Impact on Academic Performance: A Systematic Literature Review. *Int. J. Environ. Res. Public Health* 2019, 16, 429.
3. **Chakraborty, A., Singh, M., Roy, M.** (2018). Green Curriculum Analysis in Technological Education. *International Journal of Progressive Education*, Volume 14 Number 1, 2018
4. **Ghanem, Tafida** (2020). The inclusion of national and International Sustainable Development Goals in the curricula of Public Education proposed vision –the tenth Conference of the Faculty of Arts BeniSuef University towards building a strategy for sustainable development in Upper Egypt under the humanities.
5. **Keziz, Amal** (2019). Sustainable green school and the culture of Environmental Education – International and Arab models about the Green School - *Journal of Human Sciences and society*. Volume 8, No. 1, pp. 155-179.
6. **Hakobyan A., Tshughuryan A., & Martirosyan G.,** (2023) “The Integrated Reporting Philosophy in Business Strategy” //“Wisdom” Scientific journal, Yerevan, 1(25), pp. 169-76. doi: 10.24234/wisdom.v25i1.978.
7. **Iluta Arbidane., Nonna Khachatryan, Narine Martirosyan,** (2023) Issues of Accounting information disclosure for ecosystem services, //”Economic, Finance and Accounting” journal, no 2, pp 87-108, doi:10.59503/29538009-2023.2.12-87
8. **Iwan, A. and Rao, N.** (2017). The Green School Concept: Perspectives of Stakeholders from Award-Winning Green Preschools in Bali, Berkeley, and Hong Kong. *Journal of Sustainability Education*, no. 16.
9. **Tshughuryan A, Khachatryan N.** (2023), Ecosystem services financial management information security issues, *History and politics scientific journal*, (2), 25, pp: 71-94 doi: 10.59630/10.59630/25792644-2023.2.25-71.

*Получено: 26.03.2024*

*Рассмотрено: 08.04.2024*

*Принято: 12.05.2024*

*Received: 26.03.2014*

*Reviewed: 08.04.2024*

*Accepted: 12.05.2024*

Journal “Education in the 21st Century”, Vol1-11/1, 2024



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**«ՊՈԼՍԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆՊԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Միրզոյան Էլինա**  
*բան. գիտ. թեկնածու,  
Երևանի պետական համալսարան,  
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,  
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա,  
Հայաստան  
elina-mirzoyan@ysu.am*

**Ամփոփում**

Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել ու ներկայացնել «Պոլսահայ մամուլի պատմություն» առարկայի դասավանդման առանձնահատկությունները, առարկայի շրջանակում արձանագրվող հիմնախնդիրները, որոնցով պայմանավորված՝ այդ ուղղությամբ անհրաժեշտ ենք համարում տեսական, գիտագործնական, մեթոդական նորարարական մոտեցումներ:

Առարկայի դասավանդման վերաբերյալ մոտեցումները տարբեր են ուսումնական ծրագրերում. անդրադարձել ենք այդ առանձնահատկություններին, դրսևորումներին, գերակա մոտեցումներին՝ հիմնավորելով այն մոտեցումը, որը մենք գործնականում կիրառում ենք առարկայի դասավանդման ընթացքում: Առարկայի վերաբերյալ միջգիտակարգային մոտեցման բացակայության արդյունքում խախտվում են առարկայի կիրառական ոլորտի պատկերացումներն ինչպես մասնագետների, այնպես էլ ուսանողների համար: Առարկան ինքնաբերորշ է, ինչը ենթադրում է ճկուն մոտեցում, որի արդյունքում առարկայի դասավանդման նպատակը, խնդիրները, արդյունավետությունը, կրթական վերջնարդյունքները չեն տուժի:

Մեր հետազոտությունը կատարվել է առարկայի դասավանդման տարիներին մեր կատարած վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման, լսարանային փորձարկումների արդյունքում նկատած, արձանագրած դիտարկումների հիմքով: Հոդվածի շրջանակում ներկայացված հիմնախնդիրները տարիների ընթացքում մեր կատարած դիտարկումներն են: Առարկայի կարևորագույն խնդիրներից մեկը դասընթացի կիրառության ոլորտը չպատկերացնելն է, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, խախտված է միջգիտակարգային կողմերով առարկան դիտարկելու մոտեցումը: Թե՛ մասնագետների, թե՛ ուսանողների շրջանակում մի քանի հիմնախնդիրների առաջադրմամբ ներկայացնում ենք եզրահանգիչ դրույթներ, որոնցից առաջնայիններից է այն, որ առարկան վերակարևորման և նոր դիտակետերից վերանայման անհրաժեշտություն ունի: Այս համատեքստում քննության ենք առել նաև այն խնդիրը, որ ուսուցման ցանկալի նախապայման կլինեն արևմտահայերենի և թուրքերենի իմացությունը:

Անդրադառնալով առարկայի հիմնախնդիրներին, առանձնահատկություններին՝ ներկայացնում ենք մեր մեթոդական մոտեցումները, դիտարկումները, որոնք կիրառում ենք դասավանդման ընթացքում: Քանի որ առարկայի դասավանդման մոտեցումները տարբեր են, ինչպես նաև կիրառության ոլորտի հետ կապված կան տարատեսակ պատկերացումներ, ապա առարկան ենթադրում է կարևորված վերաբերմունք, միջգիտակարգային նշանակություն, այլ ոլորտներին սպասարկելու առանձնահատկություն: Համակողմանի եղանակով առարկան դիտարկելով կկարգավորվեն նաև առարկայի կիրառության ոլորտի աղոտ պատկերացումները, արդյունավետությունը, ինչպես նաև այդպես կլուծվի ուսանողների շրջանակում առարկայի ազդեցությունը պահելու անհրաժեշտության խնդիրը:

**Բանալի բառեր՝** *Կոստանդնուպոլիս, պոլսահայ մամուլ, տպագիր մամուլ, դասավանդման հիմնախնդիրներ, դասավանդման մեթոդական առանձնահատկություններ, Թուրքիա, Օսմանյան կայսրություն, Հրանտ Դինք, «Ալօս» շաբաթաթերթ:*

**Համառոտ ներածական:** Կոստանդնուպոլիսը (այժմ՝ Ստամբուլ) 15-19-րդ դարերում և այնուհետև՝ ընդհուպ Հայոց ցեղասպանությունը, արևմտահայ մշակույթի ամենախոշոր կենտրոնն էր. այն իր համազգային ընդգրկումներով ու ներգործությամբ խթանել է ոչ միայն Օսմանյան կայսրության հայկական, այլև բուն Հայաստանի քաղաքների ու գավառների կրոնական, լուսավորական ու մշակութային կյանքը [2, էջ 7]:

Օսմանյան կայսրությունն իր հպատակ ոչ իսլամադավան ժողովուրդների շրջանում մտավոր կյանքի աշխուժացման հանդեպ միշտ էլ բացասաբար է վերաբերվել ու տարատեսակ մեթոդներով (պետական և մասնավոր) բռնացել մամուլի, այդպիսով՝ նաև ազատ խոսքի, նկատմամբ: Թեպետ Օսմանյան կայսրությունում մամուլի նկատմամբ կիրառվում էին տարատեսակ սահմանափակումներ, այնուամենայնիվ Կոստանդնուպոլսում հայ մամուլը շարունակել է զարթոնք ապրել ընդհուպ Հայոց ցեղասպանությունը: Թեև 1915 թվականը ծանր հարված հասցրեց պոլսահայ կյանքի գրեթե բոլոր ոլորտներին, սակայն Թուրքիայի Հանրապետության ձևավորման առաջին տարիներին արդեն պոլսահայ համայնքում սկսել էին որոշ փոքր քայլեր ձեռնարկվել մշակույթի վերագարթոնքի ուղղությամբ [6, էջ 108]: «Առաջին աշխարհամարտն յետոյ տիրող պայմաններու բերումով ամէն բան փոխուեցաւ յանկարծ: Մեր Պոլիսը ամայացաւ իր արժէքներէն, հիները մեծ մասամբ կորսուեցան, նորերը չյաջորդեցին անոնց եւ հետեւաբար ստեղծուեցաւ անջրպետ մը մեր կրթական, մշակութային եւ ընկերային կեանքէն ներս: Թուրքիոյ Հանրապետութեան հաստատումով երկրին մէջ կրօնքը բաժնուեցաւ աշխարհիկ կեանքէն, եւ հետեւաբար սահմանափակուեցան Պատրիարքարանի իրաւասութիւնները, դժուարութիւններ ունեցանք պահպանելու Սահմանադրական իմաստով կազմակերպեալ համայնք մը ըլլալու մեր իրաւունքը եւ մտաւորական դէմքերու պակասին կամ ստեղծուած նոր պայմաններուն բերումով, պահ մը կասեցաւ մշակութային կամ ընկերային կեանքը, դադրեցաւ նաեւ Հայ թատրոնը: Մօտաւորապէս 25-30 տարիներու պէտք եղաւ, մինչեւ որ Հայ կեանքը վերսկսաւ կենդանութեան նշաններ ցոյց տալ ու վերակազմուիլ Պոլսոյ մէջ: Այս շրջանը կը զուգադիպէր Երկրորդ Աշխարհամարտի տարիներուն» [1], [7, էջ 52-59],– այսպէս է նշել պոլսահայ գրող, մտավորական Պետրոս Զոպյանը:

Կոստանդնուպոլսի համահայկական նշանակության ու ավանդած պատմամշակութային ժառանգության մասին գիտահետազոտական գրականության պակաս էրբեք չի նկատվել հայկական աղբյուրներում, ինչը չի կարելի ասել կոնկրետ պոլսահայ մամուլի՝ որպէս առանձին և նեղ ուսումնասիրության ուղղություն ու թեմա լինելու վերաբերյալ, այնինչ պոլսահայ մամուլի պատմության հետազոտությունն ունի գիտական, հասարակական և քաղաքական կարևոր նշանակություն, քանի որ հնարավորություններ է ընձեռում նեղ հայացքի ներքո ուսումնասիրելու ու ուրվագծելու Կոստանդնուպոլսի հայ համայնքի պատմաքաղաքական վիճակը/պատկերը՝ իր բնորոշ առանձնահատկություններով, խնդիրներով, մշակույթով, էլ ավելի համակողմանիորեն պատկերացում կազմելու ազգային փոքրամասնությունների նկատմամբ թուրքական քաղաքականության վերաբերյալ: Կոստանդնուպոլսի հետ մեր պատմական առնչությունները թերևս անխզելի են, քանի որ այդտեղ ունենալով թե՛ պատմամշակութային ավանդված հարուստ և թե՛ արդի պաշարով պոլսահայ համայնք՝ մենք չենք կարող չշարունակել հետազոտել այն և չպահել մեր գիտահետազոտական տիրույթի առանցքում, իսկ դրա հարթակներից է նաև մամուլը:

Պոլսահայ մամուլը, անցնելով բազմապիսի և բազմաթիվ հանգրվաններով, գոյապահպանման պայքար է մղել և «աշխարհացրիւ Հայ ժողովուրդին միջեւ կամուրջ [3]» դառնալով՝ այդ դերը, ինչպես նկատել է Կոստանդնուպոլսի նվիրապետական աթոռի պատրիարք Մեսրոպ Մութաֆյան Սրբազանը, «չէ կատարուած առանց տառապանքի [3]»:

**Հիմնախնդրին առնչվող հետազոտությունների համառոտ նկարագիրը:** Կոստանդնուպոլսի հայկական ժառանգության վերաբերյալ գրականության պակաս թեև երբեք չի եղել մեզանում, այդուհանդերձ պոլսահայ մամուլի միայն առանձին նմուշներ են կոնկրետ գիտական (այլ ոչ թե հանրամատչելի) քննության առնվել, իսկ պոլսահայ մամուլի շրջափոխների վիճակի մասին գիտական անդրադարձները գլխավորապես արևմտահայերեն աղբյուրներում են, այն էլ՝ թերթերի թղթակցության շրջանակում՝ փոքրածավալ հոդվածների տարբերակով: Առկա ուսումնասիրություններն էլ ավելի վաղ շրջանում են արվել: Պոլսահայ մամուլը թե՛ որպես սկզբնաղբյուրային, թե՛ որպես օժանդակ նյութի կարևորելն ադոտ է եղել, ավելին՝ չհասկացված: Այն հայկական աղբյուրներում ուսումնասիրվել է հատկապես օսմանյան շրջանի արևմտահայ թերթերի հետազոտության համատեքստում՝ հաշվելի/մի քանի թերթերի օրինակով, իսկ նորագույն շրջանի (գլխավորապես՝ հանրապետական Թուրքիայում գոյություն ունեցող մերօրյա հայկական թերթերի) նկատմամբ հետազոտական ուղղությունը մասնակիորեն վերսկսվել է Կոստանդնուպոլսի «Ակօս» երկլեզու (հայերեն-թուրքերեն) շաբաթաթերթի<sup>1</sup> առանցքային նշանակություն ունենալուց հետո: Հանրապետական Թուրքիայի շրջանի պոլսահայ թերթերի ուսումնասիրությունը բավականաչափ չի կարևորվել, քանի դեռ «Ակօս» թերթի հիմնադիր-գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի ջանքերով չվերարժևորվեց և չվերաիմաստավորվեց պոլսահայ թերթերի նշանակությունը ոչ միայն հայապահպանության տեսանկյունից, այլև համայնքային օրակարգային բազմաթիվ խնդիրների լուծմամբ:

**Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը:** Հետազոտության նպատակն է ներկայացնել քննվող առարկայի դասավանդման ընթացքում երևան եկող հիմնախնդիրները բուհական դասընթացներում, առարկայի ուղղությամբ տարբեր մոտեցումները, այդ մոտեցումներից բխող թերացումներն ու առանձնահատկությունները, մեթոդաբանորեն հիմնավորել մոտեցումների արդյունավետությունը (կամ՝ հակառակը): Այս ամենի համատեքստում հիմնավորված կերպով առաջարկում ենք լուծման խնդիրներ, մոտեցումներ, մեթոդական միջամտություններ դասընթացի վար-

<sup>1</sup> «Ակօս» երկլեզու (հայերեն-թուրքերեն) շաբաթաթերթը Կոստանդնուպոլսի մեջ նմանատիպ առաջին պարբերական էր. այն հիմնադրվել է 1996 թ. ապրիլի 5-ին, այս մասին ծանոթագրական աղբյուրներ՝ Միրզոյան Է., Հայ-թուրքական հարաբերությունների հարցը «Ակօս»-ի էջերում, Սփյուռքագիտություն: Տարեգիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 127-140, Միրզոյան Է., Հայաստան-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների խնդիրների արծարծումը «Ակօս» շաբաթաթերթի էջերում (1996-2007թթ.), «Հայագիտական հանդես», թիվ 3-4(23-24), Եր., «Մանկավարժ», 2013, էջ 262-271, Միրզոյան Է., Պոլսահայ համայնքի լեզվական խնդիրների արտացոլումը «Ակօս» շաբաթաթերթի էջերում, «Արևելագիտության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ԵՊՀ հրատ., 2013, հ. 8, էջ 252-258, Միրզոյան Է., Հայոց ցեղասպանության թեմայի զարգացման միտումները «Ակօս» շաբաթաթերթի էջերում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007 թթ.), «Ցեղասպանագիտական հանդես», 4(1), Եր., 2016, էջ 96-105, Միրզոյան Է., Հրանտ Դինք. դրվագներ կյանքից և խմբագրական գործունեությունից, «Ցեղասպանագիտական հանդես», 5(1), Եր., 2017, էջ 175-183, Միրզոյան Է., Ազգային ինքնության խնդիրը «Ակօս» երկլեզու շաբաթաթերթում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007), «Հայագիտության հարցեր», 1(10), Եր., 2017, 101-117:

ման ընթացքում, ինչպես նաև ներկայացնում ենք առարկայի ուղղությամբ անհրաժեշտ դիտարկումների վերանայում:

**Հետազոտության նորույթը:** Վեր են հանվել առարկայի առանձնահատկությունները, այդ առանձնահատկություններով պայմանավորված՝ առարկայի վերանայում ու վերակարևորում, ինչպես նաև հետազոտվել և ներկայացվել են առարկայի այն հիմնախնդիրները, որոնց ուղղությամբ մեր առաջադրած դիտարկումների, հիմնավորված մոտեցումների արդյունքում առարկայի ուսուցման արդյունավետության հնարավորություններն ավելի ճկուն կլինեն:

**Հիմնական նյութի շարադրանքը և հիմնախնդիրը:** Պոլսահայ մամուլի պատմության ոչ միայն ուսումնասիրությունը, այլև այն որպես առարկա դասավանդելը չեն կարող լինել միայն մեկ շրջափուլի շրջանակում, թեև յուրաքանչյուր շրջափուլ այնքան հարուստ է, որ առանձին դասընթացի նյութ կարող է դառնալ. ամեն շրջափուլ պայմանավորված է նախորդ շրջափուլի հետևանքներով ու պարտադրած պայմաններով, այսինքն՝ չպետք է կտրված լինի ներքին անհրաժեշտ շղթայական կապը: Մենք, չըջանցելով Թուրքիայում ընթացիկ իրադարձությունները, որոնցով պայմանավորված էին նաև մամուլի նկատմամբ կիրառվող խստությունները և դրանցից բխող/ածանցվող բացասական հետևանքները (որոնց բնութագրական են թե՛ զարթոնքային, թե՛ անկումային վիճակները), մեր դասավանդման ընթացքում պոլսահայ մամուլի պատմության ուղեգիծը պայմանականորեն բաժանում ենք երկու շրջափուլի՝ Օսմանյան շրջանի ու հանրապետական Թուրքիայի, որում շրջադարձային/առանցքային է եղել Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև առանձին միջանկյալ փուլով ներկայացնում ենք նախացեղասպանական և ցեղասպանական տևական ընթացքում մամուլի ներկայացուցիչների, առաջատար դեմքերի նկատմամբ գործադրվող բռնությունները, ցեղասպանական գործողությունները:

Առարկան գրեթե մշտապես ներկայացվել է որևէ այլ առարկայի շրջանակում՝ ընդհանուրի մեջ՝ թե՛ գրականության համատեքստում, թե՛ սփյուռքահայ, արևմտահայ կամ ընդհանուր հայ մամուլի համատեքստում, այսինքն՝ այն՝ որպես առանձին ուսումնասիրության ու ուսուցման առարկա, կարող ենք ասել՝ չի եղել [4 էջ 32], [5, էջ 6-44]: Կամ էլ դիտարկվել է առանձին շրջաններով՝ օսմանյան շրջանը ներկայացնելով արևմտահայ մամուլի պատմության շրջանակում, իսկ հանրապետական շրջանը՝ սփյուռքահայ: Իսկ ընդհանուր և ոչ ընդհատված ուղեգծով շրջափուլերի ուսումնասիրությունը մեծապես կօգնի հասկանալ համայնքում տպագիր մամուլի զարգացման ուղղություններն ու սկզբունքները՝ իրենց ընթացքով և պատճառահետևանքային կապով:

Առարկայի դասավանդման ուղղությամբ և ուսումնասիրության թերացումներից բխող առկա *հիմնախնդիրներից* են՝

- *Մամուլն ուսումնասիրելու գիտական էթիկայի բացակայությունն ու չհասկացվածությունը. տպագիր մամուլը հաճախ է հետազոտվում ըստ անհրաժեշտության, այսինքն՝ որևէ նյութի ձեռքբերման նպատակով: Նախ մամուլից մեծ մասամբ օգտվում են կոնկրետ որևէ նյութ հղելու, որևէ նյութի ծանոթագրման նպատակով, մինչդեռ մամուլի՝ որպես սկզբնաղբյուրային նյութի ամբողջական հետազոտությունը տարատեսակ այլ թեմաների, ենթաթեմաների լայն ասպարեզ կրացի, այսինքն՝ միջգիտակարգային սպասարկման բազմահնարավոր տիրույթ կձևավորի: Այս իմաստով սկզբնաղբյուրներից օգտվելու խնդիր ևս կա. հղում են մեկ այլ հեղինակի՝ մամուլից մեջբերած նյութերը և ըստ անհրաժեշտության՝ հաճախ անձամբ չօգտվելով տվյալ պարբերաթերթից, չծանոթանալով բնագրային նյութին ու գիտականության բարեխղճությունը շրջանցելով:*

Նկատում ենք նաև, որ կա մոտեցում՝ մամուլը չդիտարկելու որպես սկզբնաղբյուր, սակայն տպագիր մամուլը, անկախ այն բանից՝ անկախ թերթ է, թե՛ ոչ, ժամանակի անդրադարձն է: Օրինակ՝ ինչպե՞ս սկզբնաղբյուրային չհամարել այնպիսի թերթերը, որոնք քարոզական նպատակով են լույս տեսել, և որոնցում կարելի է հանդիպել Հայոց ցեղասպանության իրագործողների քարոզական նպատակով անմիջական թղթակցությունը: Կամ, օրինակ, թուրքերեն թերթից ուղիղ մեջբերմամբ հղվում է նյութ, որը, օրինակ, «մաղված» տարբերակով է թարգմանված մամուլից, ինչպես նաև հղում են արդեն հղված նյութ՝ թուրքալեզու պարբերականից մեջբերված և տվյալ հեղինակի թարգմանությամբ, սակայն հեղինակին շրջանցում են և նշում են միայն թուրքալեզու պարբերականը:

- Դասընթացը չի դիտարկվում բազմագիտակարգային մոտեցմամբ:
- Որպես առանձին առարկա դասընթացի անհրաժեշտությունը կարևորված/ընկալված չէ. ո՞ր մասնագիտությամբ ուսանողների համար է:

• Վերոգրյալից ածանցվող խնդիր, այն է, քանի որ առարկան հաճախ միայն լրագրության տեսանկյունից է կարևորվում, գիտակարգային այլ ոլորտների ուսանողներից պահանջում են, օրինակ, նաև ժանրային ոչ թե ընդհանուր պատկերացում, այլ նեղ մասնագիտական, այս դեպքում՝ լրագրողական մոտեցում:

• Առարկան չի դիտարկվում արևմտահայ մամուլից դուրս՝ որպես նեղ/առանձին հետազոտական ուղղություն, այնինչ առարկայով արևելագիտական, քաղաքագիտական, սփյուռքագիտական և գիտակարգային այլ ուղղությունների ուսանողների համար կոնկրետ Կոստանդնուպոլսի, Թուրքիայի մասին սկզբնաղբյուրային հարուստ տեղեկատվական նյութ կարող է սպասարկել, մինչդեռ Կոստանդնուպոլսը ինքնաբերորոշ է և մամուլի միջոցով նեղ հետազոտմամբ կարող է սպասարկել այլ ածանցյալ ոլորտներին: Ինչ՞որ մի տեղ կարելի է պոլսահայ մամուլը և գրականությունը զուգահեռել, քանի որ Կոստանդնուպոլսում գրական դեմքերը գլխավորապես ձևավորվել են՝ որպես հեղինակներ մամուլի էջերում թղթակցելով:

• Բացակայում է այն ընկալումը, որ դասընթացը կարող է նաև համայնքային մշակութային ժառանգության վերաբերյալ տեղեկատվական սպասարկում կատարել այլ մասնագիտական ուղղություններին:

• Դասընթացի մեթոդական նորարարության բացակայություն. մասնագետ-ուսանող փոխընկալման անհրաժեշտություն ունի, ըստ որի՝ հստակ կրնկալի առարկայի կիրառության ոլորտները:

- Ուսանողների մոտ ձևավորել այն մոտեցումը, որ առարկան կարող է լինել ինչպես սպասարկող, այնպես էլ հիմնական նշանակությամբ ոլորտ: Այս մոտեցման բացակայության արդյունքում նաև նեղ մասնագետներ չեն ձևավորվում, իսկ միայն լրագրողը չի կարող այս առարկայի մեջ լիարժեք մասնագետ դառնալ:

• Մասնագետների խնդիր այն իմաստով, որ թուրքերենի իմացությունը պարտադիր չէ, սակայն ցանկալի է. բացակայում են նեղ մասնագետները:

• Մասնագետներով պայմանավորված՝ չկա հետաքրքրություն այն առանձին առարկա դարձնելու:

• Հետաքրքրությունը չկա, քանի որ կան կիրառության ոլորտի աղոտ պատկերացումներ. ընկալված չեն առարկայից ստացած գիտելիքի կիրառության ոլորտները թե՛ ուսումնասիրողների, թե՛ ուսանողների շրջանակում:

• Այս դասընթացի շրջանակում հետազոտական աշխատանքներ գրելու բարդություն այն ուսանողների լսարանների համար, որոնք արևմտահայերենի իմացության

խնդիր ունեն, իսկ թերթը ուսումնասիրողը պետք է անձամբ/չմիջնորդավորված հետազոտի և ծանոթանա թերթին: Մեր դասավանդման փորձը ցույց է տվել, որ եթե ուսանողները չեն սերում արևմտահայոց ընտանիքներից, չեն անցնում «Արևմտահայերեն» առարկան ուսումնական ծրագրերով, ապա տարրական պատկերացումներ չունեն և չեն հասկանում անգամ լեզվական պարզ արտահայտություններ: Նման լսարանների պարագայում դասախոսը խնդիրը չպետք է շրջանցի և պետք է փորձի այն լուծել տարբեր եղանակներով:

- Կոստանդնուպոլսի հայկական մամուլի արևմտահայերենը համեմատաբար առավել ինքնաբերորոշ է անգամ այն պարագայում, երբ փորձել են հայերենի պահպանման խնդիր դնել մամուլում, այդուհանդերձ լեզուն ծանրացած է թուրքերենով, այսինքն՝ եթե արևմտահայերենի իմացությունը պարտադիր է, ապա թուրքերենի իմացությունը թեև պարտադիր չէ, սակայն ցանկալի է:

- Շրջանցվում է միջավայրը, որով պայմանավորված գործել են թերթերը. չեն պատկերացնում միջավայրի ինքնաբերորոշությունը, քանի որ թղթակիցները անվտանգության տեսանկյունից ներկայացել են ծածկանուններով, հաճախ խմբագիրը տարբեր անուններով որպես մի քանի հեղինակ է հանդես եկել թերթի նույն համարում՝ նորից էլնելով անվտանգության տեսանկյունից, ինչն առանձին ուսումնասիրության թեմա է, ինչպես նաև բնորոշ են ժանրային տարահնար կիրառությունները: Նաև պոլսահայ մամուլի առանձնահատկություններին անծանոթ մարդը չի կարող իմանալ, որ, օրինակ, Կոստանդնուպոլսում թերթը կարող էր համարվել գիտական, սակայն տեխնիկական պահանջներով/ձևաչափով անհամապատասխան լինել մերօրյա գիտական պահանջներին, մինչդեռ բովանդակային իմաստով կարող էր գիտական նշանակություն ունենալ [9, էջ 37-58]:

- Թվային իրականություն: Տեղեկատվական հեղափոխության և թվային իրականության պայմաններում պարբերական տպագիր մամուլի նշանակությունը ինքնասպառվում է: Իրողությունը պայմանավորված է նաև այս ոլորտում տեխնիկական հազցվածությամբ, ինչպես նաև նյութերի արագ հասանելիությամբ, սակայն բացասական կողմեր էլ պետք է արձանագրենք. հաճախ նկատվում են տեխնիկական խափանումներ, իսկ բնօրինակ տարբերակները կա՛մ անհասանելի են լինում տարածական իմաստով, կա՛մ արդեն թերթի ֆիզիկական վիճակի վնասված լինելու տեսանկյունից:

- Մասնագետի առաջ ծառայած վերոնշյալ խնդիրների ու առաջադրանքների վերանայում:

- Կա ժամանակային ընդհատում՝ հնատիպ թերթից երկարամյա կտրված և հեռավոր ժամանակահատված ուսումնասիրողի ու ժամանակաշրջանի միջև:

**Եզրակացություն և եզրահանգիչ դրույթներ:** Այսպես, վերոնշյալ խնդիրներն արդիական են. դրանք քիչ չեն, ինչպես նաև առարկան վերակարևորվելու անհրաժեշտություն ունի: Թեմայի վերաբերյալ մերօրյա ակադեմիական աշխատանքներ՝ հիմնված պոլսահայ մամուլի պատմաժամանակագրական ուսումնասիրության վրա, գրեթե բացակայում են: Մոտեցումն էլ հստակ չէ. հիմնականում ուսումնասիրվում են կուսակցական թերթերը, որքան էլ, որ թերթերը Կոստանդնուպոլսում անկախ չեն: Իսկ մնացյալ պարբերականները գրեթե շրջանցված են. ուսումնասիրվում են որպես օժանդակ աղբյուր՝ հանրամատչելի բնույթի, բայց առանձին ուսումնասիրության մոտեցում չկա: Կառուցվածքագործառության, սոցիոլոգիական, տիպաբանական մեթոդներով աշխատանքներ չկան:



**Դասավանդման առանձնահատկություններն ու մոտեցումները:** Գլխավոր խնդիրներից մեկը ուսանողության համար՝ առարկայի իմացության արդյունավետությունը, անհրաժեշտությունը, կիրառության ոլորտները նշագծելն է: Անհրաժեշտ է ուսանողներին օգնել հասկանալ պոլսահայ թերթերի հետազոտության կարևորությունը՝ որպես սպասարկող աղբյուր՝ համայնքի ինքնաբերորոշությունը հասկանալու համար: Պոլսահայ մամուլն ուսումնասիրելիս ուսանողը պետք է կարողանա սահմանել նաև հետևյալ մոտեցումները հասկանալու անհրաժեշտությունը.

**Թերթի՝**

- տիպաբանական առանձնահատկությունները,
- գործառնության նշանակությունը,
- թիրախային նշանակությունը,
- գործունեության միջավայրը կամ առարկան,
- ծագման/հիմնադրման պատկանելիությունը,
- լսարանի բնավորությունը/նկարագիրը,
- թղթակցողների նախընտրելի շարադրանքի՝ թելադրման բնավորությունը,
- հրատարակողներին,
- ընթերցող լսարանը,
- նպատակն ու ծրագրերը,
- թղթակցող հեղինակների խմբին,
- ժանրերը,
- ձևավորումը,
- պարբերականությունը
- թեմատիկ ուղղվածությունը
- ազդեցությունը և հետևանքները:

**Դասավանդման ընթացքում կիրառվող և ցուցաբերվող դասախոսական մեթոդական մոտեցումներ:** Քանի որ ուսանողները միայն պասիվ լսողներ չեն, այլև մասնակից են՝ որոնողական, հետազոտական, ինտերակտիվ/փոխազդող, ապա դասավանդման մեթոդական միջամտություններով դասախոսը պետք է այս առարկայի շրջանակում էլ ապահովի նրանց մտավոր ակտիվությունը, պրոֆեսիոնալ մտածողությունը: Ուսանողները սովոր չեն մտնել երկխոսության մեջ դասախոսության ընթացքում, բայց երբ դասախոսը նրբորեն օգնում է՝ ուսանողը վարժվի այն կերպին, որ չպետք է վախենա արտահայտել կարծիք և փոխգործակցել դասախոսի հետ նման վարման մեթոդներով:

Այս առարկայի շրջանակում դասախոս-ուսանող հնարավոր փոխգործակցության եղանակներից է որևէ թերթի ուսումնասիրության արդյունքում անհատական կամ ինքնուրույն աշխատանքի կազմակերպում-ներկայացումը՝

- ես՝ թյուրքագետ,
- ես՝ լրագրող,
- ես՝ ստեղծագործող,
- ես՝ թղթակից,
- ես՝ խմբագիր,
- ես՝ տարածաշրջանային վերլուծաբան,
- ես՝ թարգմանիչ,
- իմ խոսքը:

Այսպես, նկատի առնելով նշված խնդիրները և որոշ հանգամանքներով պայմանավորված առարկայի առանձնահատկությունները հարկ է առարկայի արդիականությունը կարևորել որպես առանձին առարկա/թեմա ընդունելու մոտեցմամբ, քանի որ պոլսահայ մամուլի միջոցով բացահայտում էս մի միջավայր, որի կարևորումը մեզ համար մեր պետական բոլոր ուղղություններում մշտապես լինելու է արդիական, քանի որ մեր տարածաշրջանն է թելադրում այդ անհրաժեշտությունը:

## PROBLEMS AND PECULIARITIES OF TEACHING THE SUBJECT "HISTORY OF THE ARMENIAN PRESS OF CONSTANTINOPLE"

**Mirzoyan Elina**

*PhD in Philology*

*YSU, The Armenian Genocide Museum-Institute,*

*The Military Academy named after*

*Vazgen Sargsyan of the Armenian Ministry of Defense, Armenia*

*elina-mirzoyan@ysu.am*

### Abstract

The aim of our research is to study and present the peculiarities of teaching the subject "History of the Armenian Press of Constantinople", the problems fixed within the subject. In this regard, we consider necessary theoretical, practical and methodological innovative approaches in this direction.

Approaches to teaching the subject in curricula are different: we have considered those features, manifestations, main approaches, justifying the approach that we practically apply in teaching the subject. As a result of the lack of an interdisciplinary approach to the subject, the understanding of the applied area of the subject is impaired in both professionals and students. The subject is specific, which implies a flexible approach, as a result of which the purpose of teaching the subject, problems, efficiency, and learning outcomes will not be affected.

Our study was based on the collection of statistical data, their generalization, classroom tests that we observed and recorded during the years of teaching the subject. The problems presented in the article are our long-term observations. One of the most important problems of the subject is not to present the scope of the course, since, as we have already mentioned, the approach to considering the subject from interdisciplinary aspects is violated. Having set a number of challenges for the experts and students, we give our final conclusions, one of which is that the subject needs to be rethought and considered from new perspectives. In this context, we also considered the issue that knowledge of Western Armenian would be a desirable prerequisite for learning.

Taking into account the problems and characteristics of the subject, we present our methodological approaches and observations that we use in the teaching process. Since the approaches to teaching the subject are different, and there are also different ideas associated with the field of application, the subject acquires special importance, interdisciplinary significance. As a result of a comprehensive consideration of the subject, vague ideas about the scope of the subject and its effectiveness will also be resolved. This will also address the need to maintain the influence of the subject among students.

**Keywords:** *Constantinople, Armenian Press of Constantinople, print media, challenges of teaching, methodological characteristics of the teaching, Turkey, Ottoman Empire, Hrant Dink, "Akos" weekly newspaper.*

## ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ И ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ДИСЦИПЛИНЫ «ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ПРЕССЫ КОНСТАНТИНОПОЛЯ»

**Мирзоян Элина**

*кандидат филологических наук*

*ЕГУ, Музей-институт Геноцида армян,*

*Военная академия им. Вазгена Саркисяна МО РА, Армения*

*elina-mirzoyan@ysu.am*

### Аннотация

Цель нашего исследования – выявить особенности преподавания предмета «История армянской прессы Константинополя», а также представить проблемы, с которыми мы столкнулись в процессе

преподавания. Для этого мы считаем необходимым осветить теоретические, научно-практические, методологические инновационные подходы к преподаванию данной дисциплины.

В разных учебных программах используются разные подходы к преподаванию рассматриваемой дисциплины. В рамках статьи мы изучили особенности этих учебных программ, приоритетные подходы, обосновали выбор подход, который мы применяем на практике при преподавании дисциплины «История армянской прессы Константинополя». Из-за отсутствия междисциплинарного подхода к предмету нарушается понимание его прикладной роли как для специалистов, так и для студентов. Дисциплина сама по себе является специфичной, что предполагает гибкость при выборе методического подхода. В итоге не должны пострадать цель, задачи, эффективность обучения и результаты образовательной программы.

Наше исследование было проведено на основе сбора, обобщения статистических данных, полученных нами за годы преподавания дисциплины, а также сведений, зафиксированных нами в ходе тестирования программы дисциплины в аудитории. Основные проблемы, представленные в рамках статьи, – это наши наблюдения на протяжении многих лет. Одной из наиболее важных проблем в преподавании предмета является отсутствие представления об области применения материала курса, поскольку, как мы уже отмечали, нарушен подход к рассмотрению предмета в междисциплинарном аспекте. Нами было рассмотрено также несколько основных проблем, отмеченных и специалистами, и студентами. В результате их изучения мы представили заключительные положения нашего исследования, наиболее приоритетным из которых является то, что предмет нуждается в переосмыслении и пересмотре с новых точек зрения. В этом контексте мы рассмотрели вопрос о предварительном условии до начала обучения: было бы желательным владение западноармянским и турецким языками.

Обращаясь к проблемам и особенностям предмета, мы представляем наши методологические подходы, наблюдения, которые применяем в процессе преподавания. Поскольку в преподавании предмета используют самые разные подходы, а также существуют различные представления о том, в какой области можно применить знания, полученные по окончании курса, то предмет имеет специфичную междисциплинарную значимость в других областях. В результате комплексного рассмотрения проблемы преподавания предмета будут скорректированы наше представление о прикладном применении предмета и его эффективности. Таким образом будет решена проблема необходимости сохранения актуальности предмета для учащихся.

**Ключевые слова:** *Константинополь, армянская пресса Константинополя, печатная пресса, проблемы преподавания, методические особенности преподавания, Турция, Османская империя, Грант Динк, еженедельник «Акос».*

## Օգտագործված գրականության ցանկ

1. «Մարմարա» օրաթերթ, Կ. Պոլիս, 21.11.1988:
2. Խառնադան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2007:
3. Հայ Մամուլի դերը, «Ժամանակ», օրաթերթ, Կ. Պոլիս, 13 հոկտեմբեր, 1994:
4. Հայ մամուլի պատմություն (18-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ), ծրագիր, կազմ.՝ Խառնադան Ա. Ա., Մարտիրոսյան Ն. Ն., Պետրոսյան Դ. Վ., Եր., ԵՊՀ, 2016, [http://publishing.yu.am/files/Hay\\_mamuli\\_patmutyun.pdf](http://publishing.yu.am/files/Hay_mamuli_patmutyun.pdf):
5. Հովսեփյան Մ., Արևմտահայ մամուլի պատմություն (1832-1915թթ.), Եր., ԵՊՀ, 2014, [http://publishing.yu.am/files/Arevmtahay\\_mamuli\\_patmutyun.pdf](http://publishing.yu.am/files/Arevmtahay_mamuli_patmutyun.pdf):
6. Մելքոնյան Ռ., Ավագյան Ա., Ստամբուլի հայ համայնքի արդի վիճակը, Եր., «ՎՄՎ-պրինտ», 2009:
7. Միրզոյան Է., «Մարմարան»՝ հայ մշակույթի հանգրվան, Էջմիածին, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, Ժ, 2011:
8. Միրզոյան Է., Ազգային ինքնության խնդիրը «Ակոս» երկլեզու շաբաթաթերթում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007), «Հայագիտության հարցեր», 1(10), Եր., 2017:
9. Միրզոյան Է., Իթթիհաթականները Կոստանդնուպոլսի «Հայ աշխարհ» պարբերաթերթի (1919 թ.) էջերում, «Յեղասպանագիտական հանդես», 9(1), 2021:

10. Միրզոյան Է., Հայաստան-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների խնդիրների արձարծումը «Ակոս» շաբաթաթերթի էջերում(1996-2007թթ.), «Հայագիտական հանդես», թիվ 3-4(23-24), Եր., «Մանկավարժ», 2013:

11. Միրզոյան Է., Հայ-թուրքական հարաբերությունների հարցը «Ակոս»-ի էջերում, Սփյուռքագիտություն: Տարեգիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2013:

12. Միրզոյան Է., Հայոց ցեղասպանության թեմայի զարգացման միտումները «Ակոս» շաբաթաթերթի էջերում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007 թթ.), «Ցեղասպանագիտական հանդես», 4(1), Եր., 2016:

13. Միրզոյան Է., Հրանտ Դինք. դրվագներ կյանքից և խմբագրական գործունեությունից, «Ցեղասպանագիտական հանդես», 5(1), Եր., 2017:

14. Միրզոյան Է., Պոլսահայ համայնքի լեզվական խնդիրների արտացոլումը «Ակոս» շաբաթաթերթի էջերում, «Արևելագիտության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), Եր., ԵՊՀ հրատ., 2013, հ. 8:

*Получено: 11.04.2024*

*Рассмотрено: 15.04.2024*

*Принято: 08.05.2024*

*Received: 11.04.2014*

*Reviewed: 15.04.2024*

*Accepted: 08.05.2024*

Journal “Education in the 21st Century”, Vol1-11/1/, 2024



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

## EXPLORING THE DYNAMICS OF ESP LEARNING AMONG INTERNATIONAL RELATIONS STUDENTS

**Babayan Amalia**

*PhD, Associate Professor  
Yerevan State University, Armenia  
amalia.babayan@ysu.am*

### Summary

To meet the academic and professional needs of the contemporary language learner, repositioning ESP for Diplomacy at the centre of the English programme at the Faculty of International Relations of YSU has been a significant adjustment, and to organize efficient educational process, along with developing proper educational materials, a deeper knowledge of the learner is an essential requirement.

Based on a survey conducted among II, III and IV year students, the article discusses the students' vision of the transfer from General English to ESP, the dynamics of the evolution of their ESP language awareness combined with the advance of their self-awareness and personal growth. The cognitive transition from General English to ESP requires certain time, when students gradually come to realize the specifics of the profession they have chosen. The rigorous curriculum, academic requirements, intensive educational programmes and profession-oriented student life, contribute to the dynamic development of personal growth and approaches.

Having clear orientation of their goals, motivations, learning strategies and professional outlook, students demonstrate a firm resolve to acquire Diplomatic English in the university environment, claiming that Language Centres are best at teaching General English.

**Keywords:** *ESP, diplomatic English, language awareness, educational goals and motivations, Language Centre.*

**Introduction.** Language learning is one of the key components of education for students of International relations. And it is no coincidence, that apart from English as the first foreign language, students at the Faculty of International Relation of YSU have to choose at least one more from among ten other foreign languages, for language is not merely a string of communication, but also a window into the soul of a culture, its history and its worldview [9, page 29].

The Faculty teaches ESP – English for Specific Purposes, since it is goal oriented and focused, designed for the specific learners, according to the learners' academic and professional needs [8, page 30], which in our case is English for Diplomacy or Diplomatic English. In the panorama of English language teaching, the period of 1990 to 2020 saw ESP grow to a mature discipline of global importance [7, page 24], and many scholars and practitioners today urge to reposition ESP at the centre of an English programme, thus capitalizing the full resources of a department and its staff [1, page 145].

Given the scarcity and unavailability of teaching literature for diplomatic English, and based on the Faculty curricula with distinctly designed professional perspectives, the staff of our Department of Diplomatic Service and Communication has authored around seven textbooks and manuals for different levels, which have been implemented successfully.

However, the major aspect of education, including language learning and teaching, is the learner with his/her cognitive competence, emotional constitution and concrete, practical outlook. As Howard Gardner states: 'The biggest mistake of past centuries in teaching has been to treat all students as if they were variants of the same individual and thus to feel justified in teaching them all the same subjects the same way' [5, 41]. The levelling school attitudes have deprived many learners of their creative, all-embracing vision of world-perception, that resonates with A. Einstein's words 'It is nothing short of a miracle that modern methods of instruction have not yet entirely strangled the holy curiosity of inquiry' [3, page 34].

After grueling school-leaving exams, tests, and other educational musts, being trained to think and learn via frames instilled by teachers for years, teenagers find it difficult to clearly define their life and value-system vectors. That may be one of the reasons why many freshmen still urge to continue in the same pattern.

At the university, however, without the usual ‘must-do’ psychological support from adults, in the ‘free flight’, some stumble in taking up the full responsibility for their studies. Gradually an acute, increasing self-awareness and newly assessed life perception switch in with a clear realization that making viable decisions and choices is now only the prerogative of their own. And the professors are there just to open new doors and opportunities.

It is a time of serious personality growth that includes the conventional self-analyzing objectives, such as developing self-awareness and identity, gaining expert knowledge and nurturing personal potential [10, page 1].

The quicker and more flexible the student is in the acceptance of his/her new transformational status, the more efficient further education process evolves. Students develop individual fresh approaches towards the content, the process and the efficiency of their education, they set their own new guidelines, goals and plans of action. This natural process of personal growth in due time undergoes multiple changes on the road to perfection. Knowing how students identify themselves becomes interesting and incredibly useful [4, page 6].

Thus, in this mosaic of students’ cognitive development and self-awareness, we are trying to trace the trends of the dynamics of students’ perceptions about learning and perfecting their command of diplomatic language as ESP, following the well-known statement that the best way to improve education is to involve those who are affected by it the most – students and teachers. A better understanding of the phenomena could lead to beneficial changes or adjustments in the teaching and materials development.

**Research questions.** The research questions the present study pursues are grouped into three clusters that aim to track the dynamics of students’ L2/ESP awareness in the course of the three years of language learning at the university, and get glimpses of how the progression need – objective – motive – goal – action operate [2, page 101].

The first set of questions pertains to students’ goals, motivations, language learning strategies, achievement criteria, progress control and feedback.

The second group focuses on students’ individual perceptions and judgements regarding the tandem of the evolution of personal self-awareness and the L2 learning for ESP.

The final part of the research concentrates on the students’ opinions concerning the practice of ESP learning in the university/academic environment as compared to that in Language Centres.

**Methodology.** From the onset it was planned that the present research is to be a small-scale study. The idea behind the methodology was to offer the II, III and IV- year students a questionnaire to fill in on the spot, without any preliminary hint or preparation.

At the Faculty the students of every year are split into seven groups of 17-20, each with a different professor. Classes are conducted simultaneously. Due to this fact the survey was organized in all the seven groups at the same time, thanks to the support and good will of my colleagues.

After the distribution of the questionnaires, a time limit of 20 minutes was set (another condition of the survey). This did not allow the students to have any common space or time for the discussion of the questionnaire with their peers. The tactics used secured individual, original and non-biased responses, which initially was the goal of the applied research method.

The completion of the questionnaire was voluntary, and the final yield of the numbers of participants was as follows: II year – 31 respondents; III year – 33 respondents; IV year – 31 respondents, a total of 95.

To get a better picture of the outcome, a reference to the students’ workload of ESP should be made. Our Department takes up the L2/ESP teaching starting from the II year of the Bachelor’s

program. But students begin studying ESP from the very beginning of the course: they have 120 academic hours of English in the I year.

The distribution of ESP academic hours at our Department is as follows: II year – 180 h., III year – 150 h., IV year – 90 hours. This substantial number of hours allocated to the teaching of diplomatic English aims at attaining the B2-C1 level by the end of the Bachelor's programme and is incorporated into such courses as "Diplomatic Intercourse" (II yr.), "Insights into Diplomatic Protocol" (III yr.), "Diplomatic Correspondence" (III yr.) and "Translation and Interpretation" (IV yr.).

Despite the limited arsenal of research tools implemented in the study – the questionnaire and the quantitative and qualitative analyses of the acquired data, it has generated interesting findings.

### **Findings**

***The comprehension of ESP acquisition.*** As mentioned above, six out of the ten questions of the Questionnaire inquire into students' goals, motivations and achievement criteria in reference to foreign language learning, as well as the strategies and ways of progress control they apply.

The discussion of the outcome by topical issues renders most appropriate, as the study has revealed both common and diverse features in the dynamics of L2 awareness among students of different years.

Thus, the perception and interpretation of the *purpose* of L2/ESP learning clearly vary among II, III and IV year students.

The second year students define it in a rather generic manner, describing in common generalized wordings, such as 'you can't be a diplomat without knowing English' (15 reps), 'to learn the professional terminology and vocabulary of English' (9 ans), 'to have a better command of the language' (5 ans), 'to present my country internationally' (15 ans).

While the III year students see their goals quite clearly: 'to be fluent and free in the profession and be a successful specialist' (19 reps), 'to be able to analyze data' (1 rep), 'to avoid problems born of language incompetence' (2 reps) or 'for professional growth' (6 reps). This difference in estimates shows that in a span of one year students start to acknowledge what particularly they need to learn a specialized language for. An advanced answer 'for the participation in negotiations' (1-III yr., 2-IV yr.), already draws a concrete language implementation framework.

Still, only the fourth year students, apart from the already said, specify that one of the objectives of ESP study is 'to fully comprehend the literature and different materials on the profession' (5 ans). In the final year of the BA programme we can see a comprehensive, well-rounded approach to the goals of the professional language, aiming to dig deeper into the craft of their choice.

The figures indicate the natural flow of the dynamics of ESP language awareness from general, vaguely defined characteristics to a more specific, professionally oriented approach.

Similar dynamics is traced in the students' responses on the *motivation* of ESP learning, from more generic to more specific ones, describing the acquisition of communication skills as the primary stimuli, including intercultural communication skills, speaking fluency, understanding the speech of the interlocutor, then passing to effective communication in international forums and the ability to duly represent one's home country in an international setting. The choice of the priorities is equally distributed among all the three years: II year – 14 responses, III year – 14 responses, IV year – 12 responses.

Among the evenly distributed motivation points are also 'the love for the language' and the urge 'to reveal for themselves new cultures as well as the politics of the country speaking that language' (13 ans), as understanding another language leads to the understanding of another culture, another way of experiencing the world, which is just another motivation point for ESP learning students. This is also complemented by the desire to be able to travel on one's own freely.

However, with the III and IV year students we can see a more specific, professionally patterned approach to the motivational grounds of ESP learning, which distinctly connects it with

‘further work and educational opportunities’ (21 ans). Most students consider that a proper L2/ESP command is a means that helps to shape ‘quality specialists’, secure ‘a job overseas’, ‘brings success in international forums of debates and discussions’ (13 ans) and will favour ‘a chance for one’s further life-long education by taking courses abroad or participating in different international programmes’ (19 ans).

The evolution of the outlook for the motivation of ESP learning. The way the students recognize the need or desire to better their English [11, page 14] is obvious: we see a markedly traceable shift from sophomores to undergraduates, another evidence of how quick and dynamic the process of the insight into professional maturity evolves at young age given the proper environment (in our case – the university life). The process of spiritual growth and changes in the attitudes to achieve one’s full potential [10, page 2] occurs rather swiftly.

The motivational goals of students align with the *achievements criteria* that they envisage. Only 4.3% of the respondents have chosen university grades and professors’ assessment as achievement criteria (II yr. – 4 students, III yr. – 1 student).

For a significant part of students, the ultimate and realistic achievement criteria for ESP learning is ‘the mastery of the professional language’, the ability to conduct ‘uninhibited, fluent communication, both written and oral, during discussions, debates, presentations on professional issues, or negotiations’, as well as the enhancement of their own ‘competitiveness in international academic scholarship programs’ (30.4%).

Another criterion marked by students as a language command indicator is their ‘proficiency of fluent communication with foreigners at work’, plus their ‘illegibility for overseas jobs’ (20.8%). Whereas, 5 of the III year students and 2 II-years believe that the acquisition of skills *of a translator and interpreter* is an important factor in the language command assessment.

It is noteworthy that the III year students have demonstrated a more comprehensive approach to the issue, treating it as a complex unity of interrelated and mutually conditioned set of objectives.

Another detail not to overlook is the fact that further education-related criteria dominate with the III year students (15 ans), while job-related responses are definitely the choice of the IV year students (14 ans).

The picture of the dynamics of attitudes is clear and anticipated: the statistics demonstrates a strong real-life vision of factual correlation of different ESP learning motivation criteria.

The Questionnaire also asked the students to reflect on the *strategies, resources and time management issues* during the L2/ESP acquisition.

The number of the responses from the III and IV year students is considerably low, 32 in total, 1/3 of the respondents. Whereas the II year students are quite active with 37 varying responses.

Judging by the average results, the accumulative learning strategies are aimed at organizing the language learning process so that it encompasses a high percentage of oral practice, multiple language application opportunities in the forms of contacts, discussions, active encounters, participation in different events, such as meetings with professional diplomats, and the like.

Mainly IV yr. (17) and III yr. students (5) value such strategies as reading large volumes of professional literature, conducting individual research and being tuned in to current news through English-speaking media channels.

But the responses of the IV year students make up a special niche on this issue. They bear distinct language-specific characteristics. Undergraduates/The IV years welcome university/academic lectures in English, the practice of holding seminars and debates in English, attending additional sessions in English, in order to grasp the multi-vector contents that embrace advanced grammar and more versatile topical pick on contemporary global issues complemented with slideshows and other visual aids. That is – they anticipate a comprehensive language teaching and learning process with the implementation of all available means. They also look forward to the application of more interactive and enjoyable methodology, to meet the demands for subject



specific ESP [6, page 167]. They believe that modern educators are expected to be proficient in the use of technology and digital tools to enhance the learning experience. They should also create an inclusive learning environment to foster creativity, collaboration and critical thinking.

The third year students also specify the role of the professors as *the best support and motivation*, highly appreciate their academic help and advice in the choice of professional literature and materials, and wish them to be even more demanding (7 ans).

An intriguing fact is that in the responses of the II year students we find not a single indication concerning the above-said. This cannot be explained by a special attitude towards an individual professor, as the Questionnaire was distributed among 7 different groups with 7 different professors.

From this zero result we may assume that a certain attitude or tendency towards the need of reading and studying special literature on their profession in English has not been formulated yet, and students look at L2/ESP learning simply as a continuation of General English studies to which they have been used from school. Though, judging by the III year students' responses demonstrate, all of these will change rather quickly.

The same logical trend is tracked down in the answers of the II year students to the question "What do I do/What steps do I take to attain my goals?"

The II year students rely heavily on what the university provides (22 reps) and complement that take predominantly with such facilitating means of language learning like films, hobbies and pastimes – all within the framework of emotional, pleasure-generating medium (20 reps).

If videos and films are quite intensively discussed by the II year students (13), only 6 III year students have mentioned them, and almost none from among the IV year students. Most likely, the undergraduates see these strategies as an indispensable part of their ESP learning that have become mundane, common and natural.

Whereas the III and IV year students emphasize *the great importance of daily, regular studies and voracious reading*. The number of the responses with reliance solely on the university curricula diminishes from 11 (III years) to 6 (IV years). The dynamics towards self-regulation and self-determination is evident.

We come across a similar picture when students indicate *the time span of their daily work on ESP*: Nine IV year students and eight III year students mention 2-3 hours daily, and we find only 1 response from among the II year students about the same time span of the daily work. The rest allocate much less time to their ESP studies.

The last part of this section deals with the students' interpretation of the interrelation of *progress control and feedback* in ESP learning.

If, while discussing the achievement criteria, we stated that only 4.3% of the respondents regard university grades and professors' assessments as indicators of achievement, in case of progress control and feedback the picture cardinally changes. 41.8% of the students (46 studs) consider that the university tradition of assessing one's achievements through *exams, tests and teacher feedback* still remains the main criteria of progress control.

In this domain *practice* in all its forms and shapes comes second (27.2% -30).

**Students' Self-Assessment.** As stated in the section of Research Questions, apart from an external look at the components of ESP acquisition, students, quite openly and realistically discuss their individual cognitive and emotional correlation to the process.

Firstly, 2/3 of the respondents acknowledge that it is them and only them who should take the responsibility for the quality of their ESP language learning (62studs).

21 students – 22.3% believe that the responsibility is to be shared between them and the professor of the university, the state and those responsible for the academic curricula – a statement that needs further discussion, which is out of the scope of the present research.

Meanwhile, 11 students transfer all the responsibility for their own language learning to the university, professors, and the surrounding people - a comfortable standpoint for those seeking ease.

Besides speaking of their responsibility for their language learning, students also emphasize their urge to *raise their responsibility level*. They wish to be able to compare their present self with their past achievements, to state their progress.

Students also make reference to the review of their own mistakes. Some speak about the continuous, non-stop perfection process of their own, and need to hold regular self-checks. Considerations on the last two points are especially frequent with II and IV year students. The gap of the III years makes itself notable later, in the IV year. We may assume that self-reflection, self-check and awareness are always there, even if for some reason they subside to the background (IV – 15 studs, - 13.6%).

As to *the timeline of ESP acquisition*, student evaluations widely differ, though the mean assessment is that 3.5-4 years of language studies at the university are sufficient to attain a respectable level of professional language command, especially if additional 1.5 years of Master's course is added.

The functions of the social pedagogue will gain new levels of development in the professional arena, if they try to apply the knowledge of neuro-linguistic programming, as well as the components of fundamental technologies during their activities. Currently, neuro-linguistic programming is no longer a monopoly for the activities carried out by psychologists, psychiatrists, HRM specialists, doctors, and businesspeople. Through the application of various diagnostic, prognostic, preventive and art-therapeutic technologies, the social pedagogue partially involves components of fundamental neuro-linguistic technologies in their practice enabling them to carry out such activities more efficiently.

**Keywords:** *neuro-linguistic programming, functions of the social pedagogue, improvement cycle, non-verbal communication, fundamental technological components.*

# РОЛЬ БАЗОВЫХ ТЕХНОЛОГИЙ НЕЙРОЛИНГВИСТИЧЕСКОГО ПРОГРАММИРОВАНИЯ В КОММУНИКАТИВНОЙ МОДЕЛИ СОЦИАЛЬНОГО ПЕДАГОГА

**Казарян Аревик Фаносовна**

*кандидат педагогических наук, доцент кафедры педагогики,  
Ереванский государственный университет,  
Республика Армения, Ереван  
e-mail: arev.ghazaryan@ysu.am*

## Аннотация

Применение искусственного интеллекта в различных областях – это вызов, позволяющий быть конкурентоспособным в профессиональной сфере. Веление времени – повышение профессионального акме, постоянное совершенствование функций специалистов и их переподготовка, принимая за основу междисциплинарные связи различных наук, освоение и применение новейших технологий. В этом плане не остается в стороне и социальный педагог, который использует различные технологии в коммуникативной модели во время консультации с ребенком, в надежде повысить эффективность своей деятельности. Насколько дальнейшее совершенствование социального педагога рассматривается в контексте интегральных наук, настолько возникает потребность в освоении технологических составляющих смежных наук, что позволит ему в новом качестве и формате выполнять свои профессиональные обязанности. Профессиональные сферы деятельности социального педагога многогранны и поэтому многообразны выполняемые им функции. При таком подходе, чем больше дополнен методический арсенал специалиста-исследователя, тем больше шансов на успех, тем меньше риски. Применение функций социального педагога выйдет на новый уровень развития в профессиональном акме, если он в процессе своей деятельности попробует применить знания по нейролингвистическому программированию, использовать компоненты базовых технологий. В настоящее время нейролингвистическое программирование /НЛП/ перестало быть монополией в деятельности психологов, психиатров, специалистов в области ЧР, врачей и бизнесменов. Применяя различные диагностические, прогностические, профилактические и арт-терапевтические технологии, социальный педагог в процессе своей практической деятельности частично включает компоненты базовых нейролингвистических технологий, которые позволяют осуществлять свою работу более эффективно.

**Ключевые слова:** *нейролингвистическое программирование, функции социального педагога, период совершенствования, невербальное общение, базовые технологические компоненты.*

## Օգտագործված գրականության ցանկ

1. Бендлер Р., Гриндер Д., НЛП, Структура магии, М., 2022.
2. Հարությունյան Ն. Շ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ., Սոցիալական մանկավարժություն, Երևան, 2017, էջ 167:
3. Ковалёв С.В., Основы нейролингвистического программирования. М. 1999, Источник: <https://psychosearch.ru/teoriya/nlp-for-what-you-can-use-and-wherefore-not>, НЛП, 2022.
4. Андреас С., Фолкнер Ч. и др., НЛП. Новые технологии успеха. М., 2001.
5. Дилтс Р., Моделирование с помощью НЛП. СПб., 2000.
6. Satir V., Peoplemaking, Science and Behavior Books, New York: 1974.
7. Нагдян Р., Введение в НЛП, Е., 2023.
8. Алмазов Б., Методика и технологии работы социального педагога, М., 2022.

*Получено: 19.04.2024*

*Received: 19.04.2014*

*Рассмотрено: 26.04.2024*

*Reviewed: 26.04.2024*

*Принято: 08.05.2024*

*Accepted: 08.05.2024*

Journal “Education in the 21st Century”, Vol1-11/1/, 2024



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

# ԵՐԵՒԱՅԻ ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Մելքոնյան Շողիկ

*Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան,*

*Հայաստան*

*shoghik-melkonyan@mail.ru*

## Ամփոփում

Սոցիալականացումը՝ որպես մանկավարժական տարբեր գիտաճյուղերի հիմնախնդիր, արդիական է բոլոր ժամանակներում, քանի որ այն նպաստում է անձի սոցիալական հմտությունների զարգացմանը, հաղորդակցական իրավասության բարձրացմանն ու սոցիալական ինքնության ձևավորմանը: Հետազոտության արդիականությունն պայմանավորված է այն հիմնարար փոփոխություններով, որոնք տեղի են ունենում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: 21-րդ դարում հասարակության զարգացմանը բնորոշ են ինտեգրման գործընթացներ բոլոր ոլորտներում, այդ թվում՝ կրթության: Համընդհանուր ներառականության պայմաններում երեխայի անձի սոցիալականացման գործընթացը նոր նշանակություն է ձեռքբերում: Այս համատեքստում նորովի մոտեցում է ենթադրում սոցիալականացման գործընթացի գործոնների դիտարկումը:

Ներկայացված հոդվածը այդ հիմնախնդրի ուսումնասիրության անբակտելի մասն է, որում ներկայացված են սոցիալականացման կենսաբանական գործոնների վերաբերյալ տարբեր հետազոտություններ, մոտեցումներ դրանց նշանակության մասին:

**Հետազոտության նպատակն է** ուսումնասիրել և համադրել գիտական տարբեր մոտեցումները կենսաբանական գործոնների կարևորության վերաբերյալ երեխայի սոցիալականացման գործընթացում:

**Հետազոտության նորույթը:** Ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսակետներ, և դրանք դիտարկվել են որպես հիմնավորումներ կենսաբանական գործոնների որոշիչ դերի վերաբերյալ երեխայի անձի սոցիալականացման գործընթացում:

*Բանալի բառեր՝ սոցիալականացում, կենսաբանական գործոններ, ժառանգականություն, գեներ, օժտվածություն, խառնվածք, ընդունակություններ, բնավորություն, կոնվերգենցիա:*

## Հիմնախնդրին առնչվող ընթացիկ հետազոտությունների և հրապարակումների վերլուծություն:

Սոցիալականացումը, ինչպես հայտնի է, իրականացվում է տարբեր իրավիճակներում, որոնք առաջանում են մարդու վրա բազմաթիվ հանգամանքների ազդեցության արդյունքում, և որոնք պահանջում են որոշակի վարք ու գործողություններ: Նման հանգամանքները կոչվում են սոցիալականացման գործոններ (Մուդրիկ Ա. Վ., Գոլովանովա Ն. Ֆ. և այլք): Սակայն ոչ բոլոր գիտնականներն են ընդգծում կենսաբանական գործոնները: Մինևույն ժամանակ մյուսները (Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Պ., Ղուկասյան Լ. Գ., Կրիվչենկո, Լ. Պ., Մոխնաչ Ն. Ն. և այլք) շեշտում են կենսաբանական գործոնների որոշիչ դերը սոցիալականացման մեջ: Այսպես, օրինակ, նրանք մարդկային ցեղի շարունակության հիմք են համարում ժառանգականությունը. ժառանգականությամբ են որոշվում նաև մարդու որոշ հիվանդություններ, որոնք, մեր կարծիքով, տարբեր կերպ են ազդում երեխայի սոցիալականացման վրա:

Հետազոտությունները (Ա. Թոմաս, Ս. Չեզ և այլն) բացահայտել են խառնվածքի կենսաբանական բնույթը և նրա կապը մարդու հուզականության ու ակտիվության հետ: Եվ այս տեսանկյունից կարող ենք ասել, որ խառնվածքը ոչ միայն նպաստում է վարքի որոշ տեսակների ձևավորմանը, այլև ազդում է սոցիալականացման աստիճանի և որա-

կի վրա: Կենսաբանական կոնվերգենցիայի տեսությունը (Վ. Շտեռն, Է. Կոնկլին) ճանաչում է երկու գործոնի դերը՝ կենսաբանական ու սոցիալական: Այնուամենայնիվ, չնայած այս խնդրի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններին՝ հասարակության և կրթության զարգացման նոր համընդհանուր ինտեգրման պայմաններում երեխայի սոցիալականացման վրա կենսաբանական գործոնների դերի և ազդեցության մասին հարցերը մնում են ոչ բավարար ուսումնասիրված:

**Հետազոտության նպատակն է** ուսումնասիրել և համադրել տարբեր գիտական մոտեցումները կենսաբանական գործոնների կարևորության վերաբերյալ երեխայի սոցիալականացման գործընթացում:

**Հետազոտության նորույթը:** Ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսակետներ, և դրանք դիտարկվել են որպես հիմնավորումներ կենսաբանական գործոնների որոշիչ դերի վերաբերյալ երեխայի անձի սոցիալականացման գործընթացում:

**Հետազոտության մեթոդներն են՝** մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, տրամաբանական ամփոփում, տեսական հիմնավորում:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Մարդու սոցիալականացման գործընթացում որոշիչ դեր է տրվում կենսաբանական գործոնին: Այս համատեքստում կարևորվում են կենսաբանական գործոնների դասակարգման վերաբերյալ տարբեր հետազոտությունները (Է. Էրիկսոն, Ջ. Բոուլբի, Դ. Գոլեման, Մ. Պոսներ, Բ. Լիպտոն և մյուսները): Ուսումնասիրելով այդ հետազոտությունները՝ մենք առանձնացրել ենք կենսաբանական գործոնների հետևյալ տեսակները՝ գենետիկական (ժառանգական գործոններ, գեներ, որոշ ժառանգական նախադրյալներ, հակվածություններ որոշակի հիվանդություններին և այլն), նեյրոկենսաբանական (կապված ճանաչողական և այլ ընդունակությունների հետ, հիշողություն և այլն), ֆիզիոլոգիական ( կապված ֆիզիկական առողջության հետ և այլն), հուզական և հոգեբանական (խառնվածք, հույզերի կառավարում և այլն): Նշված բոլոր գործոններն ազդում են մարդու վարքագծի, հասարակական կյանքում մասնակցության վրա, մի խոսքով սոցիալականացման գործընթացի արդյունավետության վրա:

Կենսաբանական գործոններից է ժառանգականությունը: Ժառանգականությունը «օրգանիզմների՝ իրենց հատկանիշները, հատկությունները պահպանելու և զարգացման առանձնահատկությունները հաջորդ սերունդներին փոխանցելու երևույթն է» [1, էջ 19]:

Ժառանգականության խնդրի վերաբերյալ գիտական գրականության (Կոտովա Ի. Վ., Դուբինին Ն. Պ., Հարությունյան Ն. Կ. և այլն) ուսումնասիրությունը մեզ թույլ տվեց նշել, որ ծնողներից երեխաներին ժառանգաբար փոխանցվում են.

- տեսակային հատկանիշները, որոնք բնութագրում են անհատին՝ որպես մարդկային ցեղի ներկայացուցչի (ուղիղ քայլք, մտածողություն, խոսք և այլն)՝ անկախ ռասայից, ազգային պատկանելությունից,
- արտաքին հատկանիշները (մարմնի կառուցվածք, մաշկի, մազերի, աչքերի գույն, ռասայական հատկանիշներ),
- ֆիզիոլոգիական հատկանիշները (արյան խումբ, ճնշում, նյութափոխանակություն և այլն),
- նյարդային համակարգի հատկանիշները (գլխուղեղի կեղևի կառուցվածքը, բարձրագույն նյարդային գործունեության տեսակը),

- օրգանիզմի զարգացման անոմալիան (դալտոնիզմ, «նապաստակի շրթունք» և այլն):

Ժառանգականությամբ են պայմանավորված նաև որոշ հիվանդություններ:

Հատուկ գրականության ուսումնասիրությունների ու վերլուծությունների (Ավիլո-վա Տ. Մ., Պանսխին Վ. Մ., Բոչկով Ն.Պ., Աղաջանյան Ա. Վ., Տկաչուկ Ե. Ա. և այլք) արդյունքում ընդհանրացրել ենք «Ժառանգական հիվանդություններ» հասկացության մասին պատկերացումները. սրանք գենային կամ քրոմոսոմային մուտացիաների հետևանքով առաջացած հիվանդություններ են, երբ փոխվում է մեկ կամ մի քանի գեն: Իսկ եթե այս գենետիկ փոփոխությունը փոխանցվում է ծնողներից երեխաներին, ապա առաջանում են ժառանգական գենետիկ հիվանդություններ:

Հիվանդությունները բաժանվում են խմբերի՝ կախված ժառանգականության դերի և էկզոգեն գործոնների հարաբերակցությունից.

I խումբ – փաստացի ժառանգական հիվանդություններ, ժառանգական անմիջա-կան ազդեցությամբ:

Այս հիվանդությունների հիմնական պատճառը թուլացած գեներն են, պաթոլո-գիական մուտացիաները, որոնք գրեթե կախված չեն շրջակա միջավայրից: Դրանց թվին են դասվում՝ հեմոֆիլիան, Դաունի հիվանդությունը, Անգելմանի համախտանիշը, աուտիստիկ սպեկտրի խանգարումը և այլն:

II խումբ – բազմագործոն բնույթի հիվանդություններ, որոնց հիմքում ընկած է գե-նետիկական և շրջակա միջավայրի գործոնների փոխազդեցությունը:

Այս հիվանդությունները կապված են սխալ կենսակերպի, վատ սովորությունների հետ՝ հիպերտոնիա, շաքարախտ, խոցային հիվանդություն և այլն:

III խումբ – հիվանդություններ, որոնք պայմանավորված են շրջակա միջավայրի անբարենպաստ գործոնների ազդեցությամբ: Ժառանգականությունն այստեղ գրեթե դեր չի խաղում: Այն կարող է ազդել միայն հիվանդության ընթացքի և տեմպի վրա: Դրանք վնասվածքներն են, այրվածքները և այլն [9]:

II-III խմբերի հիվանդությունները կապված են շրջակա միջավայրի և կենսակերպի հետ: Անկասկած, ժառանգականությունը մեծ դեր է խաղում մարդու առողջության ա-պահովման գործում, սակայն ճնշող դեպքերում շրջակա միջավայրն ու կենսակերպը բարելավում են առողջության և կյանքի որակը:

Մարդու ժառանգական հիվանդությունները տարբեր աստիճանի (շատ ուժեղ, թեթև և այլն) կարող են կամ չեն կարող ազդել մարդու սոցիալականացման գործընթա-ցի վրա: Օրինակ՝ «նապաստակի շրթունք» ունեցող անձը դժվարանում է շփվել շրջա-պատի հետ և զբաղվել որոշակի տեսակի գործունեությամբ: Դա նրան առանձնակի դիրքում է դնում մյուսների համեմատ, միանշանակ խանգարում է կյանքի որոշակի իրավիճակներում, ազդում սովորությունների, վարքագծի ձևերի և այլնի վրա: Կամ դի-տարկենք «աուտիստիկ սպեկտրի» հիվանդությունները, որոնք ուղեկցվում են հաղոր-դակության, ըմբռնման և երևակայության խանգարումներով:

Այստեղ ակնհայտորեն խաթարված է սոցիալական փոխազդեցությունը, որն ազ-դում է սոցիալականացման գործընթացի վրա: Կասկածից վեր է, որ այս հիվանդու-թյունների մասին գիտելիքները կօգնեն մանկավարժներին նման երեխաներին հասա-րակության մեջ ինտեգրվելու հարցերում:

Հայտնի հոգեբան Ա. Գ. Մակլակովը ներկայացնում է մարդու ընդունակություննե-րը որպես անհատական և սոցիալական հատկությունների ամբողջություն, որոնք դրսևորվում են հոգեֆիզիոլոգիական ու անձնական մի շարք գործառույթներով: Հետա-



զոտողը նշում է, որ ընդունակությունները բնածին են, ժառանգական, բայց դրանք դրսևորվում և զարգանում են սոցիալական պայմաններում[4]: Նա այս եզրակացությունն է հանգել կիրառելով ֆունկցիոնալ-գործունեության մոտեցումը ընդունակությունների բնույթի վերաբերյալ:

Մեր հետազոտության համար հետաքրքրություն է ներկայացնում նաև ընդունակությունները դիտարկել ֆունկցիոնալ-գենետիկական մոտեցմամբ, ընդունակությունների կառուցվածքի գործառույթների և ֆունկցիոնալ համակարգերի դիրքից, ընդունակությունների առաջացումը գենետիկայի տեսանկյունից: Որոշ հոգեբաններ (Վ. Դ. Շադրիկով և մյուսներ) կարծում են, որ երեխան ծնվում է գենոտիպային որոշակի ընդունակություններով, զլխավորը մարդու հոգևոր ընդունակություններն են, որոնք դրսևորվում են բարոյական վարքագծով, հոգևոր արժեքների ազդեցության ներքո և այլն:

Ըստ Ե. Պ. Իլյինի ընդունակությունների բնածին լինելու հարցը մնում է բաց: Հեղինակը կարծում է, որ եթե ընդունակություններ ասելով նկատի ունենք այս կամ այն որոշակի կողմերի դրսևորման մակարդակը, գործառույթների հատկությունները, որոնք պայմանավորված են միայն բնածին հակումներով, սա մի բան է, իսկ եթե ընդունակություններ ասելով նկատի ունենք մարդու ցանկացած հնարավորություններ կամ հնարավորությունների ինտեգրալ բնութագիր, սա բոլորովին այլ է [3]:

Ե. Պ. Իլյինի տեսակետների վերլուծությունը ցույց է տվել, որ նա չի ժխտում, որ մարդը ծնվում է տարրական հոգեկան և հոգեշարժողական գործառույթներով: Եթե հաշվի առնենք, որ տարբեր բնութագրերի դրսևորման մակարդակը որոշող հակումները, այդ գործառույթների հատկությունները բնածին են, ապա, հեղինակի կարծիքով, պետք է ընդունել, որ ընդունակությունները (նեղ, այլ ոչ թե ընդհանուր հոգեբանական մեկնաբանությամբ) բնածին են [3]:

Ընդունակությունները կենսաբանորեն որոշված են, բայց դրանք դրսևորվում, զարգանում են շրջակա միջավայրում, գործունեության մեջ և այլն: Դրանք կարող են փոխվել՝ կախված հանգամանքներից, անձի կենսագործունեությունից: Ուստի դրանք կարող են ազդել անձի սոցիալականացման աստիճանի, ինչպես նաև մասնագիտության ընտրության վրա: Եվ այս տեսանկյունից մեզ հետաքրքրեց Վ. Վ. Վիբորնովայի, Ե. Ա. Դունանայի ուսումնասիրությունը, որում հիմնավորվում է, որ կապ կա մասնագիտության ընտրության ու գենետիկայի միջև, և մասնագիտական ընտրությունն իրականացվում է ժառանգական նախատրամադրվածության շնորհիվ: Ըստ այս գիտնականների տվյալների՝ ինտելեկտուալ ընդունակությունները 50-70%-ով որոշվում են գենետիկ նախատրամադրվածությամբ, իսկ մասնագիտության ընտրությունը՝ 40 %-ով [2]:

Սակայն, ինչպես գիտենք, ցանկացած մասնագիտական գործունեության արդյունավետությունը որոշվում է գիտելիքներով, հմտություններով, փորձով, միջավայրի ազդեցությամբ և այլն:

Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ մարդու ընդունակությունները կարող են ազդել նրա սոցիալականացման աստիճանի ու արդյունքների վրա, և ընդունակությունները, նույնիսկ եթե լավ հակումներ ունեն, չեն կարող զարգանալ շրջապատից, գործունեությունից դուրս:

Ս. Լ. Ռուբինշտեյնի հետազոտության վերլուծությունը ցույց է տվել, որ գոյություն ունեն ընդունակությունների տարբեր մակարդակներ, և նրանց որակական հատկանիշը օժտվածությունն է: Իսկ օժտվածության հատկապես բարձր մակարդակը նշվում է «տաղանդ» և «հանճար» եզրույթներով: Նա նշանակալի ընդունակությունների ցուցիչ-

ներ է համարել տեմպը, յուրացման դյուրինությունը, առաջընթացի արագությունը: Առանձնացրել է օժտվածության երկու տեսակ՝ ընդհանուր օժտվածություն՝ ընդհանուր ընդունակությունների մակարդակ, և հատուկ օժտվածություն՝ հատուկ ընդունակությունների մակարդակ: Առաջին խմբում ներառել է ընդհանուր, հանրակրթական ուսուցման ընդունակությունները, իսկ երկրորդ խմբում՝ տեխնիկական, երաժշտական և այլ ընդունակությունները [7]:

Ըստ Ա. Գ. Մակլակովի սահմանման՝ դա ընդունակությունների յուրահատուկ համադրություն է, որը մարդուն հնարավորություն է տալիս հաջողությամբ կատարելու որևէ մեկ գործունեություն [4]:

Գիտական գրականության ուսումնասիրությունը (Բլինովա Վ. Լ., Շադրիկով Վ. Դ., Վիբոռնովա Վ. Վ.) թույլ տվեց մեզ ներկայացնել օժտվածության կառուցվածքային բաղադրիչները.

- անատոմիաֆիզիոլոգիական հակումներ,
- մտավոր-մտածական ընդունակություններ,
- հուզականային կառուցվածքներ,
- ճանաչողական մոտիվացիայի գերիշխող դերը և այլն:

Օժտվածությունը, իհարկե, շատ հաճախ խանգարում է երեխայի սոցիալականացմանը. գաղտնիք չէ, որ օժտված երեխաները բարդ փոխհարաբերություններ ունեն հասակակիցների հետ, հաղորդակցության, փոխազդեցության մեջ և այլն: Իսկ այստեղ անհրաժեշտ է ծնողների, ուսուցիչների օգնությունը, որպեսզի օգնեն երեխային ձեռք բերել նորմալ ինքնաընկալում, ստեղծել վարքի համարժեք մոդել, լավ փոխհարաբերություններ հաստատել հասակակիցների հետ և այլն:

Սոցիալականացման կենսաբանական գործոնները ներառում են նաև խառնվածքը [1]: Խառնվածքը որպես կենսաբանական գործոն դիտարկելը մեզ համար կարևոր է, քանի որ այն ազդում է անձի վարքագծի առանձնահատկությունների, սոցիալական և բնական պայմաններին մարդու հարմարվողականության վրա և այլն:

Նոգեգենետիկ գրականության մեջ խառնվածքն ունի տարբեր սահմանումներ: Այսպես, օրինակ, Բ. Մ. Տեպլովը կարծում է, որ սա հատկությունների ամբողջություն է, որը բնութագրում է հոգեկան գործընթացների ընթացքի և մարդու վարքագծի դինամիկ առանձնահատկությունները, դրանց ուժը, արագությունը, առաջացումը, փոփոխությունը, դադարեցումը և այլն [8]:

Ի. Պ. Պավլովը խառնվածքի հիմքում տեսնում է բարձրագույն նյարդային գործունեությունը, իսկ խառնվածքն անվանում է նյարդային համակարգի տեսակ: Նա նյարդային համակարգին բնորոշ է համարել այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ուժը, հավասարակշռությունը, շարժունակությունը: Ըստ Պավլովի՝ այս հատկությունների համակցությունից են կախված բարձրագույն նյարդային գործունեության առանձնահատկությունները և, ինչը մեզ համար կարևոր է, շրջակա միջավայրի հետ օրգանիզմի փոխազդեցության բնույթը:

Ըստ Ի. Պ. Պավլովի՝ ԲՆԳ (բարձրագույն նյարդային գործունեության) հիմնական խնդիրն է ապահովել մարդու վարքագծի տարբեր ձևերը շրջակա միջավայրի փոփոխությունների պայմաններում [5]: Դրանում տեսնում ենք խառնվածքի ազդեցությունը մարդու սոցիալականացման վրա:

Ընդհանրացնելով խառնվածքի սահմանումները հոգեբանության մեջ (Մակլակով Ա. Գ., Նեմով Ռ. Մ., Ռուբինշտեյն Ս. Լ. և այլք)՝ կարող ենք ասել, որ խառնվածքը հիմնականում ներկայացված է որպես անձի անհատական հոգեկան առանձնահատկու-

թյուն, որը դրսևորվում է վարքի, ակտիվության, հույզերի և այլնի մեջ: Եվ խառնվածք սսելով հասկանում ենք անձի մտավոր գործունեության դինամիկ բնութագրերը:

Վ. Վ. Իզմայիլովը, հղում անելով Ա. Թումասի և Ս. Չեսի դեկավարությամբ անցկացված խառնվածքի ուսումնասիրության արդյունքներին, նշում է այն փաստը, որ ունենալով կենսաբանական բնույթ՝ խառնվածքը կապված է նաև մարդու ակտիվության, հուզականությանն ու մարդամոտությանը:

Խառնվածքը, ըստ Վ. Վ. Իզմայիլովի, համեմատաբար կայուն է, դրսևորվում է վաղ մանկության տարիներին և մեծապես կախված է գենոտիպից: Ա. Թումասի և Ս. Չեսի ուսումնասիրությունների արդյունքները վկայում են խառնվածքի փոփոխականության վրա գեների ոչ հավելումային ազդեցության վարկածի օգտին [6]:

Ինչպես տեսնում ենք, Հիպոկրատի ժամանակներից այն ուսումնասիրողները, որոնք առանձնացրել են խառնվածքի հայտնի 4 տեսակները, խառնվածքը վերագրել են կենսաբանական գործոններին:

Հոգեգենետիկ ուսումնասիրությունները վկայում են բնավորության գծերի ձևավորման, անձի անհատական տարբերությունների վրա գենոտիպի ազդեցության մասին: Խառնվածքն ու բնավորությունը կազմում են անհատի համակարգը, որոշում ընդհանուր պատկերը: Խառնվածքը կարող է օգնել կամ խոչընդոտել մարդու բնավորության գծերի դրսևորմանը: Օրինակ՝ խուլերիկ մարդու համար դժվար է զուսպ լինել, ֆլեզմատիկի համար՝ վճռական և այլն:

Ըստ Վ. Վ. Իզմայիլովի՝ բնավորության գծերը որոշվում են ինչպես գենոտիպով, այնպես էլ շրջակա միջավայրի ազդեցությամբ [6]:

Իսկապես, երկու գործոնների անբարենպաստ համադրությամբ կարող են լինել բնավորության շեղումներ, նույնիսկ պաթոլոգիա: Իսկ եթե առկա է գործոնների բարենպաստ համադրություն (անգամ եթե կա անատոմիայի գենետիկ նախատրամադրվածություն), ապա բնավորության մեջ պաթոլոգիական շեղումներ չեն լինի: Որոշ դեպքերում բնավորության ձևավորման գործում մեծ ներդրում ունի գենետիկական գործոնը, որոշներում՝ շրջակա միջավայրը:

Բայց մի բան անվիճելի է, որ անհատական առանձնահատկությունները, ըստ Վ. Վ. Իզմայիլովի, բարդ հատկանիշներ են միջանձնային փոփոխականության որոշման մեջ, որին մասնակցում են բազմաթիվ գործոններ, այդ թվում՝ ժառանգականությունը [6]:

Կատարված վերլուծությունները թույլ տվեցին եզրակացնել, որ բնավորությունը ձևավորվում է անձնային, անհատական առանձնահատկությունների հիման վրա, իսկ բնավորությունը որոշում է խառնվածքի բովանդակային կողմը. այն ունի բնածին և ձեռքբերովի որակներ:

Սոցիալականացման կենսաբանական գործոնների խնդրի վերաբերյալ մեր ուսումնասիրություններում մենք տեսանք տարբեր տեսակետներ, կարծիքներ, օրինակ Ա. Լ. Գեսելը փաստում է որ սոցիալականացման մեջ ամենակարևորը կենսաբանական գործոններն են: Ամերիկացի հոգեբանը մարդու հասունացման մեջ հիմնականը համարում էր կենսաբանական գործոնները, իսկ զարգացումը՝ դիտարկում որպես շրջակա միջավայրին հարմարվելու ձև [10]:

Ավստրիացի ականավոր հոգեբան Կ. Լ. Բյուլերը նույնպես կենսաբանական գործոնների առաջնահերթության կողմնակիցն էր: Նա որպես վերելք ցույց տվեց մարդկային զարգացման ողջ ուղին՝ կապիկից մինչև հասուն կուլտուրական մարդ մեկ կենսաբանական սանդղակով: Նա պնդում էր մարդու զարգացման կենսաբանական պայ-

մանականությունը, նրա ընդունակությունների ժառանգական բնույթը: Բայց ընդգծում էր, որ առանց վարժությունների, մարդու բնական հակումները լիովին չեն բացահայտվի [10]:

Հումանիստական մանկավարժության և հոգեբանության ներկայացուցիչները (Մ. Մոնտեսորի, Կ. Լորենց, Է. Ֆրոմ և այլք) կարծում էին, որ նույնիսկ մարդու բարոյական որակներն են կենսաբանորեն որոշված: Բայց, ինչպես հայտնի է, ոչ թե որակներն են ժառանգաբար փոխանցվում, այլ հակումները, որոնք կարող են և չդրսևորվել միջավայրի անբարենպաստ պայմաններում [10]:

Գիտնականների թվում կային նաև այնպիսիք (Հելվեցիուս Կ.Ա., Դիդրո Դ.Դ., Օուեն Ռ. և այլք), որոնք գերազնահատում էին սոցիալական միջավայրի դերը: Բայց մարդը պասիվ օբյեկտ չէ, որին ուղղված է փոխազդեցությունը, միջավայրի ազդեցությունը: Նա սուբյեկտ է, ստեղծագործող, արարիչ, և ինքն էլ կարող է փոխել միջավայրն ու ինքն իրեն [10]:

Հետաքրքիր է, որ էթնոմանկավարժության և բանահյուսության մեջ նույնպես անդրադարձել են մարդու որակների վրա միջավայրի և ժառանգականության ազդեցության խնդրին. «Լավ մարդու որդին փուչ չի դուրս գա» (հայ.), «Խնձորը ծառից հեռու չի ընկնում» (ռուս.), «Վատ սերմից մի՛ սպասիր լավ ցեղատեսակ (ռուս.), «երեխան կավ է, մայրը՝ բրուտ» (ուզբեկ.), «Դաստիարակությունը ժառանգականությունից ուժեղ է» (իտալ.), «Երեխան խմորի պես է. ինչպես հունցես, այնպես էլ կմեծանաս» (ռուս.), «Նույն ջեռոցից, բայց տարբեր թափթափաներ» (ռուս.), «Մորը տես, աղջկան ուզիր», «Ծնող դառնաս, ծնողի դադրը կիմանաս» և այլն:

Որոշ գիտնականներ, օրինակ՝ Վ. Լ. Շտերնը, նշում են երկու գործոնի դերը՝ կենսաբանական ու սոցիալական: Վերջինս կարծում էր, որ ծննդյան պահին երեխայի հնարավորությունները բավականաչափ սահմանված չեն, և միայն շրջապատն է օգնում երեխային գտնել ինքն իրեն, կազմակերպում է նրա ներաշխարհը: Եվ երեխան շրջապատից վերցնում է այն ամենը, ինչ համապատասխանում է իր հակումներին:

Այս տեսությունը ստացել է երկու գործոնների «կոնվերգենցիայի (փոխազդեցության) տեսություն» անվանումը, քանի որ նրանում հաշվի է առնվել ժառանգականության և միջավայրի դերը: Այս տեսության էությունն այն է, որ երեխայի մտավոր զարգացումը դիտարկվում է որպես ժառանգականության և շրջապատի ազդեցության տակ ձևավորվող գործընթաց: Կոնվերգենցիայի տեսության հիմնական խնդիրն է հաստատել, թե ինչպես են առաջանում վարքի ձեռքբերովի ձևերը, և ինչ ազդեցություն ունեն ժառանգականությունը և շրջակա միջավայրը դրանց վրա:

Իր տեսության մեջ Վ. Լ. Շտերնը հաշվի է առել այն ժամանակվա երկու հայեցակարգ՝ էմպիրիզմ (մարդը դատարկ տախտակ է) և նատիվիզմ (գոյություն ունեն բնածին գաղափարներ) կարծելով, որ ճշմարտությունը այս հակադիր տեսակետների համակցման մեջ է: Որպես օրինակ նա բերում էր. շրջապատող աշխարհը երեխային նյութ է տրամադրում խաղի համար, և թե ինչպես և երբ նա կխաղա, կախված է խաղային բնագրի բնածին բաղադրիչներից [10]:

Հետագայում կենսաբանական կոնվերգենցիայի տեսությունը մշակվել է բազմաթիվ գիտնականների, օրինակ՝ Է. Կոնկլինի կողմից: Վերջինս պնդում էր, որ կենսաբանական ու սոցիալական գործոնները և շրջապատը համարժեք են: Ըստ նրա՝ «մարդը ստանում է կենսաբանական և սոցիալական ժառանգություն, որոնք գտնվում են բարդ հարաբերակցության մեջ, փոխադարձորեն պայմանավորում են միմյանց լինելիությունը» [1, էջ 91]:

**Եզրակացություններ:** Ներկայացված հիմնախնդրի վերաբերյալ մեր ուսումնասիրություններն ու վերլուծությունները, որոնք թույլ տվեցին հաստատել կենսաբանական գործոնների որոշիչ դերը երեխայի անձի սոցիալականացման գործընթացում: Սակայն այդ գործընթացում կարևոր նշանակություն ունեն նաև սոցիալական գործոնները:

Կենսաբանական գործոնների մասին գիտելիքները կօգնեն խուսափել երեխայի սոցիալականացման դժվարություններից, լիարժեք օգտագործել անձի հնարավորությունները շրջական միջավայրի հետ փոխազդեցության, հասարակության մեջ ինտեգրվելու համար:

**Հետագա հետազոտությունների հեռանկարները:** Երեխայի անձի արդյունավետ սոցիալականացման համար անհրաժեշտ է նաև ուսումնասիրել սոցիալական գործոնների դերը արդի ժամանակաշրջանում:

## ANALYSIS OF THE IMPORTANCE OF BIOLOGICAL FACTORS IN THE SOCIALIZATION OF A CHILD'S PERSONALITY

**Melkonyan Shoghik**

*Shirak State University after M. Nalbandyan, Armenia  
shoghik-melkonyan@mail.ru*

### Abstract

Socialization, as a problem of various pedagogical disciplines, is relevant at all times, since it contributes to the development of personal social skills, increases communicative competence and the formation of social identity. The relevance of the research is due to the fundamental changes taking place in various spheres of public life. In the 21st century, the development of society is characterized by integration processes in all spheres, including education. In conditions of universal inclusivity, the process of socialization of the child's personality acquires a new meaning. In this context, the new approach involves considering the factors of the socialization process.

The presented article is an integral part of the study of this problem, which presents various studies of biological factors of socialization and approaches to their significance.

**The purpose** of this research is to study and compare different approaches to the importance of biological factors in the process of child socialization.

**The novelty** of the study is that various points of view on the problem were studied and analyzed, and they were considered as a justification for the determining role of biological factors in the process of socialization of a child's personality.

**Keywords:** *socialization, biological factors, heredity, genes, giftedness, temperament, abilities, character, convergence.*

## АНАЛИЗ ВОПРОСА О ЗНАЧЕНИИ БИОЛОГИЧЕСКИХ ФАКТОРОВ В СОЦИАЛИЗАЦИИ ЛИЧНОСТИ РЕБЕНКА

**Мелконян Шогик**

*Ширакский государственный университет им. М. Налбандяна, Армения  
shoghik-melkonyan@mail.ru*

### Аннотация

Социализация, как проблема различных педагогических отраслей, актуальна во все времена, потому что она способствует развитию социальных навыков личности, повышению коммуникативной компетентности и формированию общественной идентичности. Её актуальность обусловлена изменениями во всех сферах общественной жизни. В XXI в. общественному развитию присуща интеграция во всех областях, в том числе – в образовании. В условиях интеграции образования социализация личности ребенка приобретает новое значение. В таком контексте предполагается новый подход к рассмотрению факторов социализации.

**Целью** данного исследования является изучение и выявление соотношения различных подходов к определению важности биологических факторов в процессе социализации.

**Научная новизна** – изучены и проанализированы различные подходы к данной проблеме, которые послужили основой для утверждения определяющей роли биологических факторов в социализации личности ребенка.

**Ключевые слова:** социализация, биологические факторы, наследственность, гены, темперамент, способность, характер, конвергенция.

### Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Ն. Վ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ., Սոցիալական մանկավարժություն (բուհական ձեռնարկ) /Հարությունյան Ն. Վ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ., Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 336 էջ:
2. Выборнова В.В., Дунаева Е.М., Актуализация проблем профессионального самоопределения молодежи. // Социологические исследования. 2006, N 4, с. 99-105.
3. Ильин Е.П., Психология творчества, креативности, одаренности// Е.П. Ильин. Санкт-Петербург: Питер, 2009, 448 с.
4. Маклаков А.Г., Общая психология, СПб.: Питер, 2024, 582 с.
5. Павлов И.П., Общие типы высшей нервной деятельности животных и человека. / И.П. Павлов. – Москва. Директ Медиа, 2008, 50 с.
6. Психогенетика. Учебно-методический комплекс. Автор-составитель: Измайлов В.В. Минск, Издательство МИУ 2010, 292 с.
7. Рубинштейн С.Л., Основы общей психологии: Учебное пособие / С.Л. Рубинштейн - Санкт-Петербург: Питер, 2018, 713 с.
8. Теплов Б.М., Психология и психофизиология индивидуальных различий: избранные психологические труды. / Б.М. Теплов – Москва: Издательство московского психолого-социального института. НПО МОДЭК 2009, 638 с.
9. Ткачук Е.А., Семинский И.Ж., Классификация наследственных заболеваний: <https://doi.org/10.57256/2949-0715-2023-2-77-86>.
10. Ярошевский М.Г., История психологии от античности до середины XX века.: Учебное пособие для высших учебных заведений. – 2-е изд. – М.: издательский центр «Академия», 1997, 416 с.

*Получено: 15.04.2024*

*Received: 15.04.2014*

*Рассмотрено: 26.04.2024*

*Reviewed: 26.04.2024*

*Принято: 05.05.2024*

*Accepted: 05.05.2024*

Journal “Education in the 21st Century”, Vol1-11/1/, 2024



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

## К ПРОБЛЕМЕ РАЗВИТИЯ СОЦИАЛЬНОЙ АДАПТАЦИИ У ДЕТЕЙ, ИМЕЮЩИХ НАРУШЕНИЯ ЗРЕНИЯ

**Азарян Роберт**

*Ереванский государственный университет*

*r.azaryan@ysu.am*

**Яйлоян Анна**

*Ширакский государственный университет*

*и.м. М. Налбандяна. Армения*

*yaילוan.A@mail.ru*

### Аннотация

Воспитание, обучение и развитие детей, имеющих нарушения зрения, подготовка их к самостоятельной жизни является важнейшей проблемой специальной педагогики, в частности, тифлопедагогики. Поэтому многие тифлопедагоги и тифлопсихологи разрабатывали специальные средства, методы и условия их применения для решения многих вопросов этой важной проблемы, в том числе и создание предпосылок и основных направлений для решения проблемы социальной адаптации детей, имеющих различные нарушения зрения: абсолютно незрячие, незрячие с остаточным зрением и слабовидящие. В этих условиях особенно трудно приходится молодежи, имеющей глубокие нарушения зрения, чей жизненный опыт, система двигательных умений и навыков, ориентировка в пространстве недостаточно развиты и устойчивы.

Проблема социальной адаптации очень актуальна и для детей, имеющих другие различные нарушения в развитии (слуха, интеллекта, речи и др.). Анализ исследований научных работ по данной проблеме показал, что к решению задач социальной адаптации применялись различные подходы, но рассмотрению этих вопросов, подбору, разработке и систематизации специальных средств, методов и условий их применения для развития социальной адаптации незрячих и слабовидящих детей уделялось недостаточное внимание.

Данная статья является частью исследования по теме социальной адаптации детей, имеющих нарушения зрения. В ней рассматриваются сущность, цель, задачи, варианты программ и направления работ, применение которых станет основой эффективного решения этой проблемы.

Результаты изучения этой проблемы сформируют теоретическую модель развития социальной адаптации детей, имеющих нарушения зрения, которая будет способствовать эффективной подготовке этих детей к самостоятельной жизни.

Представленная работа является теоретической частью исследования по данной проблеме, предполагающая в дальнейшем экспериментальную апробацию модели, ее дальнейшее усовершенствование, разработку примерного плана практических работ по развитию социальной адаптации детей, имеющих различные нарушения зрения, разработки средств методов и условий для повышения уровня информированности воспитателей, учителей и родителей этих детей в вопросах социальной адаптации у них.

**Ключевые слова:** *социальная адаптация, дети, имеющие нарушение зрения, незрячие, слабовидящие, программа, учителя, родители, принципы, коммуникация, активность, деятельность.*

**Введение.** В статье рассматривается проблема социальной адаптации детей, имеющих различные нарушения зрения.

Сегодня особую актуальность приобретают вопросы социальной адаптации детей, имеющих различные нарушения зрения, в частности их социальная компетентность, наряду с профессиональными умениями определяющая возможность их трудоустройства. Поэтому изучение этой проблемы и создание предпосылок для социальной адаптации незрячих и слабовидящих детей имеет исключительно важное значение.

**Проблема.** Известно, что главная задача и конечная цель воспитания, обучения и развития детей, имеющих различные нарушения зрения, – это подготовка активного и самостоятельного, по мере возможностей, члена общества, способного к трудовой деятель-

ности. Поэтому для решения этих задач практически важным является создание предпосылок и разработка специальных педагогических подходов для социальной адаптации незрячих и слабовидящих детей, что и определяет теоретическую и практическую значимость рассматриваемой проблемы.

**Анализ актуальных исследований и публикаций, связанных с проблемой.** Известно, что интеграция детей с отклонениями в развитии, в том числе незрячих и слабовидящих, в общество не может происходить так же, как и у их нормально развитых сверстников. Нарушения зрения приводят к недоразвитию связей с социумом, культурой, как источником развития. [4] Получается, что недоразвитие психики детей, имеющих глубокие и частичные нарушения зрения, приводит не только к снижению интеллектуальных способностей, но и сказывается на их адаптационных возможностях. Проведенный нами анализ специальной научно-методической литературы по проблеме исследования позволяет выделить следующие основные направления.

Во-первых, существуют отдельные разработанные программы и методические приемы, которые позволяют повысить социально-психологическую компетентность детей, имеющих нарушения зрения. Речь идет о формировании адекватных способов взаимодействия с окружающими и о увеличении мотивации учебной и трудовой деятельности. [6] Также очень важно готовить незрячих и слабовидящих учащихся к самостоятельной жизни по мере их возможностей. Для этого проводится работа по конкретизации и уточнению их жизненных планов, выбора профессионально-трудовой специальности, приучению незрячих и слабовидящих детей к самообслуживанию, ориентировке в пространстве, к труду, формированию коммуникативных навыков. [9], [1]

Во-вторых, при обучении незрячих и слабовидящих учащихся общеобразовательным предметам для того, чтобы они могли применять приобретенные теоретические знания в повседневной жизни, исследователи предлагают связывать любые теоретические понятия с повседневной жизнью. [8] Рекомендуется на занятиях общеобразовательного цикла по возможности приближать учебный процесс к реальным жизненным условиям, например, моделировать жизненные производственные ситуации. [2] При обучении незрячих и слабовидящих детей рекомендуется включать их в процесс активной практической деятельности. [3]

**Цель исследования** – определить основные направления развития социальной адаптации детей, имеющих нарушения зрения.

**Новизна настоящего исследования** определяется как теоретической, практической и социальной значимостью рассматриваемой проблемы, так и недостаточной изученностью и разработанностью многих вопросов развития социальной адаптации детей, имеющих различные нарушения зрения.

**Изложение основного материала.** Анализ литературы и наша практика свидетельствуют о том, что нарушения развития у детей создают определенные сложности в воспитании, обучении, трудовой подготовке и подготовке их к самостоятельной жизни. Это требует разработки специальных средств, методов и условий их применения для организации и проведения эффективной педагогической работы с этими детьми, при обязательном учете характера и степени нарушения развития, времени их возникновения.

Усиливающаяся глобализация этих вопросов несет с собой множество социальных проблем, решение которых имеет исключительно важное значение для полноценного воспитания, обучения, развития и подготовки детей, имеющих и нарушения зрения к самостоятельной жизни, развитию личности, обеспечивая им необходимую адаптацию в обществе.

В связи с этим очень важным является изучение поведения незрячих и слабовидящих детей, их культуры, взаимодействия друг с другом, со взрослыми и с нормально развивающимися сверстниками, и на этой основе разработка и создание предпосылок и специальных подходов для социальной адаптации этих детей.

Известно, что для того, чтобы управлять адаптивным процессом незрячих и сла-



бовидящих детей, нужен эффективный, специальный метод повышения их адаптивных возможностей. Так, например, в России на базе реабилитационных центров подготовлена и апробирована методика, названная системой специальной подготовки, для детей, имеющих нарушения развития. Целью данной системы, как социально-педагогической системы, является развитие адаптивного потенциала ребенка, имеющего нарушения развития, а также семьи, в которой он воспитывается. Участие детей с нарушениями развития и их родителей в данной программе позволяет решить следующие задачи:

1. развитие у ребенка предпосылок для социальной адаптации;
2. развитие у ребенка умений и навыков социальной адаптации;
3. приобретение ребенком положительного опыта успешной социальной адаптации;
4. выявление и коррекция недостатков воспитания, развития социальной адаптации детей, имеющих нарушения в развитии;
5. выявление и устранение недостатков семейного воспитания детей с нарушением развития;
6. развитие коммуникативных и интеллектуальных способностей детей, имеющих нарушения в развитии.

Данная программа построена на соблюдении следующих основных принципов.

- Принцип субъективности. Ребенок с первых минут пребывания в группе ставится в положение субъекта группового процесса, он участвует в коллективном определении целей, в планировании и ежедневном подведении итогов. Именно адекватная информация обеспечивает спокойное уверенное поведение ребенка в незнакомой ситуации.
- Принцип мотивации. У детей формируется активная мотивация к самосовершенствованию, саморазвитию и самореализации, восстановлению собственной личности.
- Принцип интегративности. В процессе реализации программы занятия систематически проводятся вместе со здоровыми сверстниками, что также способствует развитию коммуникативных способностей детей, имеющих нарушения в развитии, и создают предпосылки формирования связей с социумом.
- Принцип равенства. Все взрослые, дети с нарушениями в развитии и их здоровые сверстники имеют равные права и в ходе проведения занятий они ставятся в равные условия.
- Принцип коллективной, игровой и творческой деятельности. Игра – это основная и специфическая форма детской активности, в которой реализуются отношения ребенка со средой. Еще Л.С. Выготский рассматривал игру как ориентирующую адаптивную деятельность, которая облегчает ребенку вхождение в социальную среду. Игра пронизывает все формы деятельности в группе. Творчество помогает ребенку, имеющему нарушения в развитии, реализоваться в социальном плане, приобрести авторитет у товарищей.
- Принцип быстрой смены форм деятельности создает необходимое напряжение, позволяющее тренировать адаптивные возможности, разнообразить опыт приспособительного поведения.
- Принцип положительных эмоций учитывает, что от характера эмоциональных отношений, возникающих между ребенком, имеющим нарушения в развитии, и средой зависит скорость и легкость его приспособления.

В ходе практической реализации этой программы дети, имеющие нарушения, и их здоровые сверстники принимают участие в коллективной творческой деятельности, музыкальных, игровых, физкультурно-спортивных и других видах занятий. Используются элементы психологического тренинга. При этом особое внимание уделяется следующим основным направлениям работы:

- адаптация и коммуникация, в ходе которых отрабатываются проблемы общения детей, имеющих нарушения в развитии;

- адаптация в профессиональном плане, планируются и ставятся вопросы типа «мое будущее», «моя профессия»;
- школа выживания. Апробируются варианты действий в непредвиденной, нестандартной ситуации, позволяющие учиться контролировать себя и развивать способность оказывать помощь другим;
- развитие интереса и заинтересованности в участии в физкультурно-оздоровительных занятиях и мероприятиях, способствующих укреплению здоровья, развитию двигательных способностей, ориентировке в пространстве.

Эта программа системы социальной подготовки детей, имеющих нарушения в развитии, построена по системе блоков. Продолжительность каждого блока пять дней. Разделение процесса на блоки позволяет проследить и проанализировать динамику адаптивного роста этих детей, оценить устойчивость достигнутых адаптивных изменений и увидеть реализацию социальных навыков и адаптивных способностей в повседневной обычной жизни.

Система блоков данной рассматриваемой программы также позволяет эффективно наращивать сложность и разнообразие предлагаемых адаптивных ситуаций. В ходе реализации программы системы социальной адаптации детей, имеющих нарушения в развитии, осуществляется периодическое отслеживание эффективности достигнутых детьми результатов и общая оценка уровня их адаптивного потенциала.

Новизна рассматриваемой методики заключается, во-первых, в использовании методики коллективной творческой деятельности применительно к детям, имеющим различные нарушения в развитии, и их родителям; во-вторых, в интегрированном подходе, т.к. в занятиях принимают участие как дети с отклонениями в развитии, так и их родители и здоровые сверстники. Дети, имеющие нарушения в развитии, общаясь со здоровыми сверстниками, участвуют в совместной игровой, учебной, трудовой и других видах деятельности, учатся не бояться и не стесняться своего физического недостатка, учатся принимать помощь и оказывать ее другим.

Сравнительные результаты скорости адаптации изучаемых показателей у детей, имеющих нарушения развития, занимающихся по программе, и детей контрольной группы показывают, что опыт социального общения и деятельности в условиях реабилитационного центра положительно сказывается на увеличении адаптивных возможностей детей обеих групп – детей, имеющих нарушения в развитии, и их здоровых сверстников. Однако результаты приспособления детей с нарушениями в развитии были лучше, а время приспособления меньше, чем у их сверстников из контрольной группы. Дети с нарушениями в развитии достигли максимальных результатов уже через десять дней проводимой социально-педагогической работы.

Известно, что при организации и проведении социально-педагогической работы с детьми, имеющими различные нарушения в развитии, очень важен учет характера и степени нарушений, индивидуальные особенности и возможности. Поэтому с целью обеспечения учета индивидуальных особенностей развития этих детей рекомендуются следующие основные варианты программы для разных групп детей:

- программа социальной адаптации и развития одаренных детей-инвалидов;
- программа, ориентированная на детей с задержкой психического развития;
- программа для умственно отсталых детей.

Как видно из сказанного в рекомендуемых программах отсутствуют варианты программ для детей, имеющих нарушения зрения, слуха, опорно-двигательного аппарата. Вместе с тем практика свидетельствует, что социально-педагогическая работа, проводимая с незрячими и слабовидящими детьми, требует особого подхода и педагогических условий.

Практика свидетельствует, что для проведения занятий по программе социальной подготовки детей, имеющих нарушения в развитии, не требуется дополнительного материального обеспечения. Эти занятия можно организовывать и проводить в рамках учебно-

воспитательного процесса в условиях специальных и интегративных школ.

Как отмечают учителя и родители детей, имеющих нарушения в развитии, проводимая программа социальной подготовки этих детей обеспечивала устойчивость ребенка и вне центра. У этих учащихся отмечалось улучшение успеваемости в школе и отношений со сверстниками. Дети стали более спокойными, общительными, эмоциональными и оптимистичными.

Учитывая результаты эксперимента, проведенного российскими исследователями, и основываясь на анализе специальной литературы по рассматриваемой проблеме, мы пришли к следующим выводам:

1. Имеющийся недостаток развития приводит к нарушению связи этих детей с окружающей средой, что в свою очередь сказывается на формировании социальной адаптации;

2. Формированию социальной адаптированности ребенка с нарушениями развития способствуют следующие основные направления проводимых с ними специальных педагогических работ:

- развитие коммуникативных возможностей ребенка;
- мотивация учебной и трудовой деятельности детей;
- применение теоретических знаний в повседневной жизни;
- проведение специальных социально-педагогических занятий с целью развития у детей адаптивного потенциала;
- доминантность профориентации и трудовой подготовки детей в коррекционно-воспитательном процессе.

**Перспективы дальнейших исследований.** Представленная работа – это теоретическая часть исследования по данной проблеме, предполагающая в дальнейшем теоретическую и экспериментальную разработку примерной программы и модели по развитию социальной адаптации детей, имеющих различные нарушения зрения. Эти разработки будут направлены и на повышение уровня информированности воспитателей, учителей и родителей этих детей в вопросах формирования у них социальной адаптации.

## **ON THE PROBLEM OF DEVELOPMENT SOCIAL ADAPTATION FOR CHILDREN AVAILABLE VISUAL IMPAIRMENTS**

**Azaryan Robert**

*Yerevan State University, Armenia*

*r.azaryan@ysu.am*

**Yayloyan Anna**

*Shirak State University after M. Nalbandyan, Armenia*

*yayloyan.A@mail.ru*

### **Summary**

The upbringing, training and development of children with visual impairments, preparing them for independent life is the most important problem of special pedagogy, in particular typhlopedagogy. Therefore, many typhlopedagogues and typhlopsychologists have developed special means, methods and conditions for their use to solve many issues of this important problem, including the creation of prerequisites and main directions for the social adaptation of children with visual impairments: complete absence of vision, blind people with residual vision, visually impaired.

The present article reveals the challenges of creating the prerequisites for the social adaptation of children with developmental disabilities. The study of this problem is very significant, theoretically, ethically and socially important, as the problems of social adaptation of children with different developmental disabilities are becoming increasingly relevant today. In particular, their social competence, which determines their employment opportunities is essential.

It is known, that the key goal and ultimate aim of the upbringing, education and development of children with disabilities is considered to be the preparation of an involved and independent member of society, capable of working and operating, to the extent possible. It is therefore practically necessary to create prerequisites for the social adaptation of children with different developmental disabilities, which define the practical and theoretical significance of the problem under consideration, in order to solve these problems.

It is understood, that developmental disabilities in children result in a breach of relations with society, unity, as a source of growth, according to literature evidence and experience. These children's underdevelopment of the psyche not only leads to a decline in intellectual abilities, but also affects their adaptive capacities. We are therefore interested in how it is possible to establish prerequisites through location that lead to the social adaptation of children with developmental problems.

The aim of this analysis - to disclose the key directions for creating the prerequisites for social adaptation of children with developmental disabilities - was defined by the foregoing.

The results of studying this problem, the development of a theoretical model and practical approaches for the development of social adaptation in children with visual impairments will allow an effective solution to this problem.

**Keywords:** social adaptation, children with visual impairments, problem, blind, visually impaired, program, teachers, parents.

## ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐԸ

**Ազարյան Ռոբերտ**

*մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,  
Երևանի պետական համալսարան, Հայաստան  
r.azaryan@ysu.am*

**Յայլոյան Աննա**

*Մ. Նալբանդյանի անվան Շիրակի պետական  
համալսարան, Հայաստան  
yayloyan.A@mail.ru*

### Ամփոփում

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների դաստիարակությունը, ուսուցումն ու զարգացումը, նրանց ինքնուրույն կյանքի նախապատրաստումը հատուկ մանկավարժության, մասնավորապես, տիֆլոմանկավարժության կարևորագույն հիմնախնդիրն են: Հետևաբար շատ տիֆլոմանկավարժներ ու տիֆլոհոգեբաններ մշակել են հատուկ միջոցներ, մեթոդներ և դրանց կիրառման պայմաններ՝ այս կարևոր հիմնախնդրի բազմաթիվ հարցեր լուծելու համար, ներառյալ տեսողության տարբեր խանգարումներ ունեցող երեխաների սոցիալական հարմարման նախադրյալների և հիմնական ուղղությունների ստեղծումը՝ կուրության, մնացորդային տեսողությամբ և թույլ տեսողությամբ: Այս պայմաններում հատկապես դժվար է տեսողության խորը խանգարումներ ունեցող երիտասարդների համար, որոնց կյանքի փորձը, շարժողական հմտությունների համակարգը, տարածության մեջ կողմնորոշումը բավականաչափ զարգացած և կայուն չեն:

*բարոյական նորմերի իմացություն* (բարություն արա, դա կվերադարձվի քեզ համար անակնկալ, բայց քեզ անհրաժեշտ մի ժամանակ, շնորհակալ լինելը մեծ բարեբախտություն է, հարկ է ուրախ դիմագրավել դժվարությունները, անձնագոհությունը մեծ շնորհ է, և անձնական, սեփական հաճույքը պետք է կարողանալ ստորադասել ընդհանուրի անհրաժեշտությանը, հոգևոր սնունդը միշտ գերադասելի է, ուրիշի ունեցածի վրա չպետք է աչք ունենալ և այլն),

*անձի ինքնակատարելագործում* (գո՛հ եղիր աշխատանքիդ արդյունքից, ցայտնոտի մեջ մի՛ ընկիր, օրինակի ուժը զորավոր է, ծուլությունը, որկրամոլությունը պետք է հաղթահարել, երևակայությունը, կրկնությունը արժեքավոր են ինքնակատարելագործման ժամանակ, աշխատասիրության կարևորությունը, և այլն),

*ընտանեկան, հասարակական սուբորդինացիայի դաստիարակում* (ծնող, ուսուցիչ, հայր-գավակ փոխադարձության կանոնները, չափի զգացողության դաստիարակում, մեծի խոսքի գիտակցում և այլն),

*գոյության և կեցության հանձնարարելի պայմանների ճանաչողություն* (կարգ ու կանոնը երջանկության նախապայմաններ են, թափթփվածությունը, վատ օրինակը, թերությունը երեսով տալը խրախուսելի չեն, և այսպես շարունակ):

Վեպը վերոնշյալ և բազում այլ գիտամանկավարժական սկզբունքների շտեմարան է, սակայն դաստիարակության, մարդու անձի ձևավորման խնդիրը հեղինակը լուծում է

կոնկրետ օրինակների միջոցով, ընդ որում՝ ոչ թե «այ եթե այսպես վարվես, այսպես կստացվի» սկզբունքով, այլ ընդգծված առարկայական ֆաբուլայի մեջ: Օրինակ՝ վեպն սկսվում է Տիգրանի ընտանիքի առօրյայի նկարագրությամբ, երբ հայրը աշխատանքից վերադառնում է տուն, կինը, երեխաները սիրով դիմավորում են նրան, յուրաքանչյուրն իր հետաքրքրությունների և կարողությունների սահմաններում կազմակերպում է ընտանեկան ընթրիքը, հետո հայրը, ինչպես միշտ, որևէ պատմություն է պատմում զավակներին, վայելում է կնոջ հետ երեխաների խաղաղ քունը, և հանկարծ... պարզվում է, որ չորս կողմը հրդեհ է բռնկվել, և հարկ է որևէ կերպ հնարավորինս արագ փրկվել և փրկել ունեցվածքը. երեխաները փոքրահասակ են, պետք է արագ կողմնորոշվել...: Հայտնվում են մարդիկ՝ կին, տղամարդ, և մեծ արագությամբ օգնում են դուրս բերել երեխաներին և կարևոր իրերը, ու երբ Տիգրանի կինը զարմացած հարցնում է կանանցից մեկին, թե այս ինչ Աստծո շնորհ է, որ իրենց այսպես օգնում են, կինը պատասխանում է. «Ես իմ պարտքն եմ ուզում վճարեմ, քոնակըս որն ա: Դուք չէիք, որ իրեք տարուց առաջ ինձ մահիցն ազատեցիք: Դու րք չէիք իմ երեխանցը հաց ու ջուր տալիս...», և զարգացնում է այս թեման [տե՛ս Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, ութ հատորով, չորրորդ հատոր, Երևան, 1947, էջ 113, այսուհետ բոլոր հղումները կտրվեն ըստ հոդվածի վերջում եղած գրականության ցանկի՝ շարադրանքում նշելով միայն ցանկի հերթական համարը և էջը]: Հեղինակը ոչնչով չի միջամտում, բայց և՛ երեխաները, և՛ ծնողները կատարում են առաջին եզրակացությունը լավություն, բարություն անելու և դրա արձագանքների մասին մի հետագա ապագայում... Այս նույն սկզբունքն է կիրառվում վեպի ամբողջ ընթացքում: Կամ, օրինակ, Տիգրանի ընկերը խնդրում է իր որդուն որոշ ժամանակ տիգրանենց տանը պահել, վերջինիս՝ երեխաների հետ շփվելու միջոցով փորձել վերադաստիարակել, և Տիգրանը սիրով համաձայնվում է: Երեխաների ուսուցիչը՝ պ. Կարապետը, իրեն ընդգծվածորեն անկիրթ պահող տղային՝ Ստեփանին, փորձում է բացատրել իրավիճակը, վերջինս անկառավարելի է. «Պատերը դողում էին՝ էնպես էր գոռում, ոտները գետնին տալիս:

«Ստեփան, հարցրեց պարոն Կարապետը, կուզե՞ս ինձ անկաջ անիլ, թե չէ»:

«Չէ՛, չէ՛, պատասխանեց...» ու էլի ոտները քարեքար տվեց, գոռաց:

«Շատ բարի, պատասխանեց պարոն Կարապետը, թե չես ուզում անկաջ անիլ, ես էլ հետո չեմ խոսալ, ինչ կուզես, արա՛»: Ասեց ու մեկ աթոռի վրա նստեց, գիրքն առավ ձեռն ու սկսեց կարդալ» [1, էջ 144]: Երկար գոռգոռալուց հետո հոգնած տղան քնում է, նրան սիրով և զգուշությամբ անկողին են տանում, իսկ հաջորդ օրը արդեն ուսուցիչ և մանուկ «լեզու են գտնում» միմյանց հետ զրուցելով և եզրակացության են գալիս. Ստեփանը հասկանում է, որ անկառավարելի բարկությունը, անկրթությունը պախարակելի հատկություններ են:

Ամբողջ վեպը գիտամանկավարժական դասընթացի գործնական հիշեցնում է ձեռնարկ, որում վեր են հանվում չձևավորված մանուկի անձ դառնալու հիմնական կանոնները՝ կենցաղային կարգ ու կանոնի իմացություն, մարդկային հարաբերությունների ժամանակ ներկայանալի վարքագծի պահպանում, ավագ սերնդի և մանուկի փոխհարաբերության օրինակելի պահվածքի սահմանների ճանաչում, մարդու հոգեբանության դրականի և բացասականի սահմանազատում, նպատակների և երզանքների տարբերակման կարողության դաստիարակում և այլն, և այլն: Եվ այս ամենը՝ այսօր էլ մանկավարժության համակարգում նախընտրելի դիդակտիկ մեթոդների կիրառմամբ միայն: Երբեմն իմացությունը ձեռք է բերվում հարց-պատասխան երկխոսության միջոցով (օրինակ՝ պ. Կարապետը երեխաների հետ պետք է անցնի հերթական աշխարհագրու-

թյան դասը, և նա հարցերի միջոցով յուրաքանչյուր երեխայի հետ խաղարկում է քարտեզի ճանաչողությունը, հաջորդ պատասխանողը լրացնում է նախորդի բացթողումներն ու վրիպումները դարձյալ հարցերի միջոցով, և այսպես շարունակ), երբեմն՝ խաղճանաչողության (հայրն ու զավակները գնացել են իրենց մտերիմ ծանոթի տուն, և ծանոթանալով բարեկամի տնտեսությանը, աշխատանքի բաժանման համակարգին, այգու, բանջարանոցի մշակման սկզբունքներին, աշխատատիրոջ և աշխատողների աշխատանքային հարաբերություններին՝ երեխաները որոշում են և խնդրում իրենց հորը՝ ամեն մեկին մի փոքրիկ հողակտոր տրամադրել, որպեսզի իրենք էլ մշակեն և փորձեն իրենց ուժերը այգեգործության և բանջարաբուծության ասպարեզում... բնականաբար, հայրը սիրով ընդառաջում է), երբեմն՝ սեփական փորձով (Ստեփանը ոչ լավ դաստիարակություն ստացած, անտեսված երեխա է, որ բնակվում է այս օրինակելի ընտանիքում, սկզբում նա ըմբոստ է, անկառավարելի, անկիրթ, յուրաքանչյուր առիթ օգտագործում է տհաճ իրավիճակ ստեղծելու համար, սակայն շրջապատի համբերատարությունը, հանդուրժողականությունը, բոլոր պարագաներում և իրավիճակներում նրան սիրով ընդունելը աստիճանաբար տղային դարձնում են դրական, համակրելի, ներկայանալի անձնավորություն), երբեմն նաև անհաջողության հասնելով (աղջիկը անփութության հետևանքով սպասքը վայր է գցում և ջարդում, մայրը չի նախատում, բայց հետո աղջկա հավաքած գումարով վերականգնում են վնասը), երբեմն էլ դիմացինի արարքների գնահատման միջոցով (Ստեփանը հայտնվել է իրենց տանը, խախտել և խախտում է իրենց տան հանգիստն ու խաղաղությունը, սկզբում երեխաները չեն կողմնորոշվում՝ ինչպես վարվել, սակայն հայրը, մայրն ու ուսուցիչը, թե՛ իրենց օրինակով, թե՛ առակախոսությամբ, թե՛ բաց տեքստով խրատելով, հասնում են ցանկալի հարաբերությունների հաստատմանը, և ընտանիքում կրկին տիրում է ներդաշնակությունը), երբեմն դաստիարակության ընթացքը՝ որպես խրատաբանություն, իրենց ձեռքն են վերցնում ծնողները (բաց տեքստով խրատների մեծ մասը բարձրաձայնում է Տիգրանը՝ ընտանիքի հայրը, և սա նույնպես կրթադաստիարակչական մոտեցման խիստ էական մոտեցման մասին է վկայում. իսկ և ուսուցիչ Կարապետը, և՛ Աննան՝ երեխաների մայրը, և՛ բարեկամ մտերիմները հիմնականում խորհուրդ են տալիս, բացատրում են, օրինակ են ծառայում, իսկ Տիգրանը ավելի հաճախ իր հստակ խրատներն է տալիս. 19-րդ դարի ընտանեկան աստիճանակարգային (սուբորդինացիոն) համակարգը այս առումով դրսևորվում է նաև մանկան կրթադաստիարակչական տիրույթում և այսպես շարունակ:

Պատահական չէ, որ արժի մեկ անգամ ևս անդրադառնալ վեպի վերնագրին և այդ վերնագրի իմաստի մի նրբերանգին՝ որպես դաստիարակության համակարգի կարևոր բաղադրիչի. խոսքը խորհուրդ տալու և խրատելու միջև եղած տարբերությանն է վերաբերում. այս վեպի օրինակով կարող ենք ընդհանրացնել ու եզրակացնել, որ խրատելու իրավունք ունի նախ ավագը, բայց նաև այն ավագը, որն անվերապահ հեղինակություն է վայելում, որի խոսքը անբեկանելի է, որի տված խրատը անքննարկելի է ի սկզբանե, որին վստահում են շրջապատում բոլորը, և որն իրավունք ունի խրատելու: Խորհուրդը կարելի է տալ ընկերոջը, հավասարը՝ հավասարին թե՛ տարիքային առումով, թե՛ կարգավիճակով, թե՛ սուբորդինացիան խախտելով անգամ. խորհուրդը չի պարտադրում, խորհրդին դեմ կարելի է լինեն, այն կարելի է անտեսել, կարելի է նկատի ունենալ, այլ է խրատի պարագայում. խրատին հարկ է անսալ, խրատը չի քննարկվում, այն հանձնարարվում է ի գիտություն, և շահում է նա, ով «ականջին օղ է անում» խրատը: Հենց այս

իմաստով է մեծ մանկավարժ, լուսավորիչ Խ. Աբովյանը այս վեպը հանձնարարում որպես «խրատներ հայ մանուկներին»:

Ինչպես իրավացիորեն նշում է Ժան-Ժակ Ռուսոն իր «Էմիլ, կամ դաստիարակության մասին» գրքում. «Դաստիարակությունը տրվում է մեզ կամ բնության կողմից կամ մարդկանց, կամ իրերի կողմից: Մեր ընդունակությունների և զգայարանների ներքին զարգացումը դաստիարակություն է, որ տրված է բնության կողմից, այդ զարգացմամբ ինչպես օգտվելու ուսուցումը մարդկանց կողմից դաստիարակությունն է, իսկ մեր սեփական փորձի հիման վրա առարկաների հետ շփվելու ունակություն ձեռք բերելը իրերի կողմից դաստիարակությունն է» [7, էջ 4]:

Գիտակրթական համակարգի գործող սկզբունքների կիրառման առումով ուշադրության արժանի է նաև մեկ այլ հանգամանք. չնայած վեպի վերնագրում շեշտվում է, որ այս պատմությունը հայ երեխաների համար խրատների ժողովածու է, սակայն ստեղծագործության ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել մի այլ եզրակացություն ևս. լինելով մանուկներին ուղղված խրատներ՝ այս վեպի բոլոր դրվագները նաև մեծերի՝ ծնողների, ուսուցիչների, դաստիարակների համար խորհուրդների շտեմարան են, թե ինչ մեթոդներով, ինչ սկզբունքներով, ինչ գիտական և փորձնական միջոցներով է ավելի նախընտրելի, գերադասելի իրականացնել կրթությունն ու դաստիարակությունը: Իրավացի է Ա. Սողոյանը, երբ, հղում անելով մանկական գրականությանը զբաղվող հեղինակ Բարբարա Ուոլին, գրում է. «Մանկական գրականության պատումի տեսությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ գրականագետ Բարբարա Ուոլը մանկագրության համապատկերում հեղինակ-ընթերցող հարաբերության համար առանձնացնում է երեք հնարավոր դեպք:

Շեղինակը գրում է միայն երեխաների համար՝ հաշվի չառնելով հնարավոր մեծահասակ ընթերցողներին:

Շեղինակը կիրառում է երկակի հասցեագրում՝ իր ստեղծագործություններն ուղղելով հավասարապես և՛ մեծահասակներին, և՛ երեխաներին:

Շեղինակը ստեղծագործությունները բացահայտորեն հասցեագրում է երեխաներին՝ այժիպ առաջ ունենալով նրանց «թիկունքից նայող ծնողներին» [8, էջ 35]:

Ընդունելով գրականագետի դիտարկումները պատումի առանձնահատկությունների վերհանման առումով [3, էջ 104]՝ հարկ ենք համարում կատարել մի էական դիտարկում այս վեպի «հասցեատերի» ճանաչման խնդրի շուրջ. վեպի հանգամանալից ուսումնասիրությունը այս հարցում անհրաժեշտ է դարձնում մի քանի հստակեցում. անշուշտ, այս վեպը գրված է մանուկների համար, որ վկայում է հենց վերնագրի երկրորդ մասը՝ «խրատներ հայ մանուկների համար», ապա՝ հեղինակն իրոք իր ստեղծագործությունը գրել է թե՛ մանուկների, թե՛ նրանց ծնողների համար հավասարապես՝ ենթադրելով վերջիններիս ակտիվ ներկայությունը զավակների ընթերցանության ընթացքում (այս պարագայում կարելի է միացնել վերոնշյալ դասակարգման երկրորդ ու երրորդ բաժանումները), և նաև հեղինակը վեպը հասցեագրում է կրթության, դաստիարակության ոլորտում գործունեություն ծավալողներին որպես դասավանդման, գիտակրթական մշակույթի կազմակերպման օրինակելի սկզբունքների համակարգ: Այլ կերպ ասած՝ Խ. Աբովյանի «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» վեպը ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություն է, այլև մանկավարժական ուրույն ձեռնարկ, որն իր կրթամանկավարժական սկզբունքների ամբողջությամբ կիրառելի է առ այսօր և չի կորցրել իր արդիականությունը շուրջ երկու դար շարունակ: Լուսավորչական ժամանակաշրջանի թե՛ փիլիսոփայությունը, թե՛ գե-

դարվեստական մտածողության բոլոր դրսևորումները՝ արվեստի տեսակների ողջ բազմազանությունը, թե՛ գիտամանկավարժական գրական, տեսական ժառանգությունը փորձում էր մարդկությանը հիմնավոր կերպով ներկայացնել կրթության, դաստիարակության ճակատագրորեն կարևոր լինելը քաղաքակրթության զարգացման տվյալ ժամանակի և ապագայի համար: Այս տեսանկյունով են ստեղծվել նաև Խ. Աբովյանի բոլոր մանկավարժական, գիտակրթական ուսումնասիրությունները, դասագրքերը, ինչպես նաև մեր քննության առարկա վեպ-տրակտատը:

**Եզրակացություն:** Մանկավարժության պատմության մեջ գիտակրթական համակարգերի տարաբնույթ փոփոխությունները, նորամուծությունները դաստիարակության ոլորտում միշտ էլ հիմնվում են այս ոլորտի անցյալի արժեքների փորձի վրա: Պատահական չէ, որ մինչև այսօր՝ 21-րդ դարը, ուսումնասիրության ուշագրավ նյութ են անցյալի նշանավոր փիլիսոփա-մանկավարժների՝ Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, Ռուսոյի, Վոլտերի, Կանտի, Հեգելի և այլոց թողած գիտական աշխատությունները, մանկավարժական հայացքները, սկզբունքները, ի վերջո նաև մանկավարժական ժառանգությունը: Գիտնական-մանկավարժների այս փաղանգի մասն է նաև 19-րդ դարի հայ մեծ մանկավարժ, հայ նոր գրականության հիմնադիր, լուսավորիչ Խ. Աբովյանը, որի թողած գրական-գեղարվեստական հարուստ ժառանգության կողքին ոչ պակաս կարևոր և ուսումնասիրելի տիրույթ էլ կա. խոսքը վերաբերում է նրա մանկավարժական, կրթական աշխատություններին, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» վեպ-մանկավարժական տրակտատը, որի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում նորովի ընկալելու ու գնահատելու նաև գիտամանկավարժության ժամանակակից սկզբունքները և փորձարարական նորարարությունների համակարգը:

**SYSTEM OF PRINCIPLES IN EDUCATION AND LEARNING ACCORDING TO THE NOVEL  
“THE HISTORY OF TIGRAN OR MORAL LESSONS FOR ARMENIAN CHILDREN” BY KH.  
ABOVYAN**

**Bekmezian Astghik**

*Ph.D. in Philology, Associate Professor*

*Yerevan State University, Armenia*

*a.bekmezian@ysu.am*

**Summary**

The article explores the inheritance of past and contemporary teaching methods within the realm of education, focusing on vital educational issues in the emerging individual education system. Throughout the history of education, aspects such as moral norms, spiritual values, self-government mechanisms, family and social dynamics, aesthetic perception, and cultural worldviews have consistently commanded attention. It is emphasized that the value system of each historical period is primarily shaped by the scientific and aesthetic heritage of that era. Often, modern pedagogical approaches find their foundation in the experiences of the past. Kh. Abovyan's literary-pedagogical legacy, especially exemplified in "History of Tigran or Moral Lessons for Armenian Children," serves as the best evidence of the aforementioned statement. This 19th-century novel-treatise on pedagogy is a repository of unique scientific and pedagogical principles that remain relevant today, applicable to children, parents, and particularly educators as instructive guidelines for implementing educational systems. It provides a fresh perspective on contemporary scientific pedagogical principles and experimental innovations.

**Keywords:** *Education, pedagogical innovations, Khachatur Abovyan, novel-treatise pedagogy, edification and advice, material value, moral value, family subordination, personality formation.*



# СИСТЕМА ПРИНЦИПОВ ОБРАЗОВАНИЯ И ВОСПИТАНИЯ СОГЛАСНО РОМАНУ Х. АБОВЯНА «ИСТОРИЯ ТИГРАНА ИЛИ УРОКИ НРАВСТВЕННОСТИ ДЛЯ АРМЯНСКИХ ДЕТЕЙ»

Бекмежян Астхик

Кандидат филологических наук, доцент,  
Ереванский государственный университет, Армения  
a.bekmezjan@ysu.am

## Аннотация

В статье рассматривается проблема наследования прошлого и современных методов преподавания важных вопросов в сфере образования, в частности в формирующейся системе индивидуального образования. В истории образования такие области, как пласты нравственных норм, формирование духовных ценностей, регулирование механизма самоуправления, семейно-социальная субординация, эстетическое восприятие, культурное мировосприятие, всегда находились в центре внимания. Подчеркивается тот факт, что система ценностей каждого цивилизационного периода в истории человечества в первую очередь формируется и обретает смысл через научно-эстетическое наследие данной эпохи. Зачастую педагогический опыт прошлого лежит в основе самых современных подходов современности. Одним из лучших примеров этого является Х. Абовян и его литературно-педагогическое наследие, в частности, его труд «История Тиграна или уроки нравственности для армянских детей». Данное произведение, являющееся по своему жанру романом, представляет собой сборник-хранилище уникальных научно-педагогических положений, написанных в XIX в., которые актуальны и по сей день и могут быть полезны как детям, так и родителям, и в частности педагогам, воспитателям-педагогам как инструктивные правила для применения в сфере образования. Изучение романа-педагогического трактата «История Тиграна или уроки нравственности для армянских детей» дает возможность по-новому воспринять и оценить принципы современной научной педагогики и систему экспериментальных инноваций.

**Ключевые слова:** образование, воспитание, педагогические новаторства, Х. Абовян, роман-трактат, наставление и совет, сочетание материальных и моральных ценностей, семейная субординация, формирование личности.

## Օգտագործված գրականության ցանկ

1. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, ութ հատորով, հ. 4, Ե., 1947:
2. Բորև Յուրի, Գեղագիտություն, Ե., 1982:
3. Սողոյան Ա., Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը, Ե., 2022:
4. Սուրիալյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967:
5. Ուելլեր Ռենե, Ուորրեն Օսթին, Գրականության տեսություն, Ե., 2008:
6. Платон, Сочинения в трех томах, том 3, часть 1, М., 1971:
7. Руссо Жан-Жак, Избранные сочинения [Эмил, или о воспитании], М., 1961
8. Wall B., The Narator's Voice, The Dilema of Children's Fiction, New York, 1991:

Получено: 08.02.2024

Received: 08.02.2014

Рассмотрено: 01.03.2024

Reviewed: 01.03.2024

Принято: 23.04.2024

Accepted: 23.04.2024

Journal "Education in the 21st Century", Vol1-11/1, 2024



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

## ԿՐՈՆԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՒՈՐԳ Դ-Ի ՕՐՈՔ

Ղևոնդյան Մանե

ԵՊՀ, ասպիրանտ,

«Դասական դպրոց» կրթական հիմնադրամ, Հայաստան  
[manegevondyan@gmail.com](mailto:manegevondyan@gmail.com)

### Ամփոփում

Ժամանակի ընթացքում փոփոխվել են ուսումնական ձեռնարկների չափանիշները: Եթե դասագիրք կազմելու սկզբնական ժամանակաշրջանում տպագրական խնդիրների պատճառով հեղինակներն ունեին սահմանափակումներ, ապա այսօր ձեռնարկ ստեղծողները լայն հնարավորություններ ունեն: Պարբերաբար ուսումնական ձեռնարկներ են ներմուծվել նոր հասկացություններ, փոփոխվել են տեքստի ընկալումը, ստուգող առաջադրանքների ձևաչափը, ավելացվել կամ պակասեցվել են տեքստերին ուղեկցող նկարները, հարափոփոխվել են դասագրքերի լեզուն, եզրույթաբանությունն ու մեթոդաբանությունը:

Ներկա օրերում մինչ դասագիրքը կհասնի հասցեատիրոջը, գնահատվում է դրա «հիգիենան»: Վերջինս որոշվում է մաթեմատիկական բանաձևերի միջոցով. թե որքանով են դասագրքի տեքստերը գիտական, դաստիարակչական, հասցեատիրոջ տարիքին համապատասխան, գունային և դիդակտիկ մի շարք պահանջների համապատասխան [11, 150]:

Հայկական դասագրքերի պատմության մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում կրոնական բովանդակություն ունեցող ուսումնական ձեռնարկները: Դրանցում ամփոփված տեքստերը, մեթոդաբանությունը, կառուցվածքը, դիդակտիկ մի շարք լուծումներ վկայում են մեզանում քրիստոնեական գրականության անբաժանելի մաս կազմող դասագրքերի ավանդույթ ունենալու մասին: Հայկական միջավայրում նման ձեռնարկները անցել են երկար ճանապարհ:

Քննվող ժամանակաշրջանում արևելահայ կրթական համակարգում առկա էին մի շարք խնդիրներ. դպրոցները չունեին ընդհանուր կանոնադրություններ, ուսումնական ծրագրեր, անորոշ էր դպրոցների տեսակների հարցը: Կրթության առանցքային հարցերից էր դպրոցներում ընդհանուր դասագրքեր ունենալը:

19-րդ դարի երկրորդ կեսին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի կրթական քաղաքականությունն ուղղված էր վերոնշյալ խնդիրների լուծմանը: Հայրապետի առաջնորդությամբ սկսվում է քրիստոնեական միասնական դասագրքեր ստեղծելու գործընթաց:

Հռոմվածում ներկայացրել ենք Ամենայն հայոց հայրապետ Գևորգ Դ-ի կրթական քաղաքականությունը, նրա ձեռնարկած քայլերը կրոնի դասագրքեր ստեղծելու ուղղությամբ: Առաջին անգամ անդրադարձ է կատարվում կրոնի՝ հայ կրթական միջավայրում քրիստոնեական հարուստ գրականության մաս կազմող ուսումնական դասագրքերի ավանդույթին, դրանցում ներկայացված տեքստերի մեթոդաբանական առանձնահատկություններին:

Ներկայումս նման դասագրքերի ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում հարողակցվելու հայկական կրթական միջավայրում ստեղծված քրիստոնեական դասագրքերի ավանդույթին, վերլուծելու ուսումնական դասագրքերի մեթոդաբանական առանձնահատկությունները, որպես ուղեցույց օգտագործելու ներկա օրերում այդօրինակ դասագրքեր ստեղծելու համար:

Ուսումնական դասագրքերի վերլուծությունը փաստում է, որ Ամենայն հայոց կաթողիկոսի առաջնորդությամբ ստեղծվել է կրոնի դասագրքերի համակարգման գործընթաց: Տարբեր հեղինակներ հանձն են առել դպրոցների համար ստեղծել քրիստոնեական դասագրքեր: Դասագրքերը բաժանվում են երկու խմբի՝ ա. քրիստոնեական կրոնի սկզբունքներ ուսուցանող դասագրքեր, որոնք հրատարակվել են «Քրիստոնեական վարդապետություն» խորագրով, բ. Հին և Նոր կտա-

կարանների բարոյախրատական պատմություններ ընդգրկող, ինչպես նաև այլ կրոնների պատմության վերաբերյալ դասագրքեր: Դասագրքեր կազմողները առաջնորդվել են շարադրանքի երկու սկզբունքով՝ կատեխետիկ (հարց ու պատասխան) և համառոտ տեքստեր: Կատեխետիկ մեթոդաբանությամբ գրվել են քրիստոնեական վարդապետության դասագրքերը, իսկ մյուսները՝ դասագրքեր համառոտ տեքստերի մեթոդաբանությամբ:

**Բանալի բառեր:** *Կրթական քաղաքականություն, քրիստոնեական դասագրքերի ավանդույթ, կատեխետիկ, համառոտ շարադրանք:*

**Հիմնախնդիր:** Վերլուծել 19-րդ դարի քրիստոնեական գրականության անբաժանելի մաս կազմող կրոնի միասնական դասագրքեր ստեղծելու նպատակները, դրանց կառուցվածքը, մեթոդաբանական առանձնահատկությունները:

**Հետազոտության նպատակը:** Ներկայացնել է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի կրթական քաղաքականությունը, նրա ձեռնարկած քայլերը կրոնի դասագրքեր ստեղծելու ուղղությամբ:

**Գիտական նորույթը:** Վերլուծել ենք Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի կրթական քաղաքականության համատեքստում ձեռնարկած քայլերը քրիստոնեական ընդհանուր դասագրքեր ստեղծելու ուղղությամբ: Ուսումնասիրության շրջանակում առաջին անգամ ներկայացնում ենք կրոնի դասագրքերում տեքստերի մեթոդաբանական երկու ձև՝ կատեխետիկ և համառոտ շարադրանքներ, ինչպես նաև ուսումնասիրվող նյութի ներկայացման համակենտրոնական, միասնական, առաջընթաց ու համանվազ եղանակները: Առաջին անգամ անդրադարձ է կատարվում նաև դասագրքերի տեքստերին կից ուսումնասօժանողակ նյութերին:

**Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն:** Մեզանում եղած կրոնի դասագրքերի խնդիրներին անդրադարձել են Վ. Երկանյանը, Մ. Մանթրոսյանը, Գ. Շ. Հարությունյանը, Ա. Ալպոյաճյանը, Լեոն, Ա. Երիցյանը: Դասագրքերի մասին բազմաբնույթ տեղեկություններ գտնում ենք նաև մանկավարժական և կրոնական մի շարք պարբերականներում՝ «Արարատ», «Մանկավարժանոց», «Դպրոց»: Մենք ուսումնասիրել ենք Աբել Մխիթարյանի, Գաբրիել Այվազյանի, Ստեփան քահանա Մանդինյանի, Մեսրոպ Փափազյանի, Մարգիս Գնունու հեղինակած դասագրքերը:

**Հիմնական նյութի շարադրանք:** 19-րդ դարի առաջին կեսին արևելահայ դպրոցը գտնվում էր անցումային փուլում: Կրթօջախները հանդես էին գալիս ամենաբազմազան անուններով՝ «մասնավոր», «եկեղեցական», «վանական», «հոգևոր», «ազգային», «ժողովրդական», «թեմական», «հոգևոր-թեմական», «ծխական», «եկեղեցական-ծխական» [3, էջ 16]: Վերոնշյալ անունները հստակ պատկերացում չէին տալիս դպրոցի կրթության բովանդակության, ուղղվածության մասին: Դպրոցական ընդհանուր համակարգի բացակայության պատճառով դպրոցների տեսուչներն առաջնորդվում էին սեփական նախաձեռնությամբ: Գաղափարապես ձևավորվում էր դպրոցի նոր մոդել, քննարկվում էին մի շարք կարևոր հարցեր. ինչպիսի՞ն պետք է լինի ազգային դպրոցը, ինչպիսի՞ կրթության բովանդակություն պետք է ունենա այն, ինչպիսի՞ն պետք է լինեն ուսումնական ծրագրերն ու դասագրքերը:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի գահակալման տարիներին արևելահայ կրթական համակարգում տեղի են ունենում մի շարք արմատական փոփոխություններ: Լեզվաբան, գրականագետ Մանուկ Աբեղյանի բնորոշմամբ Գևորգ Դ կաթողիկոսը համոզված էր, որ ազգի ու եկեղեցու առաջադիմության էական պայմանը ուսումն է, և հայոց եկեղեցու պատմության Ե դարը ընդունելով որպես ընդօրինակման արժանի չափանիշ՝ ցանկանում էր լինել «Պարագլուխ և նահապետ հայկական լուսավորության,

երկրորդ Սահակ Պարթև, քաջալերող, պաշտպանող և ժողովող ուսման և գիտության» [1, էջ 78]: Հայոց հայրապետը անդրանիկ ընդհանրական կոնդակում պատրիարքներին ու եպիսկոպոսներին հանձնարարում է վարժատներ հաստատել մենաստաններում, գիշերօթիկ դպրոցներ բացել առաջնորդանիստ քաղաքներում, գյուղերում [1, էջ 79]:

Առանցքային հարցեր էին դպրոցների կառավարումը, վարչական ճիշտ լծակների օգտագործումը: Հոգևոր առաջնորդի հանձնարարությամբ կազմվում է դպրոցների վիճակագրություն: Ցուցակագրվում են դպրոցների աշխարհագրական տեղանքը, հիմնադրման տարեթիվը, աշակերտների և ուսուցիչների քանակը, նյութական միջոցները, առարկայացանկը: Ուշագրավ իրադարձություն էր 1867 թ. Էջմիածնում ուսումնական հանձնաժողով ձևավորելը, որի գործառույթները պետք է լինեին՝ ա) համակարգել կրթական օջախների տնտեսական, վարչական տարաբնույթ հարցերը, բ) կրթական օջախներին անհրաժեշտ պարագաներով ապահովելը, գ) ծխական, վանական, թեմական դպրոցների համար միասնական կանոնադրություններ մշակելը [1, 79]:

Հաջորդ արմատական փոփոխությունը միասնական կանոնադրությունների ստեղծումն էր. 1868-1869 թթ. հրապարակվում են ծխական, թեմական, վանական դպրոցների կանոնադրությունները, որոնցում համառոտ ներկայացված էին տվյալ դպրոցների նպատակները, խնդիրները, կառավարման խորհուրդը, առարկայացանկը, ուսուցիչների և աշակերտների պարտավորությունները:

Դպրոցները բաժանվում էին երեք խմբի՝ ծխական, թեմական, վանական: Առաջին երկու խմբի դպրոցներում սովորում էին աշխարհիկ ու հոգևորական ընտանիքների զավակներ: Այն աշակերտները, որոնք ցանկանում էին ստանալ հոգևոր աստիճան, կրթությունը շարունակում էին վանական դպրոցներում: Ուշադրության է արժանի այն, որ երկսեռ դպրոցներում կար տարբերակված առարկայացանկ: Կանոնադրությունում առանձնացվել էին առարկաներ, որոնք նախատեսված էին աղջիկների համար, ինչպես ձեռագործությունը [9, էջ 3]:

Ամենայն հայոց հայրապետի հոգածության ներքո էր Էջմիածնի Ժառանգավորաց ճեմարանը: Լինելով ժամանակի լրջագույն կրթօջախը, ուր կրթություն էին ստացել անվանի գործիչներ, այն բարեկարգման կարիք ուներ. «... Դպրոցն իսկապես դպրոցի անուն էր կրում: Ոչ կանոնաւոր ուսելիք ու հագնելիք, ոչ մտաւոր ու բարոյական սնունդ. օրական երկու երեք ժամ անկանոն դասաւանդութիւն՝ հայոց և ռուսաց լեզուի, եկեղեցական երգեցողութեան ու քրիստոնեական վարդապետութեան. ոչ մի հսկողութիւն աշակերտների վարքի և բարքի վրայ, որոնք թուով 20-30 հոգի, Ս. Էջմիածնի շրջակայքից ժողովուած, իրենց սանձարձակ անկարգութեան էին մատնուած» [1, 85]:

Գևորգ Դ-ի կարգադրությամբ ուսումնասիրվող առարկաների շարքում ավելացվում են Սրբազան պատմության, հայոց պատմության, աշխարհագրության, թվաբանության, ինչպես նաև ֆրանսերենի դասեր: Կազմվում է առանձին խումբ՝ ճեմարանի կառավարումը կազմակերպելու, ուսումնական հարցերը քննելու համար:

Կարևոր քայլ էր թեմական դպրոցների վերատեսուչների խորհրդի ստեղծումը [1, էջ 81]: Այս կառույցի նպատակն էր ընդլայնել և վերահսկել դպրոցներում կրթության գործը: Խորհրդի անդամները պետք է այցելություններ կատարեին դպրոցներ, տեղեկություններ հավաքագրեին առկա խնդիրների, ուսման գործընթացի վերաբերյալ:

Հայրապետի կրթական քաղաքականության առանցքային հարցերից էր կրոնի համընդհանուր դասագրքերի ստեղծումը: Քննվող ժամանակաշրջանում կրոնի դասագրքերն ունեին մի շարք թերություններ՝ լեզվի խնդիր, ուսումնասիրվող նյութի և աշակերտների տարիքային առանձնահատկությունների անհամապատասխանություն,

տարբեր հեղինակների կազմած գրքերում ուսումնասիրվող նյութը տարբեր կերպ էր ներկայացված և մեկնաբանված:

Դասագրքերի տարաբնույթ լինելու մասին Աբել Մխիթարյանը հայտնում է, որ որքան դասագրքերը միասնական լինեն, այնքան աշակերտները արագ կսովորեն նոր դասավանդվող առարկան: Դասագրքերի պակասության պատճառով դպրոցներում օգտագործում են տարբեր հեղինակների դասագրքեր, ինչի արդյունքում աշակերտների մի մասը տիրապետում է ուսումնասիրվող նյութի մի մասին, իսկ մյուսները՝ այլ մասին:

Կրոնի տարբեր դասագրքերի օգտագործման դեպքում շատ հաճախ ուսումնական նյութը տարբեր դպրոցներում տարբեր մակարդակներով է ներկայացվում. վարդապետությունը նույնն է, սակայն ուսումնական նյութը մի դասագրքում մի ձևով և չափով է ներկայացված, մյուսում՝ այլ կերպ [13, էջ Թ-Ժ]:

Ըստ Մեսրոպ Փափագյանի՝ հայկական դպրոցներում կրոնի դասերն անցկացվում են հին ձեռնարկներով, ինչպես, օրինակ, Նարեկ, Ժամագիրք, Հին և Նոր կտակարաններ: Թեպետ վերոնշյալները առանցքային նշանակություն ունեն կրոնական գրականության մեջ, սակայն հարմար չեն դպրոցներում դաս վարելու համար [16, էջ Բ]:

Լրջագույն խնդիր էր դասագրքերի լեզուն. մի ձեռնարկը գրաբար էր շարադրված, մեկ ուրիշը՝ աշխարհաբար: Շատ ժամանակ գրաբարն ու աշխարհաբարը զուգահեռ էին ներկայացվում [15, էջ1]:

Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները՝ հոգևոր առաջնորդը նախաձեռնում է կրոնի ընդհանուր դասագրքեր հրատարակելու գործընթաց: Աշխարհիկ ու հոգևորական հեղինակները, իմանալով Ամենայն հայոց հայրապետի նախաձեռնության մասին, մշակում և առաջարկում են դասագրքերի նմուշներ:

Դասագրքերի ներածություններից տեղեկանում ենք, թե ում համար է նախատեսված տվյալ դասագիրքը, ինչ բովանդակություն, կառուցվածք և մեթոդաբանություն ունի, որոնք են դասագրքի նպատակները:

Համաձայն դպրոցական կանոնադրությունների՝ ծխական դպրոցում, որը աշակերտի առաջին կրթօջախն էր, սովորում են քրիստոնեական կրոնի գլխավոր սկզբունքները, Հին և նոր Կտակարանների ուսումնադաստիարակչական պատմությունները [6, էջ 71]: Թեմական դպրոցների առաջին տարվա ընթացքում ուսումնասիրում են Հին և Նոր կտակարանների պատմությունը (համառոտ), իսկ երկրորդ ուսումնական տարում՝ քրիստոնեական կրոնի գլխավոր սկզբունքները (համառոտ), երրորդ տարում՝ քրիստոնեական վարդապետությունը (ընդարձակ) [7, էջ 145]: Վանական դպրոցներում կրոնական առարկաներ դասավանդվում էին միայն առաջին ու երկրորդ ուսումնական տարիների ընթացքում: Առաջին տարում սովորում էին «Քրիստոնեական Վարդապետություն» (միջին մակարդակ), երկրորդ տարում՝ Հին և Նոր Կտակարանների պատմություն, «Քրիստոնեական Վարդապետություն» (ընդարձակ) [8, էջ 6]:

Վերոնշյալից կարող ենք պատկերացում կազմել, որ աշակերտները կրոնական կրթություն ստանում էին բոլոր դպրոցներում պարզից բարդ սկզբունքով: Կրոնական կրթությունը սկսվում էր քրիստոնեական կրոնի տարրական գիտելիքների հաղորդմամբ, Հին և Նոր կտակարանների բարոյախրատական պատմությունների ուսուցմամբ: Հետագայում ուսումնասիրվող նյութի ծավալը ավելանում էր նոր մեկնաբանություններով:

Այն մասին, թե յուրաքանչյուր ուսումնական տարում կրոնի դասագրքերում ուսումնասիրվող նյութը ինչ մեթոդաբանությամբ ներկայացնել, անդրադարձել են ժամա-

նակի նշանավոր մանկավարժներ, նրանց թվում՝ Իսահակ Հարությունյանը, Խորեն Նարպեն, Առաքել Բահաթրյանը: Հայտնի են ա) առաջընթաց և համանվագ, բ) միասնական, գ) համակենտրոնական տարբերակները:

*Առաջընթաց* եղանակի համաձայն՝ սկզբում ուսումնասիրում էին Հին կտակարանի ուսումնադաստիարակչական պատմությունները, ապա՝ Նոր կտակարանը, վերջին ուսումնական տարում՝ քրիստոնեական վարդապետություն:

*Համանվագ* եղանակի նպատակն էր կրոնի բոլոր բաժինները ուսումնասիրել միաժամանակ, այսինքն՝ զուգահեռ սովորում են քրիստոնեության պատմություն, վարդապետություն, բարոյագիտություն, Հին և Նոր կտակարանների ուսումնադաստիարակչական պատմություններ: Այս եղանակը մեզանում գործածական չի եղել [4, 205]:

*Միասնական* մեթոդաբանությամբ ստեղծված ձեռնարկներում կրոնական բոլոր փաստերը փոխկապակցված են միմյանց և ի հայտ են գալիս որպես մեկը մյուսի հետևանք, օրինակ՝ Ավետման պատմությունն ուսումնասիրելիս անդրադարձ է կատարվում Աստվածամոր աղոթքին, կամ Հիսուս Քրիստոսի կյանքը քննելու ընթացքում ներկայացվում է Սուրբ Պատարագի խորհուրդը [4, էջ 645]:

*Համակենտրոնական* եղանակի նպատակը քննվող առարկան իր ամբողջության մեջ ներկայացնելն է: Ամեն ուսումնական տարի ուսումնասիրվող նյութը կրկնվում է, սակայն ավելի ընդարձակ բովանդակությամբ ու մեկնաբանությամբ: Եթե առաջին տարվա ընթացքում սովորել են տասնաբանյա պատվիրանները ուղիղ իմաստով, օրինակ՝ «մի՛ սպանիր» նշանակում է՝ մի՛ խլիր ուրիշի կյանքը: Երկրորդ տարում սովորում են, որ «մի՛ սպանիր» նշանակում է՝ եթե ատում ես եղբորդ, արդեն մարդասպան ես [5, էջ 249]:

Դասագրքերի ուսումնասիրությունը փաստում է, որ հեղինակները կիրառել են համակենտրոնական եղանակը:

Դասագրքերում կրոնական բովանդակությունը ներկայացված է երկու ձևով՝ ա. *կատեխետիկ* (հարց եւ պատասխան), բ. *համառոտ տեքստեր*: Կատեխետիկ մեթոդաբանությունը հայտնի է նախաքրիստոնեական ժամանակաշրջանից: Շատ հեղինակներ (Սոկրատը, Պլատոնը, Արիստոտելը, Վանական Վարդապետը, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Մխիթար Մեբաստացին և այլք) դիմել են այս ձևին:

«Կատեխիս» բառը ծագում է հունարեն «գադիխիս» բառից: Նշանակում է *քրիստոնեական դավանանքի համառոտ շարադրանք՝ հարց ու պատասխան ձևով* կամ *որևէ գիտության հիմնական սկզբունքների շարադրանք*: Քրիստոնեության տարածման սկզբնական շրջանում հեթանոսներին հարց ու պատասխանի եղանակով ուսուցանում էին քրիստոնեության պատմության, հավատի մասին գիտելիքներ: Նման ուսուցումը երկար ժամանակ ծառայել է որպես քրիստոնեական հավատքի գլխավոր սկզբունքները մարդկանց հաղորդելու լավագույն միջոց:

Կատեխետիկ ոճով գրված կրոնական ձեռնարկներում գրքի ու ընթերցողի միջև անմիջական կապ է ստեղծվում: Այս մասին գրում է Մխիթար Մեբաստացին քրիստոնեականներից մեկում: Աբբահայրը նշում է, որ դասագիրքը, որը ներկայանում է որպես «գրուցակից», հարցեր է տալիս սովորողին և ստանում համարժեք պատասխաններ, ինչպես, օրինակ՝ հարց. «Լաւ, հիմիկ իմացայ որ դու զքո հաւատոյ պինտ հարկաւոր բաներն զիտես, զհայր և զորդի և զուրբ ոգին երեք անձինք և մի Աստուած կու հաւատաս ... բայց կու կամիր որ ասես ինձ թէ ինչո՞ւ համար քրիստոնէից նշանն սուրբ խաչն է, և վասն է՞ ր երկրպագութիւն կու լինի սուրբ խաչին»: Պատասխան. «Նորա համար, որ Քրիստոս Տէր մեր ի վերայ խաչին բնեռեցաւ, չարչարեցաւ և մեռաւ վասն ազատելոյ

գմեզ և ասով խաչն եղև նշան Քրիստոսի, և ամենայն քրիստոնէից. և մեք քրիստոնէայքս որքան որ կերկրպագեմք սուրբ խաչին, նոյն երկրպագութիւն Քրիստոսի խաչեցելոյն կու լինի ...» [12, էջ 13-14]:

Քննվող դասագրքերից կատելետիկ սկզբունքով են գրվել քրիստոնէական հավատի գլխավոր սկզբունքներ բովանդակող ձեռնարկները՝ Աբել Մխիթարյանի, Գաբրիել Այվազյանի, Սարգիս Գնունու հեղինակությամբ: Այս ձեռնարկներում բովանդակությունը վերաբերում է Սուրբ երրորդությանը, աստվածային ու մարդկային բնություններին, հավատո հանգանակին, տերունական աղոթքին, տասնաբանյա պատվիրաններին, առաքինություններին ու մեղքերին, եկեղեցական խորհուրդներին, Հին ու Նոր կտակարանների ուսումնադաստիարակչական պատմություններին:

Ձեռնարկների սկզբում հեղինակներն անդրադարձել են այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ «Ո՞վ է Մարդը», «Ո՞րն է նրա նպատակը», «Աստված ի՞նչ է», «Ի՞նչ է քրիստոնէական հավատը», «Ո՞րն է քրիստոնյաների Սուրբ գիրքը, քանի՞ մասից է բաղկացած», «Միայն մե՞կ Աստված կա», «Որո՞նք են Հոր, Որդու եւ Սուրբ հոգու տարբերությունները», «Արարածների մեջ կատարյալը ո՞վ է», «Քանի՞ օրում է ստեղծվել աշխարհը» և այլն: Հաջորդ բաժնում ներկայացված են արարչագործությունն ու դրան հաջորդող իրադարձությունները՝ «Ինչպե՞ս է ստեղծվել մարդը», «Ինչպե՞ս են մեղանչել Ադամն ու Եվան», «Ի՞նչ պատիժ են ստացել», «Ինչո՞ւ տեղի ունեցավ ջրհեղեղ» եւ այլն:

Երրորդ բաժինը նվիրված է հավատո հանգանակին: Հարց. «Այլ եւ այլ Եկեղեցեաց մեջ գործածուած հավատամքներու գլխավորներն որո՞նք են»: Պատասխան. «Այս չորսն են. Ա. Հանգանակ Առաքելոց, Բ. Հանգանակ Ժողովոյն Նիկիոյ, Գ. Հանգանակ Ժողովոյն Կոստանդնուպոլսի, Դ. Հանգանակ Հայաստանեայց Եկեղեցոյ» [2, էջ 58]:

Դասագրքերում ուշադրության է արժանի մեկնությունների հարցը: *Հարց ու պատասխան* տարբերակը, շարադրանքի ձև հանդիսանալուց բացի, ներկայանում է մեկնության ձև նույնպես: Հանդես գալով որպես մեկնության եղանակ՝ հարց ու պատասխանը հեշտացնում էր ուսումնական նյութի ընկալումը [14, էջ 139-140]: Մեկնությունների այս եղանակը փաստում է, որ սովորողը պետք է իմանար և՛ վարդապետությունը, և՛ ուսումնասիրվող նյութի իմաստը:

Ձեռնարկների մյուս գլուխներում ներկայացված են տերունական աղոթքը՝ բացատրություններով, ինչպես նաև՝ քրիստոնէական բարոյագիտությանն առնչվող հարցեր, այսպես. «Որո՞նք են առաքինությունները», «Ի՞նչ է քրիստոնէական խոհեմությունը», «Որո՞նք են բարոյական առաքինությունները», «Ընդդեմ հույսի մեղանչողները որո՞նք են»:

Ընդունված ավանդույթի համաձայն՝ քրիստոնէական վարդապետության ձեռնարկներում ներկայացված են սուրբգրային վկայություններ, նշանավոր եկեղեցական գործիչների երկերից մեջբերումներ, ինչպես. «Ո՞ւր կգտնեմք Քրիստոսական Հաւատոյ ճշմարտութիւնը», «Աստվածաշունչ սուրբ գրոց մեջ, որ է Հին եւ Նոր Կտակարանը»: Խոսքերի հեղինակը վկայությունների բաժնում մեջբերել է Հովհաննէսի ավետարանի համարժեք համարը. «Քննեցէք զգիրս ... նոքին իսկ են որք վկայեն վասն իմ» [13, էջ 21]:

Վկայությունների ներկայացման այլ օրինակ է, երբ ձեռնարկի վերջում զուգահեռ ներկայացվում են Հին ու Նոր կտակարանների վկայությունները, այն, ինչ նախագուշակվել էր Հին կտակարանում, իսկ Նոր կտակարանում կատարված եղելությունը: Հեղինակի կարծիքով սրա նպատակը քարոզչության եւ ուսուցչության գործը թեթևացնելն էր [15, էջ 237]:

Երկրորդ սկզբունքը, որը հեղինակները կիրառել են կրոնական ձեռնարկներում, համառոտ կամ ընդարձակ տեքստերն են: Այս ձևին դիմել են Մեսրոպ Փափազյանը, Ստեփանոս Մանդինյանը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մեսրոպ Փափազյանի հեղինակած «Մանկավարժ վերձանութեան» խորագրով ուսումնական դասագիրքը: Այն նախատեսված է որպես ընթերցարան փոքր տարիքի աշակերտների համար: Տեքստերը աշխարհիկ և կրոնական ուղղվածություն ունեն: Գրքի սկզբում հեղինակը ներկայացրել է կրոնաբարոյական համառոտ պատմություններ, հաջորդիվ՝ թվաբանության, աշխարհագրության վերաբերյալ տեղեկություններ, ապա՝ Հին և Նոր կտակարանների բարոյախրատական պատմություններ, ազգային պատմություն: Գրքի վերջին գլխում կցված են հայկական անձնանուններով հանելուկներ, ինչպես, օրինակ. «Արի եւ քաջ իւր հօր նման, և բարեսիրտ առաքինի, Եղբարքը թողուց ի Հարք գաւառ, ինքն յԱրարատ գայ բնակի» [16, էջ 183-184]:

Ուշադրության են արժանի դասագրքի կրոնաբարոյական տեքստերը, որոնք համապատասխանում են երեխայի տարիքային առանձնահատկություններին: Տեքստերը գրված են առաջին դեմքով. «Ես հաւատով քրիստոնէայ եմ, կրօնքով՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ հարազատ գաւակ, իսկ ազգաւ՝ Հայ եմ և Հայկայ սերունդ: Քրիստոնէական արտաքին նշանը՝ սուրբ խաչն է, իսկ ներքին նշանը՝ ընկերասիրութիւն. և կարող եմ խաչակնքել այսպէս յանուն Հօր և Որդոյ, և Հոգւոյն սրբոյ, ամէն» [16, էջ 1]:

Հեղինակն անդրադարձել ծնողներին, ուսուցիչներին, քահանաներին հարգելու, մեծարելու կարևորությանը. «Մեր ծնողներին, ուսուցիչներին, քահանաներին, երախտավորներին՝ պէտք է յարգութիւն տանք, և պատուենք. մեր ազգին էլ օգնենք՝ թէ խօսքով, և թէ՛ գործքով. և մեր անձը կրթենք գործքերով, և ամեն բանի մեջ չափավորութիւն ունենանք» [16, էջ 9-10]:

Հին կտակարանից ընդգրկված են արարչագործությունն ու դրան հաջորդող դեպքերը, ինչպես՝ մարդու արարում, մեղանչել, պատիժ, ջրհեղեղ, Աբրահամն ու նրա սերունդը, Մովսէս, դատավորների պատմություն, Սողոմոն Բմաստուն, Նոր կտակարանից՝ Նովիաննես Մկրտչի գործունեությունը, Հիսուս Քրիստոսի ծնունդը, մոզերի երկրպագությունը, Հիսուս Քրիստոսի մկրտությունը, աշակերտների ընտրությունը, գանազան հրաշքներ, չարչարանքներ, եկեղեցական տոներ [10]:

Այն դասագրքերում, որոնցում ամփոփված են Հին և Նոր կտակարանների բարոյախրատական պատմությունները, հեղինակները դիմել են համառոտ կամ ընդարձակ տեքստերին: Հեղինակները Սուրբ գրքից ընտրել են այնպիսի տեքստեր, որոնցում արտացոլված են քրիստոնէական կենցաղը, մարդ և Աստված հարաբերությունները, հավատքի դերն ու նշանակությունը, ինչպես նաև ծնող ու երեխա հարաբերություններ, տասնաբանյա պատվիրաններ, առաքինություններ ու մեղքեր:

Վերոնշյալ դրսևորումները ներկայացված են Հին կտակարանի՝ «Նախապատմական», «Նահապետների», «Դատավորների», «Թագավորների» դարաշրջանները բովանդակող տեքստերում, իսկ Նոր կտակարանում՝ Հիսուս Քրիստոսի կյանքն ու գործունեությունը:

Նման պատմությունների ուսումնասիրության շնորհիվ մարդը փոքր տարիքից սովորում է կառուցել իր հարաբերությունները, կազմակերպել իր կյանքը քրիստոնէական արժեհամակարգով:



Այսպիսով՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի գլխավորությամբ կազմակերպվել է կրոնի ընդհանուր դասագրքեր մշակելու գործընթաց: Տարբեր հեղինակներ՝ աշխարհիկ, հոգևորական, կազմել են Քրիստոնեական վարդապետության, Հին ու Նոր կտակարանների, տարբեր կրոններին նվիրված դասագրքեր: Դասագրքերը գրվել են երկու ձևով՝ ա. կատեխետիկ, բ. համառոտ ու ընդարձակ տեքստեր: Կատեխետիկ ձևը բնորոշ է եղել քրիստոնեական վարդապետության վերաբերյալ դասագրքերին, իսկ տեքստերը՝ Հին ու Նոր կտակարանների բարոյախրատական պատմություններ պարունակող դասագրքերին: Կրոնի ուսումնական դասագրքերում ընդգրկվել են ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ բնույթի տեքստեր: Դասագրքերի հասցեատերերը ազգային դպրոցի աշակերտներն ու ուսուցիչներն են: Ուսումնական դասագրքերի բովանդակությունը փաստում է այն մասին, որ նման դասագրքերի շնորհիվ աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ քրիստոնյայի կենցաղավարության, դավանանքի, եկեղեցական տոների, բարոյագիտության, Հին ու Նոր կտակարանների վերաբերյալ:

Ներկա օրերում նման ուսումնական դասագրքերը կարող են ուղեցույց լինել նոր դասագրքեր ստեղծելու համար:

## THE ISSUE OF UNIFIED RELIGION TEXTBOOKS DURING THE ERA OF CATHOLICOS OF ALL ARMENIANS GEVORG IV

**Ghevondyan Mane**

*Yerevan State University, PhD student*

*“Classic school” educational foundation*

*manegevondyan@gmail.com*

### Summary

Over time, textbook standards have changed. If in the early period of creating a textbook, the authors had limitations due to printing problems, today the creators of textbooks have wide opportunities. Periodically, new concepts were introduced into the textbooks, the format of tasks checking the understanding of the text was changed, the pictures accompanying the texts were added or reduced, the language, terminology, methodology, visual approaches of the textbooks were updated.

Nowadays, before a textbook reaches its recipient, its "hygiene" is assessed. The latter is determined by mathematical formulas: to what extent textbook texts are scientific, educational, appropriate for the age of the addressee, in accordance with a number of color and didactic requirements [11, 150].

Educational manuals with religious content are of great interest in the history of Armenian textbooks. The texts summarized in them, the methodology, the structure, a number of didactic solutions testify to the fact that we have a tradition of textbooks that are an integral part of Christian literature. Such undertakings have come a long way in the Armenian educational environment. During the period under review, there were a number of problems in the Eastern Armenian educational system: the schools did not have common charters, curricula, the issue of the types of schools was unclear. One of the key issues of education was having common textbooks in schools.

In the second half of the 19th century, the educational policy of Catholicos of All Armenians Gevorg IV was aimed at solving the above-mentioned problems. Under the guidance of the Catholicos, the process of creating unified Christian textbooks begins.

Here, we have presented the educational policy of Catholicos of All Armenians Gevorg IV, the steps he took in the direction of creating religious textbooks. For the first time, reference is made to the tradition of religious textbooks, which are part of the rich Christian literature in the Armenian educational environment, and the methodological features of the texts presented in them.

Currently, the study of such manuals creates an opportunity to communicate the tradition of Christian textbooks created in the Armenian educational environment, to analyze the methodological features of educational manuals, to use them as a guide for creating such textbooks in the present day.

The analysis of educational manuals proves that under the leadership of the Catholicos of All Armenians, a process of coordinating religion textbooks was created. Various authors have undertaken to create Christian manuals for schools. Textbooks are divided into two groups: a. manuals teaching the principles of the Christian religion, published under the title "Christian Doctrine", b. Textbooks presenting the

moral stories of the Old and New Testaments, as well as the history of other religions. The authors of the manual were guided by two principles of the essay: catechetical (question and answer) and brief texts. Textbooks of Christian doctrine were written using the catechetical methodology, and other manuals were written using the methodology of brief texts.

**Keywords:** *Educational policy, Christian textbook tradition, Catholicos of All Armenians Gevorg IV, catechetical, brief texts.*

## ПРОБЛЕМА ЕДИНЫХ УЧЕБНИКОВ ПО РЕЛИГИИ ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГЕВОРГА IV

Гевондян Мане

*Ереванский государственный университет, аспирант,  
Образовательный фонд «Классическая школа»  
manegevondyan@gmail.com*

### Аннотация

Со временем стандарты учебников меняются. Если в ранний период разработки учебника авторы сталкивались с ограничениями из-за проблем с печатью, то сегодня перед создателями учебников открываются широкие возможности. Периодически в учебники вводились новые понятия, менялся формат заданий на проверку понимания текста, добавлялись или сокращались сопровождающие тексты картинки, обновлялся язык, терминология, методика, визуальные подходы учебников. В настоящее время, прежде чем учебник попадет к получателю, проводится оценка его «гигиеничности». Последнее определяется математическими формулами: насколько тексты учебников являются научными, учебными, соответствуют ли возрасту адресата, визуальными и дидактическими требованиями. [11, стр. 150]

В истории армянского учебника большой интерес представляют учебные пособия религиозного содержания. Обобщенные в них тексты, их методика, структура, ряд дидактических решений свидетельствуют о том, что мы имеем традицию учебников, являющихся неотъемлемой частью христианской литературы. Подобные начинания прошли долгий путь в армянской среде. В рассматриваемый нами период в образовательной системе Восточной Армении существовал ряд проблем: школы не имели общих уставов, учебных программ, остается нерешенным вопрос о типах школ. Одним из ключевых вопросов образования было наличие единых учебников в школах.

Во второй половине XIX в. просветительская политика Католикоса Всех Армян Геворга IV была направлена на решение вышеуказанных проблем. Под руководством Католикоса начинается процесс создания единых христианских учебников.

В данной статье мы представили образовательную политику Католикоса Всех Армян Геворга IV, шаги, которые он предпринял в направлении создания религиозных учебников. Впервые упоминается традиция создания религиозных учебников, являющихся частью богатой христианской литературы в армянской образовательной среде, и обозначены методологические особенности представленных в них текстов.

В настоящее время изучение подобных пособий дает возможность возобновить традицию христианских учебников в образовательной среде Армении, проанализировать методологические особенности учебных пособий того времени, использовать их в качестве руководства для создания рассматриваемого типа учебников в наши дни.

Анализ учебных пособий, изданных во второй половине XIX в., доказывает, что под руководством Католикоса Всех Армян проходил процесс согласования учебников по религии. Различные авторы взялись за создание пособий для христианских школ. Учебники делятся на две группы: а) пособия, обучающие принципам христианской религии, изданные под названием «Христианское учение», б) учебники, представляющие моральные истории Ветхого и Нового Заветов, а также истории образования других религий. Авторы пособия руководствовались двумя принципами архитектуры учебника: катехизическим (вопрос-ответ) и кратким текстом. Учебники по христианскому учению писались по катехизической методике, а другие пособия – по методике кратких текстов.

**Ключевые слова:** *образовательная политика, христианская традиция учебников, Католикос Всех Армян Геворг IV, катехизический, краткий текст.*

### Օգտագործված գրականության ցանկ

1. Աբելյան Մ., Գևորգ Դ Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Վաղարշապատ, Գ հրատարակություն, Վաղարշապատ, 2014:

2. Այվազեան Գաբրիել, Դասագիրք Քրիստոնեական վարդապետության ըստ ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ, Վաղարշապատ, 1875:
3. Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970, էջ 16:
4. Խորեն Ստեփանե, Կրոնի դասատուության առաջընթաց եւ համանուագ եղանակներ, «Մանկավարժանոց», Թիֆլիս, 1889, N 3:
5. Խորեն Ստեփանե, Կրոնի դասատվության համակենտրոնական սիստեմ, Մանկավարժանոց, 1884, N 7-8:
6. Կանոն յաղագս ծխական հոգևոր դպրոցացն Հայոց ի Ռուսաստան, «Արարատ», 1868, N 9:
7. Կանոնադրութիւնք յաղագս թեմական դպրոցաց Հայոց որ ի Ռուսաստան, «Արարատ», 1869, N 6:
8. Կանոնադրութիւն Վանական դպրոցաց, «Արարատ», 1869, N Ա:
9. Կանոնք Ծխական Դպրոցաց, Վաղարշապատ, 1876:
10. Մանդինյան Ստ., Սրբազան պատմութիւն Հին և Նոր Ուխտի, Վաղարշապատ, 1872:
11. Մանդինյան Ստ., Համառոտ պատմութիւն Նոր Ուխտի, Վաղարշապատ, 1870:
12. Մխիթար Սեբաստացի, Քրիստոնեական վարդապետութիւն, 1727:
13. Մխիթարեան Աբել, Դասագիրք Քրիստոնեական հաւատոյ, Վաղարշապատ, 1874:
14. Շիրինյան Մ. Է., Քրիստոնեական վարդապետության անտիկ եւ հելլենիստական տարրերը, Երևան, 2005:
15. Սարգիս Գնունի, Քրիստոնեական վարդապետութիւնն ըստ ուղղափառ դավանության Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցվոյ, Վաղարշապատ, 1879:
16. Փափազեան Մ., Մանկավարժ վերծանութեան, Վաղարշապատ, 1872:

*Получено: 31.03.2024*

*Received: 31.03.2014*

*Рассмотрено: 08.04.2024*

*Reviewed: 08.04.2024*

*Принято: 26.04.2024*

*Accepted: 26.04.2024*

Journal "Education in the 21st Century", Vol1-11/1/, 2024



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**«Կրթությունը 21-րդ դարում»**  
**գիտաևեթոդական միջազգային գրախոսվող հանդես**  
Թիվ 1(11), 2024  
Երևան

**«Образование в 21-ом веке»**  
**международный научно-методический рецензируемый журнал**  
Номер 1(11), 2024  
Ереван

**«Education in the 21<sup>st</sup> Century»**  
**International Scientific-Methodical Peer-Reviewed Journal**  
No 1(11), 2024  
Yerevan

*Հանդեսի շապիկին Մեսրոպ Մաշտոցի դիմանկարն է  
(հեղինակ՝ Ստեփանոս Ներսիսյան):*

*На обложке журнала изображен портрет Месропа Маштоца  
(Автор – Степанос Нерсисян).*

*On the cover of the journal is a portrait of Mesrop Mashtots  
(Author: Stepanos Nersisyan).*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի  
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի, Ա. Խիզանցյանի, Գ. Հարությունյանի

Ստորագրված է տպագրության՝ 06.06.2024:  
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 11,25:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.am](http://www.publishing.am)